

BLACKBERRY Լուծումների Օգտագործման
Լիցենզային Պայմանագիր

Խնդրում ենք ուշադիր կարդալ սույն փաստաթուղթը ծրագրաշարերը ներբեռնելուց կամ օգտագործելուց առաջ: Սույն պայմանագիրը պարունակում է դրույթներ, որոնք սահմանափակում կամ բացառում են RIM պատասխանատվությունը Ձեր առջև, կամ որոնք այլ կերպ ազդում են Ձեր իրավունքների ծավալի և իրականացման վրա: Սույն պայմանագրով Ձեզանից կարող է պահանջվել վեճերի լուծումը հանձնել արբիտրաժային դատարանների քննությանը՝ անհատական հայց ներկայացնելու միջոցով, ինչպիսի պարագայում Դուք կարող եք զրկված լինել կոլեկտիվ հայց ներկայացնելու կամ երդվյալ ատենակալների մասնակցությամբ Ձեր գործը լսելու հնարավորությունից: Նման պահանջի առկայությունը Ձեր պայմանագրում կախված կլինի այն հանգամանքից, թե որտեղ եք Դուք բնակվում, և թույլատրելի է արդյոք դա Ձեր բնակության երկրի օրենքների համաձայն: Սույն Պայմանագրով որևէ կերպ չեն սահմանափակվում/բացառվում Ձեր այն իրավունքները, որոնք Ձեզ են վերապահված Ձեր բնակության երկրի օրենքների համաձայն, և որոնք ենթակա չեն փոփոխման կողմերի համաձայնությամբ:

Սույն BlackBerry Լուծումների Օգտագործման Լիցենզային Պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») կնքված է Ressearch in Motion UK Limited-ի, գրանցման համարը՝ 4022422, իրավաբանական հասցեն՝ 200 Բաթ փող., Սլաֆ, Բերկշիր, Մեծ Բրիտանիա SL1 3XE (այսուհետ՝ «RIM»), և անձամբ Ձեր միջև, եթե Դուք կնքում եք Պայմանագիրը Ձեր անունից, իսկ եթե Դուք լիազորված եք Ծրագրաշարերը (սահմանումը բերված է ստորև) ձեռք բերել Ձեր ընկերության կամ մեկ այլ անձի անունից, ապա՝ RIM և այն անձի միջև, որի անունից Դուք գործում եք (երկու դեպքում էլ լիցենզառուին հղում կատարելու համար կօգտագործվեն «Դուք», «Ձեզ» և «Ձեր» բառերը): Կողմերից յուրաքանչյուրին հղումն այսուհետ տեքստում կլինի «Կողմ» իսկ միասին՝ «Կողմեր»: Առաջարկների (սահմանումը բերված է ստորև) պարագայում հղումը RIM-ին պետք է ընկալել և հասկանալ, որպես հղում Ressearch in Motion E-Commerce S.a.r.l-ին կամ RIM հետ փոխկապակցված այնպիսի այլ անձի, որին կպատկանեն Ձեր երկրում Առաջարկներ կատարելու իրավունքները, ինչի մասին տեղեկությունները կարող եք գտնել <http://www.blackberry.com/legal/rime> կայքում (այսուհետ՝ «RIME»): Եթե Դուք Ծրագրաշար րերն օգտագործում եք Սարքերի համակցությամբ Ձեր անձնական, ինչպես նաև Ձեր ընկերության կամ մեկ այլ անձի նպատակների համար, ապա «Դուք» ասելով Ծրագրաշարերի և RIM Ծառայությունների մի մասով պետք է հասկանալ անձամբ Ձեզ, իսկ մյուս մասով՝ այն անձին, որի անունից գործում եք Դուք (օրինակ՝ եթե Ընկերությունը, որտեղ Դուք աշխատում եք, լիազորել է Ձեզ կնքել սույն Պայմանագիրը BlackBerry Կորպորատիվ Սպասարկիչ Ծրագրաշարերի էլ. փոստից և անհատական տվյալների կառավարման BlackBerry ծրագրաշարերից օգտվելու նպատակով, բայց հրաժարվել է պատասխանատվություն ստանձնել Ձեր կողմից այլ ծրագրաշարերի և ծառայությունների (ինչպես օրինակ Windows Live Messenger client ծրագրաշարերի կամ RIME Store-ի) օգտագործման համար, ապա «Դուք» ասելով պետք է հասկանալ Ձեր ընկերությանը BlackBerry Կորպորատիվ Սպասարկիչ Ծրագրաշարերի էլ. փոստի և անհատական տվյալների կառավարման BlackBerry ծրագրաշարերի մասով և անձամբ Ձեզ Windows Live Messenger client ծրագրաշարերի և RIME Store-ի մասով): Ծրագրաշարերի լիցենզավորման և տարածման առնչությամբ RIM-ը հանդես է գալիս

որպես (ա) Research In Motion Limited-ի (այսուհետ՝ «RIM Canada») կամ վերջինիս դուստր ընկերությունների կամ վերջինիս հետ փոխկապակցված այլ անձանց (այսուհետ հղումը տեքստում այդ դուստր և փոխկապակցված ընկերություններին և RIM Canada-ին կլինի «RIM Ընկերությունների Խումբ»), կամ (բ) RIM Ընկերությունների Խմբի, այդ թվում նաև RIM-ի հետ կնքված լիցենզային պայմանագրերով լիցենզատու հանդիսացող երրորդ անձ ուղղակի կամ անուղղակի լիցենզառուն:

Սեղմելով համապատասխան կոճակը ստորև կամ ներբեռնելով, տեղադրելով, ակտիվացնելով Ծրագրաշարերը կամ օգտվելով դրանցից՝ Դու ք բնաձայնում եք հետևել սույն Պայմանագրի դրույթներին: Եթե ունեք հարցեր սույն Պայմանագրի դրույթների հետ կապված, ապա խնդրում եք կապվել RIM հետ հետևյալ հասցեով. LEGALINFO@RIM.COM:

Սույն Պայմանագիրը փոխարինում է BlackBerry Վերջնական Օգտագործողների/Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին, BlackBerry Կորպորատիվ Սպասարկիչ Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին, BlackBerry Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին, BlackBerry Լուծումների Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին և գերակայում է դրանց նկատմամբ, եթե դրանք սույն Պայմանագրի դրույթները Ձեր կողմից ընդունելու օրվա դրությամբ դեռ կիրառելի են Ձեր՝ BlackBerry Լուծումների բաղադրիչ մաս հանդիսացող այս կամ այն ծրագրաշարերի օգտագործման նկատմամբ (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Պայմանագրերի Միավորումը» (հոդված 30)):

Ծրագրաշարերը և Ապրանքները Վերադարձնելու Ընթացակարգը.

Եթե դեռ չեք ներբեռնել, տեղադրել, ակտիվացնել Ծրագրաշարերը և/կամ եթե դեռ չեք օգտվել դրանից և գտնում եք, որ սույն Պայմանագրի դրույթներն անընդունելի են Ձեզ համար, ապա մի՛ օգտագործեք Ծրագրաշարերը, քանի որ դրա իրավունքը Դուք այլևս չունեք և (ա) անհապաղ վերադարձնեք Ծրագրաշարերը RIM-ին, ջնջեք կամ ապակտիվացնեք դրանք, (բ) եթե Դուք ձեռք եք բերել RIM Ապրանքները, որոնց մեջ Ծրագրաշարերը նախապես տեղադրված են եղել RIM կողմից կամ վերջինիս պատվերով, ապա անհապաղ վերադարձնեք RIM Ապրանքները և դրանց հետ տրամադրվող Ծրագրաշարերն ու առարկաները (ներառյալ Փաստաթղթերը և Փաթեթվածքը) RIM-ին կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչին, որից ձեռք եք բերել RIM Ապրանքները և դրանց հետ տրամադրվող Ծրագրաշարերն ու առարկաները կամ (գ) եթե Դուք ձեռք եք բերել Երրորդ Անձանց Արտադրության Սարքեր, որոնց մեջ Ծրագրաշարերը նախապես տեղադրված են եղել RIM կողմից կամ վերջինիս համաձայնությամբ, ապա ապահովեք, որպեսզի Ծրագրաշարերն անհապաղ ապակտիվացվեն RIM կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչի կողմից, որից ձեռք եք բերել Երրորդ Անձանց Արտադրության Սարքը և դրա հետ տրամադրվող Ծրագրաշարերն ու առարկաները: Իսկ եթե Դուք վճարել եք Ծրագրաշարերի և/կամ RIM-ի Ապրանքների համար, որոնք Դուք ձեռք եք բերել այդ Ծրագրաշարերի հետ և որոնք Դուք այլևս չեք կարող օգտագործել առանց այդ Ծրագրաշարերի, և եթե Դուք Ծրագրաշարերը գնելուց հետո 30 (երեսուն) օրվա

ընթացքում Դուք RIM-ին կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչին, որից ձեռք էք բերել RIM Ապրանքների համար նախատեսված Ծրագրաշարերը, ներկայացրել էք գնման փաստը հավաստող ապացույցներ, ապա RIM-ը կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցիչը Ձեզ կվերադարձնի ձեռք բերված ապրանքների համար Ձեր կողմից վճարված գումարները (եթե Դուք վճարել էք): Երրորդ Անձանց Արտադրության Սարքերում տեղադրված Ծրագրաշարերի (պետք է նկատի ունենալ, որ Երրորդ Անձանց Արտադրության որոշ Սարքերի մեջ Ծրագրաշարերը տրամադրվում են անվճար, և հետևաբար հնարավոր է, որ կարիք չլինի գումարը ետ վերադարձնել) համար վճարված գումարը վերադարձնելու նպատակով խնդրում ենք կապվել այդ սարքերի համար Ծրագրաշարերի մատակարարման գծով պաշտոնական ներկայացուցչի հետ: Եթե նշված իրավիճակներում չէք կարողանում պաշտոնական ներկայացուցիչներից ետ ստանալ Ծրագրաշարերի համար վճարված գումարը, ապա խնդրում ենք կապվել RIM հետ հետևյալ հասցեով. LEGALINFO@RIM.COM:

1. Սահմանումներ. Եթե ենթատեքստից այլ բան չի բխում, ապա հետևյալ եզրույթներն ունեն ստորև ներկայացված իմաստները (և եթե ենթատեքստից հասկանալի է, որ եզակի թիվը ներառում է հոգնակին և հակառակը, ապա բառերը պետք է կարդալ և մեկնաբանել այդ կանոնի համաձայն):

«Անլար Ծառայություններ» նշանակում է Ձեր BlackBerry Լուծումների գույքակցությամբ օգտագործելու համար Ձեզ Անլար Ծառայություններ Մատուցող Անձի կողմից մատուցվող լայնամասշտաբ անլար ցանցային ծառայություններ (ներառյալ անլար լոկալ ցանցային, արբանյակային և ինտերնետային ծառայությունները) և այլ ծառայություններ:

«Անլար Ծառայություններ Մատուցող Անձ» նշանակում է ցանկացած անձ, ով մատուցում է Անլար Ծառայություններ:

«Արտոնված Օգտագործողներ» նշանակում է հետևյալ անձանցից յուրաքանչյուրը, որոնց Դուք թույլ էք տալիս օգտվել Ծրագրաշարերից Ձեր BlackBerry Լուծումներից օգտվելու կապակցությամբ. (ա) Ձեր աշխատողները, խորհրդատուները կամ Ձեր հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անկախ անձիք, (բ) ընկերները կամ ընտանիքի անդամները կամ ցանկացած այլ անձ, ով բնակվում է Ձեզ պատկանող կացարանում և (գ) ցանկացած այլ անձիք, որոնք համապատասխան գրավոր թույլտվություն են ստանում RIM կողմից: Սույն Պայմանագրով Ձեզ իրավունք չի վերապահվում տեղադրել Ձեր BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարերը երրորդ անձանց պատկանող սարքերում: Եթե Դուք նման մտադրություն ունեք, ապա խնդրում ենք կապվել RIM հետ հետևյալ հասցեով. LEGALINFO@RIM.COM:

«BlackBerry Սարք» նշանակում է RIM կողմից կամ վերջինիս պատվերով արտադրված ցանկացած սարք, ներառյալ ցանկացած սմարթֆոն, սմարթ քարտ ընթերցիչ (smart card reader), պլանշետ, BlackBerry Presenter և http://www.Blackberry.com/legal /blackberrydevice_for_bbsla կայքում RIM կողմից նրպես այդպիսին մատնանշված ցանկացած այլ սարք:

«BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարեր» նշանակում է բացառիկ իրավունքներով RIM-ին պատկանող ծրագրաշարեր (բաղկացած բացառիկ իրավունքներով RIM-ին պատկանող ծրագրաշարերից, ներկառուցված ծրագրաշարերից (firmware), միջերեսներից (interfaces), Պարունակություններից, անկախ այն հանգամանքից, թե տեխնիկապես դրանք համարվում են ծրագրաշարերի այլազրեր (software code), թե՛ ոչ, և Երրորդ Անձանց Արտադրության Բաղադրամասերից) կամ դրանց այս կամ այն մասը, որոնք նախատեսված են Սարքերի հետ օգտագործման համար և որոնք (ա) RIM կողմից առաքվելիս արդեն ներբեռնված են եղել Սարքերի մեջ կամ (բ) Ձեր Սարքի հետ օգտագործման նպատակով ժամանակ առ ժամանակ հաղորդվում, տրամադրվում կամ այլ կերպ Ձեզ հասանելի են դարձվում անմիջապես RIM կողմից կամ վերջինիս անունից կամ RIME Store ծառայության միջոցով: BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերից են RIM օպերացիոն համակարգի ծրագրաշարերը, BlackBerry Սարքերի մեջ ներկառուցված կամ RIME Store ծառայության միջոցով հասանելի դարձված բացառիկ իրավունքներով RIM-ին պատկանող ծրագրերը, ինչպես նաև Երրորդ Անձանց Արտադրության Սարքերի հետ օգտագործման նպատակով ժամանակ առ ժամանակ RIM կողմից կամ վերջինիս անունից հաղորդվող, տրամադրվող կամ այլ կերպ հասանելի դարձվող բացառիկ իրավունքներով RIM-ին պատկանող ցանկացած այլ ծրագրաշարեր:

«BlackBerry Վճարումային Ծառայություններ» նշանակում է բացառիկ իրավունքներով RIM-ին պատկանող վճարումների համակարգը, որի միջոցով իրականացվում են RIME Store ծառայության միջոցով ձեռք բերված In-App և այլ ապրանքների ու ծառայությունների համար վճարումները:

«BlackBerry ԱՀ Ծրագրաշարեր» նշանակում է BlackBerry Լուծումների շրջանակներում մեկ վերջնական օգտագործողի կողմից ցանկացած ժամանակ անհատական համակարգչով օգտագործելու և մատչելու համար նախատեսված և բացառիկ իրավունքներով RIM-ին պատկանող ծրագրաշարեր (բաղկացած բացառիկ իրավունքներով RIM-ին պատկանող ծրագրաշարերից, միջերեսներից (interfaces), Պարունակություններից և այլ տվյալներից, անկախ այն հանգամանքից, թե դրանք տեխնիկապես համարվում են ծրագրաշարերի այլազրեր (software code), թե՛ ոչ, և Երրորդ Անձանց Արտադրության Բաղադրամասերից) կամ դրանց այս կամ այն մասը: BlackBerry ԱՀ Ծրագրաշարերից են «BlackBerry Աշխատանքային Էկրանի Ծրագրաշարերը», որոնք կարելի է օգտագործել Ձեր Սարքի և անհատական համակարգչի միջև համաժամում (synchronization) իրականացնելու նպատակով, և որոնք ընձեռում են աշխատանքային էկրանի կառավարման մի շարք այլ ֆունկցիոնալ հնարավորություններ:

«BlackBerry Պրոֆեսիոնալ Օգտագործողների Համար Նախատեսված Ծառայություններ» նշանակում է RIM կողմից մշակված և առաջարկվող ծառայություններ, որոնք նպատակ են հետապնդում RIM հաճախորդներին տրամադրել բացառիկ իրավունքներով RIM-ին պատկանող Սպասարկչի Ծրագրաշարերի որոշ ֆունկցիոնալ հնարավորություններ՝ առանց նրանցից պահանջելով ձեռք բերել Սպասարկչի Ծրագրաշարերը: BlackBerry Պրոֆեսիոնալ Օգտագործողների Համար Նախատեսված Ծառայություններից են BlackBerry

Ինտերնետային Ծառայությունները: BlackBerry Ինտերնետային Ծառայությունները հնարավորություն են տալիս (ա) Ձեր Սարքի մեջ միավորել ինտերնետային ծառայություններ մատուցող տարբեր անձանց կամ երրորդ անձանց մոտ Ձեր ունեցած էլ.փոստի հաշվեհամարները մեկ հպամաբ դրանք մատչելու և օգտագործելու համար, (բ) Ձեր Սարքում ստեղծել էլ.փոստի հաշվեհամար Սարքով օգտագործելու նպատակով և (գ) մատչել որոշ ինտերնետային պարունակություններ, օգտվել որոշ ինտերնետային ծառայություններից: BlackBerry Պրոֆեսիոնալ Օգտագործողների Համար Նախատեսված Ծառայությունները կամ դրանց մի մասը հնարավոր է, որ հասանելի չլինեն Ձեզ Անլար Ծառայություններ Մատուցող Անձանց ցանցում: Այս կամ այն ծառայության հասանելիության վերաբերյալ խորհուրդ ենք տալիս խոսել Ձեզ Անլար Ծառայություններ Մատուցող Անձանց հետ:

«BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարեր» նշանակում է բացառիկ իրավունքով RIM-ին պատկանող սպասարկչի ծրագրաշարերը (բաղկացած բացառիկ իրավունքով RIM-ին պատկանող ծրագրաշարերից, միջերեսներից, Պարունակություններից և այլ տվյալներից, անկախ այն հանգամանքից, թե դրանք տեխնիկապես համարվում են ծրագրաշարերի այլագրեր (software code), թե՛ ոչ, ներառյալ, սակայն ոչ միայն, SRP ID-ին, SRP նույնացման բանալին և ցանկացած այլ նույնացուցիչներ, որոնք կարող են RIM կողմից Ձեզ տրամադրվել սպասարկչի ծրագրաշարերի օրինակների հետ օգտագործման նպատակով, և Երրորդ Անձանց Արտադրության Բաղադրամասերից) կամ դրանց այս կամ այն մասը, որոնց մեկ օրինակը նախատեսված է համակարգչում տեղադրվելու համար և միաժամանակ կարող է մատչվել բազմաթիվ Սարքերի և/կամ անհատական համակարգիչների միջոցով: BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարերից են BlackBerry Կորպորատիվ Սպասարկչի Ծրագրաշարերը, որոնք նախատեսված են միավորել և կապ (link) ստեղծել տարբեր կորպորատիվ ծրագրաշարային սպասարկիչների (application servers) (ինչպես օրինակ՝ էլ.փոստի սպասարկիչներ), BlackBerry Կորպորատիվ Սպասարկչի Ծրագրաշարերի հետ օգտագործման համար նախատեսված Սարքերի ու BlackBerry Mobile Voice համակարգի միջև, որը նախատեսված է Սարքերի միջոցով հասանելի դարձնել գրասենյակային հեռախոսների որոշ ֆունկցիոնալ հնարավորություններ:

«BlackBerry Լուծումներ» նշանակում է Ծրագրաշարերը՝ հետևյալից առնվազն մեկի համադրությամբ. RIM Ապրանքների, BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարերի, BlackBerry Սարքերի Ծրագրաշարերի, BlackBerry ԱՀ Ծրագրաշարերի և/կամ RIM Ծառայություն(ներ)ի՝ իրենց համապատասխան Փաստաթղթերի հետ մեկտեղ:

«Պարունակություն» նշանակում է ցանկացած տվյալ, տեքստ, երաժշտություն, հեռախոսագանգի մեղեդի, լուսանկար, գրաֆիկա, տեսանյութ, հաղորդագրություն, թեզ և ցանկացած այլ թվային նյութ կամ տեղեկություն:

«Փաստաթղթեր» նշանակում է Ծրագրաշարերի, RIM Ապրանքների կամ Ծառայությունների այս կամ այն տեսակի կամ տարբերակի համար RIM կողմից պատրաստված և տրամադրված շահագործման ուղեցույցները և վերջնական օգտագործողների համար նախատեսված ստանդարտ փաստաթղթերը ներառյալ տարաբնույթ ձեռնարկները, էթիկայի, օգտագործման և անվտանգության կանոնները: Վերջնական օգտագործողների և կառավարիչների համար նախատեսված

փաստաթղթերը կարելի է գտնել նաև <http://docs.blackberry.com> կայքում կամ կապվելով RIM հետ հետևյալ հասցեով. legalinfo@rim.com: Փաստաթղթեր սահմանումը չի ներառում շահագործման այն ուղեցույցները, վերջնական օգտագործողի համար նախատեսված այն փաստաթղթերը, ինչպես նաև փաստաթղթերի այն փոփոխությունները, որոնք RIM կողմից չեն պատրաստվել ու կատարվել:

«Սարք» նշանակում է (ա) BlackBerry Սարք կամ (բ) Երրորդ Անձանց Արտադրության Սարք:

«In-App Ապրանքներ» նշանակում է թվային ապրանքներ և ծառայություններ, որոնք Ձեզ են վաճառվում RIME Store ծառայության միջոցով Ծրագրաշարերի և/կամ Երրորդ Անձանց Արտադրության Ծրագրաշարերի օրինակների տեսքով, և որոնց համար վճարումները կատարվում են BlackBerry Վճարումային Ծառայությունների միջոցով:

«Kiosk» նշանակում է RIME Store ծառայության առանձին բաժին:

«Վաճառքի Համար Պատասխանատու Անձիք» նշանակում է առուվաճառքի կատարման պահին գնումներն ու վաճառքներն իրականացնելու համար պատասխանատու անձիք, որոնք կարող են տարբեր լինել կախված վճարումը կատարելու եղանակից, երկրից և այն հանգամանքից, թե որ Kiosk-ից են կատարվում գնումները:

«My World» նշանակում է արխիվային համակարգ, որը հնարավորություն է տալիս Ձեր Սարքից ջնջել և այնուհետև նորից Ձեր Սարքում տեղադրել RIME Store ծառայության միջոցով գնված որոշ Ծրագրաշարեր և Երրորդ Անձանց Արտադրության որոշ Ապրանքներ:

«Առաջարկներ» նշանակում է In-App Ապրանքները և RIME Store ծառայության միջոցով հասանելի դարձված այլ ծառայություններ և ապրանքներ ներառյալ RIM Ապրանքները, Ծրագրաշարերը, RIM Ծառայությունները, Երրորդ Անձանց Արտադրության Ապրանքներն ու Երրորդ Անձանց Ծառայությունները:

«Առաջարկներ Կատարող Անձիք» նշանակում է RIME Store ծառայության միջոցով տարածման նպատակով Առաջարկներ ներկայացնող անձիք:

«RIM Վճարովի Ծառայություններ» նշանակում է RIM այն Ծառայությունները, որոնք ստանալու համար Դուք կամ Ձեր Արտոնված Օգտագործողները պետք է գրանցվեք և վճարեք սահմանված վճար:

«RIM Հարակից Սարքեր» նշանակում է RIM Ապրանքների զուգակցությամբ օգտագործման համար նախատեսված RIM ապրանքային նշանով մակնշված օժանդակ սարքեր կամ այլ ապրանքներ ներառյալ, սակայն ոչ միայն, միկրո SD քարտերը, հիշողության ընդլայնման սարքերը, ականջակալները:

«RIM Ապրանքներ» նշանակում է ցանկացած BlackBerry Սարք և RIM Հարակից Սարք՝ առանց Ծրագրաշարերի:

«RIM Ծառայություններ» նշանակում է որպես այդպիսին մատնանշված ցանկացած ծառայություն, որը Ձեզ հասանելի է դարձվում RIM կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց կողմից կամ վերջիններիս համաձայնությամբ, ներառյալ ցանկացած այլ ծառայություններ, որոնք որպես այդպիսին մատնանշված են <http://www.blackberry.com/legal/rimservices> կայքում: Պետք է նկատի ունենալ, որ Երրորդ Անձանց Ծառայություններ կարող են մատուցվել և տրամադրվել RIM ապրանքային նշանի համադրմամբ, ինչպիսի պարագայում այդ ծառայությունները չեն կարող համարվել RIM Ծառայություններ:

«RIME Store» նշանակում է RIME-ին կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց բացառիկ իրավունքներով պատկանող թվային խանութ-սրահը, որի միջոցով Առաջարկ Կատարող Անձիք վերջնական օգտագործողներին են ներկայացնում իրենց Առաջարկները: «RIME Store» սահմանումը չի ներառում BlackBerry Enterprise Store-ը, ինչպես նաև www.shopblackberry.com կայքի միջոցով Global Solutions Inc.-ի կողմից շահագործվող թվային խանութ-սրահը:

«RIME Store Առաջարկներ» նշանակում է RIME Store ծառայության միջոցով ներկայացվող Առաջարկները:

«Ծառայություն Մատուցող Անձիք» ունի այն նշանակությունը, որ տրված է 9 (ե) կետում:

«Ծրագրաշարեր» նշանակում է սույն Պայմանագրի համաձայն ցանկացած կերպ, ցանկացած տեսքով, ցանկացած կրիչով Ձեզ տրամադրված կամ հետագայում Ձեր կողմից տեղադրված կամ օգտագործված BlackBerry Սարքերի Ծրագրաշարերը, BlackBerry ԱՀ Ծրագրաշարերը կամ BlackBerry Սպասարչի Ծրագրաշարերը: «Ծրագրաշարեր» սահմանումը չի ներառում Երրորդ Անձանց Արտադրության Ծրագրաշարերը և Երրորդ Անձանց Արտադրության Ապրանքները, անկախ այն հանգամանքից, թե դրանք տրամադրվել են RIM կողմից (վերջինիս համաձայնությամբ), թե՛ ոչ, և անկախ այն հանգամանքից, թե դրանք տրամադրվել են RIME Store ծառայության միջոցով, թե՛ ոչ: «Ծրագրաշարեր» սահմանումը չի ներառում նաև Երրորդ Անձանց Արտադրության Ծրագրաշարերը և Երրորդ Անձանց Արտադրության Ապրանքները, եթե նույնիսկ դրանք տրամադրվել են Ծրագրաշարերի, Ձեր BlackBerry Լուծումների այս կամ այն մասերի կամ BlackBerry Սարքի հետ միասին, նախատեսված են դրանց հետ զուգակցությամբ օգտագործման համար և եթե նույնիսկ վճարումը դրանց համար կատարվել է BlackBerry Վճարումային Ծառայությունների միջոցով:

«Երրորդ Անձանց Արտադրության Բաղադրամասեր» նշանակում է RIM արտադրության ծրագրաշարերի մեջ, իսկ RIM արտադրության սարքաշարերի (hardware) դեպքում նաև դրանց մեջ նախապես ներկառուցված ծրագրաշարերի մեջ, կիրառված երրորդ անձանց արտադրության ծրագրաշարեր կամ միջերեսներ, որոնք օգտագործելու համար RIM լիցենզային պայմանագրեր է կնքել համապատասխան

իրավատերերի հետ: Երրորդ Անձանց Արտա դրության Բաղադրամասերը տրամադրվում են RIM Ապրանքների հետ, որպես բաղկացուցիչ մասեր և մակնշված են RIM ապրանքային նշանով: Այս սահմանումը չի ներառում Երրորդ Անձանց Արտադրության Ծրագրաշարերը:

«Երրորդ Անձանց Պատկանող Պարունակություններ» նշանակում է բացառիկ իրավունքով երրորդ անձանց պատկանող Պարունակություններ:

«Երրորդ Անձանց Արտադրության Սարքեր» նշանակում է BlackBerry Սարքերից բացի ցանկացած այլ սարք, այդ թվում նաև ցանկացած շարժական սարք, ինչպես օրինակ՝ սմարթֆոններ կամ պլանշետներ, որոնց հետ կարող են աշխատել BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերը կամ դրանց այս կամ այն մասերը, ինչի համար առկա է RIM թույլտվությունը (ներառյալ, այն դեպքում երբ BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերը նախատեսված են RIM ենթակառուցվածքին միանալու համար և երբ RIM պայամանգիր է կնքում Ձեզ Անլար Ծառայություններ Մատուցող Անձանց հետ՝ թույլատրելով միանալ RIM ենթակառուցվածքին երրորդ անձանց ստրադրության սարքերի միջոցով):

«Երրորդ Անձանց Ապրանքներ» նշանակում է Երրորդ Անձանց Պատկանող Պարունակություններ և Երրորդ Անձանց Արտադրանքներ:

«Երրորդ Անձանց Արտադրության Սարքաշարեր» նշանակում է Սարքեր, համակարգիչներ, սարքավորումներ, հարակից սարքեր և ցանկացած այլ սարքաշարեր, որոնք RIM Ապրանքներ սահմանման մեջ ներառված չեն:

«Երրորդ Անձանց Արտադրանքներ» նշանակում է Երրորդ Անձանց Արտադրության Սարքաշարեր, Երրորդ Անձանց Արտադրության Ծրագրաշարեր և վաճառքի համար նախատեսված այլ ապրանքներ, որոնք RIM Ապրանքներ սահմանման մեջ ներառված չեն:

«Երրորդ Անձանց Ծառայություններ» նշանակում է երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններ, ներառյալ Անլար Ծառայությունները, երրորդ անձ հանդիսացող Վաճառքի Համար Պատասխանատու Անձանց կամ վճարումային համակարգերի կողմից մատուցվող ծառայությունները, և ցանկացած կայք, որը RIM կողմից չի շահագործվում:

«Երրորդ Անձանց Արտադրության Ծրագրաշարեր» նշանակում է բացառիկ իրավունքով երրորդ անձանց պատկանող առանձին ծրագրեր, որոնք Ձեզ են տրամադրվում կամ այլապես Ձեզ հասանելի են դարձվում RIM Ապրանքների, Ծրագրաշարերի կամ RIM Ծառայությունների (ինչպես օրինակ՝ RIME Store ծառայության) միջոցով:

«Ձեր BlackBerry Լուծումներ» նշանակում է Ծրագրաշարերը և հետևյալից առնվազն մեկը, որոնք Դուք ստանում, տեղադրում, տրամադրում կամ այլ կերպ թույլատրում եք օգտագործել Ծրագրաշարի հետ միասին և պատասխանատվություն եք ստանձնում դրա համար. RIM Ապրանքները, BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարերը, BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերը,

BlackBerry ԱՀ Ծրագրաշարերը և/կամ RIM Ծառայություն(ներ)ը իրենց համապատասխան Փաստաթղթերի հետ միասին: Երրորդ Անձանց Ապրանքները և Երրորդ Անձանց Ծառայությունները Ձեր BlackBerry Լուծումների մաս չեն կազմում:

«Ձեզ Պատկանող Պարունակություններ» նշանակում է Ձեր կամ Ձեր կողմից Արտոնված Օգտագործողի կողմից RIM Ծառայությանը կամ Երրորդ Անձանց Ծառայությանը տրամադրված կամ այլ կերպ դրանց հասանելի դարձված Պարունակություններ:

2. Ծրագրաշարերի և Փաստաթղթերի Լիցենզիոն Օգտագործման Իրավունքները. Սույն Պայմանագրով Ձեզ Ծրագրաշարեր չեն վաճառվում, Ձեզ ընդամենը իրավունք է վերապահվում օգտագործել դրանք: Ծրագրաշարերն օգտագործելու Ձեր իրավունքն ամբողջովին կախված է լիցենզային վճարները, եթե այդպիսիք կան, վճարված լինելու հանգամանքից: Սույն Պայմանագրի համաձայն Ձեզ տրամադրվում է անձնական, հետկանչելի, ոչ բացառիկ, ոչ փոխանցելի լիցենզիա, որը Ձեզ և Ձեր Արտոնված Օգտագործողներին թույլ կտա.

(ա) BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարերի պարագայում

- (i) Տեղադրել և օգտագործել Ծրագրաշարերի այնքան քանակությամբ օրինակներ (ներառյալ վիրտուալ օրինակները), որոնց համար լիցենզային վճարներ են վճարվել RIM-ին կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչին (իսկ եթե Ծրագրաշարերի համար RIM-ին կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչին որևիցե գումար վճարման ենթակա չէ, ապա տեղադրել և օգտագործել Ծրագրաշարերի այնքան քանակությամբ օրինակներ, որքան գրավոր կերպով արտոնվել է RIM կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչի կողմից), և
- (ii) Մատչել Ծրագրաշարերն այնքան քանակությամբ (օրինակ՝ BlackBerry Enterprise Ծրագրաշարերի համար ձեռք բերված Մատչելու Լիցենզիաների քանակությամբ) Սարքերից և անհատական համակարգիչներից, որոնց համար վճարում է կատարվել RIM-ին կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչին (իսկ եթե RIM-ին կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչին Սարքերի կամ անհատական համակարգիչների միջոցով Ծրագրաշարերը մատչելու համար որևիցե գումար վճարման ենթակա չէ, ապա մատչել Ծրագրաշարերն այնքան քանակությամբ Սարքերի և անհատական համակարգիչների միջոցով, որքան գրավոր կերպով արտոնվել է RIM կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչի կողմից), իսկ

(բ) BlackBerry Սարքերի Հարմար Նախատեսված Ծրագրաշարերի կամ BlackBerry ԱՀ Ծրագրաշարերի դեպքում

- (i) Եթե Ծրագրաշարերը նախապես ներկառուցված են եղել սարքաշարերի մեջ, ապա տեղադրել և օգտագործել այդ Ծրագրաշարերի տվյալ օրինակը, կամ

- (ii) Եթե Ծրագրաշարերը նախապես ներկառուցված չեն եղել սարքաշարերի մեջ, ապա տեղադրել և օգտագործել Ծրագրաշարերը այքան քանակությամբ սարքաշարերի մեջ, որքան լիցենզային վճարներ են վճարել RIM-ին կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչին (իսկ եթե RIM-ին կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչին Ծրագրաշարերի համար որևիցե գումար վճարման ենթակա չէ, ապա տեղադրել և օգտագործել Ծրագրաշարերի այնքան քանակությամբ օրինակներ, որքան գրավոր կերպով արտոնվել է RIM կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչի կողմից):

Եթե Ծրագրաշարերը (և դրանց հետ կապված Մատչելու Լիցենզիաները) ձեռք էք բերել բաժանորդագրության կամ փորձնական օգտագործման հիմունքներով, ապա վերոհիշյալ լիցենզային իրավունքները գործում են համապատասխանաբար այն ժամանակահատվածի համար, որի համար վճարվել են բաժանորդագրական վճարները կամ որն արտոնվել է RIM կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչի կողմից:

Բոլոր դեպքերում սույն Պայմանագրով վերապահված իրավունքները թույլ են տալիս Ձեզ և Ձեր Արտոնված Օգտագործողին օգտագործել, ինչպես նաև արտոնել այլ անձանց օգտագործել Ծրագրաշարերը կամ մատչել RIM Ծառայությունները բացառապես Ձեր ներքին կամ անձնական կարիքների համար և բացառապես Ձեր BlackBerry Լուծումների շրջանակներում: Եթե Արտոնված Օգտագործողներից որևիցե մեկը ցանկանա օգտագործել BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերն այլ BlackBerry Լուծումների շրջանակներում (օրինակ՝ BlackBerry Լուծումներ, որոնք մասամբ բաղկացած են բացառիկ իրավունքով RIM-ին պատկանող այնպիսի ապրանքներից, ծրագրաշարերից կամ ծառայություններից, որոնք Դուք (կամ Ձեր անունից գործող մեկ այլ անձ), չէք ստացել, տեղադրել կամ տրամադրել, և Դուք պատրաստ եք արտոնել այլ անձանց օգտագործել Ծրագրաշարերը դրանց հետ, բայց առանց պատասխանատվություն ստանձնելու, այսուհետ՝ «Այլ BlackBerry Լուծումներ»), ապա պետք է նկատի ունենալ, որ այդ օգտագործումը սույն Պայմանագրով նախատեսված չէ, և Դուք պետք է պահանջեք, որպեսզի այդ Արտոնված Օգտագործողները RIM հետ կնքեն առանձին լիցենզային պայմանագրեր, որոնց համաձայն նրանց իրավունք կվերապահվի Ծրագրաշարերն օգտագործել Այլ BlackBerry Լուծումների շրջանակներում: Օրինակ՝ եթե Դուք կազմակերպություն եք, և Ձեր աշխատակիցը ցանկանում է օգտագործել BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերն իր անձնական BlackBerry Պրոֆեսիոնալ Օգտագործողների համար Նախատեսված Ծառայությունների կամ Windows Live Messenger client ծրագրաշարերի հետ միասին, և Դուք պատրաստ եք արտոնել նման օգտագործումն առանց դրա համար պատասխանատվություն ստանձնելու, ապա պետք է նկատի ունենաք, որ նման օգտագործումը սույն Պայմանագրով նախատեսված չէ, և Դուք դրա համար պատասխանատվություն չէք կրում, սակայն պայմանով, որ Դուք տեղեկացրել եք Ձեր Արտոնված Օգտագործողներին, որ նրանք պարտավոր են անձամբ կնքել սույն Պայմանագիրը, որպեսզի հնարավորություն ունենան Ծրագրաշարերն օգտագործել Այլ BlackBerry Լուծումների շրջանակներում: Նմանապես, եթե ունեք Պայմանագիր Հոսթինգային BlackBerry Կորպորատիվ Սպասարկիչը Մատչելու Վերաբերյալ, ապա Ձեր հաճախորդները պարտավոր են կնքել BlackBerry Լուծումների Լիցենզային

Օգտագործման Պայմանագիր, որպեսզի հնարավորություն ունենան BlackBerry Կորպորատիվ Սպասարկչի Ծրագրաշարերն օգտագործել իրենց BlackBerry Լուծումների շրջանակներում):

Թարմացումներ և արդիացումներ. Սույն Պայմանագիրը և դրանով վերապահված լիցենզիոն իրավունքները չեն ենթադրում որևիցե իրավունք (ա) Ծրագրաշարի կամ Երրորդ Անձանց Ծրագրաշարերի ապագա թարմացումների և արդիացումների նկատմամբ, (բ) Սարքերի մեջ տեղադրված BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի պարագայում մատչել ծրագրեր, որոնք ներառված չեն Ծրագրաշարերի մեջ կամ (գ) ձեռք բերել RIM նորագույն Ծառայությունները կամ RIM գոյություն ունեցող Ծառայությունների փոփոխված տարբերակները: Չնայած վերոհիշյալին Ծրագրաշարերը կարող են ունենալ Ծրագրաշարերի թարմացումները և արդիացումները ստուգելու ֆունկցիոնալ հնարավորություն: Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի, որպեսզի Դուք թարմացնեք Ծրագրաշարերը և Երրորդ Անձանց Ծրագրաշարերը, որպեսզի կարողանաք մատչել և օգտվել RIM Ծառայություններից, այլ նոր Ծրագրաշարերից, Երրորդ Անձանց Ապրանքներից, Երրորդ Անձանց Ծառայություններից կամ դրանց այս կամ այն մասից: Եթե Դուք կամ այն երրորդ անձը, ում հետ Դուք պայմանավորվածություն ունեք BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասը Ձեզ տրամադրելու վերաբերյալ, չկարգավորեք Ձեր BlackBerry Լուծումներն այնպես, որպեսզի արգելափակվեն Ծրագրաշարերի, Երրորդ Անձանց Ծրագրաշարերի կամ RIM Ծառայությունների՝ թարմացումներ և արդիացումներ ըդունելու կամ օգտագործելու հնարավորությունները, ապա Դուք սույնով համաձայնում եք, որ RIM կարող է (սակայն պարտավոր չէ) ժամանակ առ ժամանակ Ձեզ տրամադրել նման թարմացումներ և արդիացումներ: RIM կողմից սույն Պայմանագրի համաձայն Ձեզ տրամադրված թարմացումներն ու արդիացումները կհամարվեն համապատասխանաբար BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարեր, BlackBerry ԱՀ Ծրագրաշարեր, BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարեր, RIM Ծառայություններ կամ Երրորդ Անձանց Ծրագրաշարեր:

Բետա Ապրանքներ. Եթե Ծրագրաշարերը կամ դրանց միջոցով մատչվող Ծառայությունները մականշված են, որպես նախակումերցիոն, փորձնական, ալֆա կամ բետա տարբերակներ (այսուհետ՝ «Բետա Ծրագրաշարեր» կամ «Բետա Ծառայություններ»), ապա Բետա Ծրագրաշարերն օգտագործելու և Բետա Ծառայությունները մատչելու Ձեզ սույն Պայմանագրով վերապահված լիցենզիոն իրավունքները վավեր են RIM կողմից արտոնված ժամանակահատվածում (այսուհետ՝ «Փորձնական Ժամկետ») և միայն այնքանով, որքան հարկավոր է Ձեր կամ Ձեր Արտոնված Օգտագործողների (եթե Դուք ֆիզիկական անձ եք, ապա Բետա Ծրագրաշարերի և Բետա Ծառայությունների մասով Արտոնված Օգտագործողներ չեն կարող լինել) կողմից դրանք և Բետա Ծրագրաշարերի հետ օգտագործման համար նախատեսված RIM Ապրանքները (այսուհետ՝ «Բետա Սարքաշարեր», իսկ Բետա Ծրագրաշարերի և Բետա Ծառայությունների հետ մեկտեղ՝ «Բետա Ապրանքներ») փորձարկելու և դրանց վերաբերյալ RIM հետադարձ կարծիք ներկայացնելու համար, իսկ եթե Բետա Ծրագրաշարերը և Բետա Ապրանքները տրամադրվել են ծրագրաշարեր ստեղծելու նախագծի շրջանակներում՝ ապա բացառապես համապատասխան Ծրագրաշարերի հետ օգտագործման համար նախատեսված նոր

ծրագրաշարեր ստեղծելու կամ Բետա Ծրագրաշարերի և/կամ Բետա Ապրանքների կոմերցիոն տարբերակները ստեղծելու համար: Այդ լիցենզիոն իրավունքները մեխանիկորեն կդադարեն Փորձնական Ժամկետը լրանալուն պես: Պետք է նկատի ունենալ, որ Փորձնական Ժամկետը կարող է RIM հայեցողությամբ երկարաձգվել կամ դադարեցվել ցանկացած ժամանակ: Եթե Դուք չեք խախտել սույն Պայմանագրի դրույթները, ապա RIM հնարավորության դեպքում խելամիտ ջանքեր կգործադրի Փորձնական Ժամկետի փոփոխության դեպքում Ձեզ ծանուցում տալու համար: Չնայած Փորձնական Ժամկետ սահմանելուն, Դուք համաձայնում և ընդունում եք, որ RIM կարող է Փորձնական Ապրանքներում ներդնել տեխնիկական միջոցներ, որոնք հնարավորություն չեն տա օգտագործել այդ ապրանքները որոշակի ժամանակ անցնելուց հետո, և Դուք համաձայնում եք չփորձել և չշրջանցել այդ միջոցները: Բետա Ապրանքների նկատմամբ լիցենզիոն իրավունքներ ստանալու դիմաց Դուք համաձայնում եք առանց հատուցման RIM ողջամիտ պահանջով վերջինիս հետադարձ կարծիք տրամադրել Բետա Ապրանքների, ներառյալ նաև Փորձնական Ժամկետում ունեցած անսարքությունների և դրանց ուղղման համար նախատեսված ծրագրերի վերաբերյալ: Տրամադրված կարծիքների նկատմամբ իրավունքները կարգավորվում են ստորև գետեղված «Հետադարձ Կարծիքներ» կետի դրույթներին համապատասխան: RIM կարող է Ձեզանից պահանջել, իսկ Դուք համաձայնում եք, որ RIM պահանջով կլրացնեք հարցաշարեր այս կամ այն Բետա Ապրանքի վերաբերյալ:

Վերարտադրելու իրավունքները. Դուք իրավունք չունեք տա րածել կամ ամբողջությամբ կամ մասնակիորեն վերափոխել Ծրագրաշարերը կամ Պարունակությունները, որոնք Ձեզ հասանելի են դարձվում RIM Ծառայությունների շրջանակներում: Բացառությամբ, եթե օրենքով RIM իրավասու չէ արգելել հետևյալ գործողությունները և եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով, RIM Ծառայությունների նկատմամբ կիրառելի Փաստաթղթերով կամ Ձեր և RIM/RIM հետ փոխկապակցված անձանց միջև գրավոր կերպով կնքված առանձին համաձայնագրերով, ապա Դուք իրավունք չունեք պատրաստել Ծրագրաշարերի և/կամ RIM Ծառայությունների շրջանակներում Ձեզ հասանելի դարձված Պարունակությունների օրինակներ, ամբողջությամբ կամ մասնակիորեն վերարտադրել կամ այլ կերպ կրկնօրինակել դրանք: Սույն դրույթի առումով «օրինակներ պատրաստել» կամ «վերարտադրել» ասելով չի հասկացվում Ծրագրաշարերի գրառումների և հրահանգների վերարտադրումը, ինչը, որպես կանոն, տեղի է ունենում ծրագրերի բնականոն աշխատանքի ընթացքում՝ դրանք Փաստաթղթերի համաձայն և դրանցում նշված նպատակներով օգտագործելիս կամ առանց վերափոփման ընդունված գործարար կարգի պահպանմամբ Ծրագրաշարերի կամ դրանք պարունակող համակարգչի կամ համակարգի պարունակության՝ կանոնավոր պահեստային պատճեններ պատրաստելու ժամանակ: Դուք կարող եք պատճենահանել Փաստաթղթերը կամ դրանց այս կամ այն մասը միայն Ձեր BlackBerry Լուծումների շրջանակներում Ձեր անձնական կամ ներքին օգտագործման նպատակներով:

3. Ձեր BlackBerry Լուծումների Օգտագործման Պայմանները. Դուք պատասխանատվություն եք կրում Ձեր BlackBerry Լուծումների առնչությամբ

Ձեր և Ձեր Արտոնված Օգտագործողների կողմից կատարված բոլոր գործողությունների համար և պարտավոր եք.

- (ա) Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասն օգտագործել սույն Պայմանագրի դրույթների, կիրառելի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, համապատասխան Փաստաթղթերի պահանջներին համապատասխան և ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասն օգտագործեն միայն նշված կարգով:
- (բ) Ունենալ համապատասխան իրավասություն սույն Պայմանագիրը Ձեր, համապատասխան ընկերության կամ մեկ այլ մարմնի կամ անչափահասի անունից կնքելու համար, լինել չափահաս:
- (գ) Ապահովել, որպեսզի սույն Պայմանագրի համաձայն RIM-ին տրամադրված բոլոր տեղեկությունները, ներառյալ RIM Ծառայություններից օգտվելու նպատակով գրանցվելու, RIME Store ծառայության միջոցով ապրանքներ պատվիրելու կամ BlackBerry Վճարումային Համակարգի միջոցով գործարքներ կատարելու ժամանակ տրամադրված տեղեկությունները լինեն ստույգ և հավաստի, թերի և հնացած չլինեն: Այնքան ժամանակ, որքան Դուք և Ձեր Արտոնված Անձիք կշարունակեք օգտվել RIM Ծառայություններից կամ ունենալ հաշվեհամարներ, Դուք և Ձեր Արտոնված Անձիք պարբերաբար կթարմացնեք այդ տեղեկությունները, որպեսզի դրանք մշտապես լինեն ստույգ, հավաստի և ամբողջական:
- (դ) Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասն առանձին-առանձին կամ Երրորդ Անձանց Ապրանքների, Երրորդ Անձանց Ծառայությունների համադրությամբ դիտավորյալ չօգտագործել այնպես, որը RIM ողջամիտ կարծիքով կարող է նսեմացնել կամ բացասական ազդեցություն ունենալ այս կամ այն ծրագրաշարերի, սարքաշարերի, համակարգերի, ցանցերի, Պարունակությունների կամ ծառայությունների վրա, ներառյալ նաև Ձեր կամ ցանկացած այլ անձի պատկանող և ցանկացած այլ անձի կողմից, այդ թվում նաև RIM և Ձեզ Անլար Ծառայություններ Մատուցող Անձի կողմից օգտագործվող BlackBerry Լուծումների այս կամ այն մասի վրա, կամ որը կարող է RIM ողջամիտ կարծիքով ոտնահարել դրանց նկատմամբ իրավատիրոջ իրավունքները կամ այլ կերպ վատթարացուցիչ ազդեցություն ունենալ RIM, RIM Ընկերությունների Խմբի, Անլար Ծառայություններ Մատուցող Անձանց, ներանց հաճախորդների, ենթակառուցվածքների, ապրանքների և ծառայությունների վրա: Ընդ որում, դիտավորությունը պարզելու նպատակով տեղեկացված լինելու հանգամանքը այս պարագայում ստուգվում է նրանով, թե տվյալ անձը, տվյալ պարագայում Դուք, իրազեկման նապատակով ձեռնարկել եք բոլոր այն միջոցները, որ ողջամիտ անձը կձեռնարկեր Ձեր փոխարեն, թե՛ ոչ: Դուք պարտավոր եք նաև ապահովել, որ Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ իրենց հերթին վերոգրյալ կարգով իրազեկվելուց հետո Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասն առանձին-առանձին կամ Երրորդ Անձանց Ապրանքների, Երրորդ

Անձանց Ծառայությունների համադրությամբ դիտավորյալ չօգտագործեն և չթույլատրեն այլ անձանց դրանք օգտագործել այնպես, որը կարող է հակասել վերոգրյալ դրույթներին: Նման օգտագործման վերաբերյալ RIM կողմից ծանուցում ստանալուն պես Դուք պարտավոր եք անմիջապես դադարեցնել այն:

- (ե) Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասը չօգտագործել այնպիսի նպատակներով, ինչպիսիք են անպատշաճ, վուլգար, անհանգստացնող, վիրավորիչ, զրպարտիչ, վարկաբեկող, անպարկեշտ, ապօրինի և ստահող Պարունակություններ հաղորդելը, հրապարակել ը, համացանցում տեղադրելը, տրամադրելը կամ տարածելը: Դուք պարտավոր եք ապահովել նաև, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասը չօգտագործեն նման նպատակներով:
- (զ) Չօգտագործել և ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ չօգտագործեն Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասը հանցանքներ գործելու, հանցանքներ գործելու փորձ կատարելու կամ հանցագործություններ, այլ ապօրինի և իրավախախտ գործողություններ կատարելու նպատակով աջակցություն ցուցաբերելու համար ներառյալ այնպիսի նյութեր և տեղեկություններ հավաքելու, պահելու, համացանցում տեղադրելու, հաղորդելու և այլ կերպ այլ անձանց հասանելի դարձնելու նպատակով, որոնք հավաքելու, պահելու և հասանելի դարձնելու իրավունքը Դուք չունեք օրենքի կամ պայմանագրի համաձայն: Դուք պարտավորվում եք Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասը չօգտագործել և ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ դրանք չօգտագործեն որևիցե պարտավորության, մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի կամ մասնավոր կյանքի գաղտնիության, մոլեխաղի մասին և այլ օրենքների պահանջների խախտմամբ: Ի լրումն վերոգրյալին, Դուք պարտավորվում եք նաև Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասը չօգտագործել և ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ դրանք չօգտագործեն այնպիսի արարքներ կատարելու նպատակով, որոնք կարող են ոտնահարել, յուրացնել երրորդ անձանց մտավոր սեփականության իրավունքները (ներառյալ այնպիսի արարքներ, ինչպիսիք են այնպիսի ծրագրաշարերի և Պարունակությունների օրինակներ պատրաստելը և այլ անձանց տրամադրելը, որոնք Դուք իրավունք չունեք պատրաստել և/կամ տրամադրել, թվային իրավունքների կառավարման պաշտպանության համակարգերի շրջանցումը):
- (է) Չօգտագործել և ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ չօգտագործեն Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասն այնպիսի նպատակներով, ինչպիսիք են այնպիսի ծրագրաշարեր կամ Պարունակություններ համացանցում տեղադրելը, հաղորդելը, էլ-փոստով առաքելը կամ այլ կերպ հասանելի դարձնելը, որոնք պարունակում են (i) վիրուսներ, Տրոյական Ձիեր, որդեր, օգտատերերի գաղտնաբառերը շրջանցող գաղտնաբառեր, անջատող մեխանիզմներ, վնասագրեր, օգտագործողների

կողմից մուտքագրվող տեղեկություններն ընթերցելու և այլ անձանց հաղորդելու, ավտոմատ որոշակի հանձնարարություններ և գործողություններ կատարելու, վթարային անջատումներ իրականացնելու կամ լրտեսող այլ հնարավորություններ կամ (ii) այլ ծրագրեր կամ Պարունակություններ, որոնք նախատեսված են (Ա) վնասակար ազդեցություն ունենալ ծրագրաշարերի, սարքաշարերի, համակարգերի, ծառայությունների կամ տվյալների վրա, (Բ) շարքից հանել, փչացնել կամ վնասել դրանք կամ (Գ) չարտոնված մուտք ապահովել կամ արգելել արտոնված մուտքը դեպի այդ ծրագրաշարեր, սարքաշարեր, համակարգեր, ծառայություններ կամ տվյալներ կամ հնարավորություն տալ դրանք օգտագործվել չարտոնված և ապօրինի նպատակներով, այսուհետ՝ «Վնասագրեր»: Եթե տեղեկանաք BlackBerry Լուծումներում առկա կամ դրանց առնչվող Վնասագրերի գոյության մասին, ապա անհապաղ հաղորդեք RIM-ին:

- (ը) Առանց RIM նախնական գրավոր համաձայնության այլ անձանց չվաճառել, վարձույթով, փոխատվությամբ չտրամադրել, չփոխանցել և չփորձել վաճառել, վարձույթով, փոխատվությամբ տրամադրել, փոխանցել Ծրագրաշարերը, RIM Ծառայությունների շրջանակներում Ձեզ տրամադրված Պարունակությունները կամ դրանց այս կամ այն մասը կամ RIM Ծառայություններից կամ դրանց այս կամ այն մասից Ձեր օգտվելու իրավունքը (ներառյալ գերծ մնալ Ծրագրաշարերի կիրառմամբ ծառայությունների մատուցելուց): Ներկառուցված Ծրագրաշարերի դեպքում Դուք պարտավոր եք առանց RIM նախնական գրավոր համաձայնության չվաճառել, վարձույթով, փոխատվությամբ չտրամադրել, չփոխանցել և չփորձել վաճառել, վարձույթով, փոխատվությամբ տրամադրել, փոխանցել դրանք այլ սարքերի հետ օգտագործման նպատակով: Ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ իրենց հերթին հետևեն վերոգրյալ սահմանափակումներին:
- (թ) Չփորձել ապօրինի թափանցումների, գաղտնաբառերին ապօրինի տիրանալու կամ չարտոնված այլ միջոցներով մատչել RIM Ծառայությունները, դրանց հետ կապված այլ անձանց հաշվեհամարները, համակարգչային համակարգերը և ցանցերը, չստանալ կամ չփորձել ստանալ RIM Ծառայությունների միջոցով ցանկացած կերպ հասանելի դարձված այնպիսի նյութեր կամ տեղեկություններ, որոնք Ձեզ հասցեագրված չեն եղել: Ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ իրենց հերթին հետևեն վերոգրյալ սահմանափակումներին:
- (ժ) Չօգտագործել և ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ չօգտագործեն Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասն այս կամ այն անձի ինքնությունը թաքցնելու, այս կամ այնձի հետ Ձեր կամ Ձեր Արտոնված Օգտագործողի կապը քողարկելու, մոլորեցնելու, խաբելու, տեղեկություններ և փող շորթելու, այլ անձանց անունից էլ փոստի միջոցով մոլորեցնող նամակներ ուղարկելու նպատակով կեղծ ինքնություն ստեղծելու համար:

(ժ) Համագործակցել RIM հետ և տրամադրել վերջինիս կողմից պահանջվող բոլոր տեղեկությունները սույն Պայմանագրի խախտման դեպքերն ուսումնասիրելու և պարզելու նպատակով, ինչպես նաև թույլատրել RIM-ին կամ վերջինիս կողմից նշանակված անկախ վերստուգողներին մուտք գործել բոլոր այն տարածքներ և համակարգիչներ, որտեղ RIM Ապրանքները, Ծառայությունները կամ Ծրագրաշարերն օգտագործվում են կամ օգտագործվել են, նրանց տրամադրել համապատասխան նշումներ ու գրառումներ, ինչպես նաև ապահովել, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողներն էլ կատարեն նույնը: Դուք սույնով լիազորում եք RIM-ին համագործակցել. (i) իրավապահ մարմինների հետ կասկածելի հանցագործությունները հետաքննելու նպատակով, (ii) երրորդ անձանց հետ սույն Պայմանագրի դրույթների խախտումներն ուսումնասիրելու նպատակով և (iii) Ինտերնետ ծառայություններ մատուցող անձանց, ցանցերի և համակարգչային կենտրոնների համակարգի կառավարիչների հետ սույն Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով: Դուք համաձայնում եք, որ համագործակցելով այլ անձանց հետ, RIM հնարավոր է, որ կբացահայտի Ձեր կամ Ձեր Արտոնված Օգտագործողի օգտատիրոջ անունը, IP հասցեն կամ այլ անհատական տվյալները:

4. Պահանջվող Երրորդ Անձանց Ապրանքները և Երրորդ Անձանց Ծառայությունները. Դուք պարտավոր եք ապահովել, որպեսզի Երրորդ Անձանց Ապրանքները և Երրորդ Անձանց Ծառայությունները (ներառյալ, սակայն ոչ միայն, համակարգչային համակարգերը, համացանցի միացումը, անլար ցանցերը, աշխատանքային սեղանի գաղտնագրումը և Անլար Ծառայությունները), որոնց հետ Դուք որոշել եք օգտագործել Ձեր BlackBerry Լուծումները, համապատասխանեն RIM նվազագույն պահանջներին, ինչպես նաև Ձեր BlackBerry Լուծումների համար պահանջվող Փաստաթղթերում նշված տյալների մշակման արագության, հիշողության, սպասառուի ծրագրաշարերի և ինտերնետ հասանելիության վերաբերյալ պահանջներին: Դուք պարտավոր եք ապահովել, որպեսզի Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների օգտագործումը Ձեր BlackBerry Լուծումների հետ չհակասի Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների օգտագործմանն առնչվող այս կամ այն լիցենզայի, պայմանագրերի, օրենքների և/կամ ենթաօրենսդրական ակտերի դրույթներին և պահանջներին: Ձեր BlackBerry Լուծումներն օգտագործելու համար հիմնականում պահանջվում է Անլար Ծառայությունների բաժանորդագրություն: Անլար Ծառայությունների բաժանորդագրություն պահանջվում է նաև video chat-ից օգտվելու, հեռախոսազանգեր կատարելու և էլ.փոստով նամակներ առաքելու ու ստանալու համար: Հնարավոր է, որ Անլար Ծառայություններ Մատուցող Անձիք Ձեզանից գանձեն վճարներ BlackBerry Լուծումներից օգտվելու կապակցությամբ: Դուք համաձայնում եք, որ Դուք ինքներդ պատասխանատվություն կկրեք այդ վճարների համար: Հնարավոր է, որ Անլար Ծառայություն Մատուցող Անձիք սահմանափակեն RIM և/կամ Երրորդ Անձանց որոշ Ծառայությունների հասանելիությունը: Եթե ցանկանում եք ստանալ տեղեկություններ այն մասին, թե Ձեր գտնվելու վայրում Անլար Ծառայություններ Մատուցող ո՞ր Անձանց ցանցում կարող եք

Եթե Երրորդ Անձանց և Ձեր միջև կիրառելի լրացուցիչ պայմանները RIM համար իրավական նշանակություն չունեն, դրանցով չեն կարող սույն Պայմանագրին հակասող կամ դրա համեմատությամբ լրացուցիչ նոր պարտավորություններ սահմանվել, դրանցով RIM համար պարտավորություններ ստեղծվել չեն կարող: Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների մասով Ձեր և RIM միջև կիրառելի կլինեն սույն Պայմանագրի համապատասխան դրույթները:

- (զ) Եթե Երրորդ Անձանց Արտադրության Բաղադրամասերի նկատմամբ կիրառելի լինեն լրացուցիչ պայմաններ և դրանց համաձայն Ձեզ տրամադրվեն Երրորդ Անձանց Արտադրության Բաղադրամասերը կամ դրանց այս կամ այն մասն օգտագործելու, վերափոխելու, տարածելու, դրանցից օրինակներ պատրաստելու ավելի լայն իրավունքներ, քան 1-ին և 2-րդ հոդվածի շրջանակում նախատեսվածները, ապա դրանց օգտագործման նկատմամբ կիրառելի կլինեն սույն Պայմանագրի դրույթները, և այդ կապակցությամբ դրանք կդիվեն, որպես Ձեր BlackBerry Լուծումների մաս հանդիսացող RIM Ծրագրաշարեր և RIM Ծառայություններ: Այստեղ պետք է նաև նկատի ունենալ, որ RIM կողմից տրամադրվելու դեպքում RIM դրանք Ձեզ է տրամադրում այնպես, ինչպես կան, առանց որևէ հատուկ կամ ենթադրյալ պայմանների, երաշխիքների, երաշխավորությունների, հավաստումների և առանց դրանք հավանության արժանացնելու, և պետք է նկատի ունենալ, որ այդ պարագայում կիրառելի կլինեն սույն Պայմանագրի՝ Երրորդ Անձանց Ապրանքներին և Երրորդ Անձանց Ծառայություններին և ոչ թե Ծրագրաշարերին վերաբերող պատասխանատվության սահմանափակման, բացառման և ապրանքները վերադարձնելու կանոններն ու վերապահումները: BlackBerry Սարքերի մեջ RIM կողմից տեղադրված Երրորդ Անձանց Ծրագրաշարերը Ձեզ են տրամադրվում Ձեր օգտագործման պրոցեսին ավելի հարմարավետ դարձնելու նպատակով, հետևաբար, եթե ցանկանում եք Երրորդ Անձանց Ծրագրաշարերը ձեր բերել այլ պայմաններով, ապա գնեք դրանք համապատասխան մատակարարներից: Սույն կետի դրույթները չեն տարածվում RIME Store ծառայության միջոցով տրամադրված Երրորդ Անձանց Ծրագրաշարերի և Երրորդ Անձանց Ծառայությունների վրա, դրանց նկատմամբ կիրառելի են սույն Պայմանագրի 9-րդ հոդվածի դրույթները:

6. RIM Ծառայությունները.

- (ա) RIM Ծառայությունների վերափոխումները և դադարեցումը. Դուք համաձայնում և ընդունում եք, որ RIM կարող է ցանկացած ժամանակ ծանուցմամբ կամ առանց ծանուցման և առանց Ձեր նկատմամբ պատասխանատվություն կրելու ժամանակավորապես կամ մեկընդմիջտ վերափոխել, կասեցնել, դադարեցնել, հեռացնել, սահմանափակել կամ անջատել RIM այս կամ այն Ծառայությունները, իսկ եթե Դուք վճարել եք որոշակի ժամանակահատվածում RIM Ծառայություններից օգտվելու համար, և դրանք մեկընդմիջտ դադարեցվել են RIM կողմից (ինչպիսի պարագայում RIM համապատասխան Ծառայությունները մատչելու համար նախատեսված BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերից օգտվելու Ձեր լիցենզային իրավունքը մեխանիկորեն կդադարի), սպա Դուք կարող եք իրավունք ունենալ ետ ստանալ RIM Ծառայությունների համար RIM-ին վճարված գումարները կամ դրանց մի մասը, պայմանով, եթե Դուք չեք խախտել սույն Պայմանագրի դրույթները: Գումարները կվերադարձվեն տվյալ պահին գործող RIM Ծառայությունների Վերդաձման Կանոնակարգի համաձայն: Դա կլինի Ձեր միակ իրավունքը և RIM միակ պատասխանատվությունը RIM Ծառայությունները RIM կողմից մեկընդմիջտ դադարեցվելու դեպքում:
- (բ) Տեխնիկական Սպասարկում. Առանց սահմանափակելու վերոհիշյալ դրույթների գործողության ոլորտը՝ RIM իրավունք է վերապահում, իսկ Դուք էլ համաձայնում եք, որ RIM կարող է ժամանակ առ ժամանակ իր իսկ բացարձակ հայեցողությամբ կասեցնել RIM Ծառայությունների հասանելիությունը կամ դրանք շահագործումից հանել դրանց հետ կապված ուղղումներ, թարմացումներ և դիագնոստիկ աշխատանքներ կատարելու, ինչպես նաև RIM Ծառայությունների տեխնիկական սպասարկման այլ աշխատանքներ իրականացնելու նպատակով:

7. Ձեր Աջակցությունը և Պարունակությունները.

- (ա) Հետադարձ Կարծիքներ. Դուք կարող եք հետադարձ կարծիքներ ներկայացնել RIM Ձեր BlackBerry Լուծումների վերաբերյալ: RIM կողմից գրավոր կերպով այլ բան նախատեսված չլինելու դեպքում BlackBerry Լուծումների վերաբերյալ Ձեր տրամադրած կարծիքների, մեկնաբանությունների, առաջարկությունների, մտքերի, կոնցեպտների և Ձեր կողմից առաջարկված փոփոխությունների (այսուհետ՝ «Հետադարձ Կարծիքներ») նկատմամբ բոլոր իրավունքները, ներառյալ մտավոր սեփականության իրավունքները, կպատկանեն RIM-ին: Դուք սույնով RIM-ին եք փոխանցում և զիջում Ձեր Հետադարձ Կարծիքների նկատմամբ Ձեր ունեցած բոլոր իրավունքները: Դուք դիտավորյալ RIM-ին չեք տրամադրի այնպիսի Հետադարձ Կարծիքներ, որոնք կարող են պաշտպանված լինել երրորդ անձանց մտավոր սեփականության իրավունքներով: Դուք համաձայնում եք անմնացորդ համագործակցել RIM հետ և ստորգրել բոլոր այն փաստաթղթերն ու կատարել բոլոր այն գործողությունները, որոնք կարող են ողջամտորեն պահանջվել RIM կողմից Հետադարձ Կարծիքների նկատմամբ RIM իրավունքները հավաստելու և դրանց նկատմամբ RIM մտավոր սեփականության

իրավունքները և/կամ գաղտնի տեղեկությունները գրանցելու և/կամ պաշտպանելու համար:

- (բ) Վերջնական Օգտագործողների Տրամադրած Պարունակությունները, Երրորդ Անձանց Ապրանքները. Դուք պատասխանատվություն եք կրում Ձեր կողմից տրամադրված Պարունակությունների համար: RIM դրա համար ոչ մի պատասխանատվություն չի կրում: Այլ վերջնական օգտագործողների կողմից BlackBerry Լուծումներ և օգտագործելու միջոցով կամ Երրորդ Անձանց Ծառայությունները BlackBerry Լուծումների հետ օգտագործելու միջոցով Ձեզ հասանելի դարձված Պարունակությունները և Երրորդ Անձանց Ապրանքները RIM կողմից չեն վերահսկվում: Ի լրումն 22-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության բացառման վերաբերյալ ընդհանուր դրույթներին, սույնով հայտնում ենք, որ RIM չի երաշխավորում Երրորդ Անձանց Ապրանքների որակը, պիտանիությունը և արժանահավատությունը և դրանց համար որևէ պատասխանատվություն չի կրում: RIM կարող է սահմանել RIM Ծառայություններից օգտվելու կանոններ և սահմանափակումներ, ինչպես նաև RIM Ծառայություններում (այդ թվում նաև քլաուդ պահեստավորման ծառայություններում) Պարունակությունների պահեստավորման առավելագույն ծավալների, դրանցում Պարունակությունների և հաղորդագրությունների, ինչպես նաև քննարկումների ակումբներում թողնված մեկնաբանությունների պահեստավորման առավելագույն ժամկետների վերաբերյալ: RIM կարող է սահմանել նաև Պարունակություններն օգտագործելու և մատչելու հնարավորության առավելագույն ժամկետները: Դուք կարող եք RIM կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց կողմից RIM Ծառայությունների միջոցով Ձեզ հասանելի դարձված Պարունակություններն օգտագործել միայն Ձեր անձնական նպատակներով և այն էլ միայն RIM Ծառայությունների լիցենզային պայմաններին համապատասխան: Դուք չեք կարող BBB Music ծառայության միջոցով Ձեզ տրամադրված Պարունակություններն օգտագործել որպես հեռախոսազանգի մեղեդիներ: Վերոհիշյալ կարգի սահմանափակումները մանրամասն շարադրված կլինեն RIM համապատասխան Ծառայություններին առնչվող Փաստաթղթերում, որոնք Դուք պետք է պարբերաբար ուսումնասիրեք, քանի որ RIM կարող է փոփոխություններ կատարել դրանց մեջ: Դուք համաձայնում և ընդունում եք, որ RIM պատասխանատվություն չի կրում Պարունակությունների կորստի, ջնջվելու, չպահեստավորվելու, չարտոնված մատչելու համար, և եթե որևիցե Պարունակություն Ձեզ համար կարևոր է, ապա խնդրում ենք պահել դրանց պահեստային օրինակները, եթե իհարկե Ձեզ նման իրավունք վերապահված է:
- (գ) Ձեր կողմից տրամադրված Պարունակությունները. Եթե սույն Պայմանագրով կամ դրա հավելվածներով այլ բան նախատեսված չէ, ապա սույն Պայմանագրով Ձեր կողմից տրամադրված Պարունակությունների նկատմամբ RIM-ին սեփականության իրավունքներ չեն փոխանցվում: Հրապարակայնորեն հասանելի ինտերնետ կայքերում կամ RIM Ծառայությունների հրապարակայնորեն հասանելի այլ մասերում Ձեր կամ Ձեր Արտոնված Օգտագործողների կողմից տեղադրված Պարունակությունների առնչությամբ Դուք սույնով RIM-ին եք տրամադրում դրանք օգտագործելու, տարածելու,

վերարտադրելու, վերափոխելու, հարմարեցնելու, հրապարակայնորեն կատարելու և ցուցադրելու ոչ բացառիկ իրավունք, այքնով որքանով դա ողջամտորեն անհրաժեշտ է RIM Ծառայությունների մատուցման և կառավարման նպատակով: Ձեր կողմից RIM-ին վերապահված այդ իրավունքն անհետկանչելի և փոխանցելի է, դրա համար հեղինակային վճարներ վճարման ենթակա չեն, և դրա գործողությունը չի սահմանափակվում ժամանակի կամ տարածության մեջ: Իսկ ինչ վերաբերում RIM Ծառայությունների այլ մասերում Ձեր և Ձեր Արտոնված Օգտագործողների կողմից տեղադրված Պարունակություններին, ապա դրանց առնչությամբ Դուք սույնով RIM-ին եք տրամադրում դրանք օգտագործելու, տարածելու, վերարտադրելու, վերափոխելու, հարմարեցնելու, հրապարակայնորեն կատարելու և ցուցադրելու ոչ բացառիկ իրավունք, այքնով որքանով դա ողջամտորեն անհրաժեշտ է RIM Ծառայությունները Ձեզ մատուցելու համար: Ձեր կողմից RIM-ին վերապահված այդ իրավունքի համար հեղինակային վճարներ վճարման ենթակա չեն, դրա գործողությունը չի սահմանափակվում տարածության մեջ: Երկու պարագայում էլ Դուք երաշխավորում եք, որ իրավասու եք նման իրավունքներ տրամադրել RIM-ին:

- (դ) Անցանկալի Պարունակություններ և Երրորդ Անձանց Ապրանքներ. Դուք ընդունում և գիտակցում եք, որ BlackBerry Լուծումներից կամ Երրորդ Անձանց Ծառայություններից օգտվելու պարագայում Դուք և Ձեր Արտոնված Օգտագործողները կարող եք հայտնաբերել Ձեր կարծիքով կամ միանգամայն արդարացիորեն այդպիսի համարվող վիրավորիչ, անպարկեշտ կամ այլ անցանկալի Պարունակություններ: RIM, վերջինիս լիազոր անձիք կարող են (բայց պարտավոր չեն) իրենց բացարձակ հայեցողությամբ նախապես զննել, ստուգել, մերժել կամ հեռացնել RIM Ծառայությունների համար նախատեսված Երրորդ Անձանց Ապրանքները:
- (ե) Ծնողների/Զափահասների Վերահսկողությունը. Ձեր BlackBerry Լուծումները և/կամ Երրորդ Անձանց Ծառայությունները կարող են ունենալ կարգավորումներ, որոնց օգնությամբ կարող եք արգելափակել կամ ֆիլտրել որոշ Պարունակություններ, RIM Ծառայություններ, Երրորդ Անձանց Ծառայություններ և Երրորդ Անձանց: Ձեր պարտավորությունն է ըստ Ձեր ցանկության արգելափակել կամ ֆիլտրել այն Պարունակությունները, RIM Ծառայությունները, Երրորդ Անձանց Ծառայությունները և Երրորդ Անձանց, որոնք Դուք ցանկալի չեք համարում: RIM չի երաշխավորում դրանց անխափան աշխատանքը և չի երաշխավորում, որ դրանց օգնությամբ Դուք կարող եք մեկընդմիջտ և հուսալի կերպով արգելափակել, ֆիլտրել բոլոր անցանկալի Պարունակությունները, RIM Ծառայությունները, Երրորդ Անձանց Ծառայությունները և Երրորդ Անձանց: RIM նաև չի երաշխավորում, որ արգելափակելու և ֆիլտրելու կարգավորումներն ակտիվացվելուց հետո դրանք չեն ապակտիվացվի այլ անձանց կողմից, ում հասանելի են Ձեր BlackBerry Լուծումները կամ, որ նման անձիք այդ կարգավորումներն ակտիվացվելուց հետո դրանք շրջանցելու փորձ չեն անի և դա նրանց չի հաջողվի: Եթե Դուք թույլատրում եք Ձեր երեխային Ձեր Սարքի միջոցով լսել, դիտել կամ մատչել Ծրագրաշարերը, RIM Ծառայությունները, Երրորդ Անձանց Ծառայությունները

և Երրորդ Անձանց Ապրանքները, ապա դա ամբողջովին Ձեր պարտավորությունն է ստուգել, թե արդյո՞ք այդ Ծրագրաշարերը, RIM Ծառայությունները, Երրորդ Անձանց Ծառայությունները և Երրորդ Անձանց Ապրանքները թույլատրելի են Ձեր երեխայի համար, և Դուք պատասխանատու եք Ձեր երեխայի կողմից այդ Ծրագրաշարերը, RIM Ծառայությունները, Երրորդ Անձանց Ծառայությունները և Երրորդ Անձանց Ապրանքները մատչելու և Ձեր երեխայի կողմից դրանք օգտագործելու, ներառյալ դրանց մատչման և դրանց օգտագործման կապակցությամբ վճարման ենթակա բոլոր վճարումները, դրանցից բխող բոլոր պարտավորությունները կատարելու համար:

(գ) Ծրագրաշարերի և Երրորդ Անձանց Ապրանքների Հեռացումը. Դուք համաձայնում և ընդունում եք, որ RIM կարող է ժամանակ առ ժամանակ RIM Ծառայություններից, RIME Store և My World ծառայություններից հեռացնել Ծրագրաշարերը կամ Երրորդ Անձանց Ապրանքները, իսկ օրինական պահանջ ներկայացվելու դեպքում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ Ծրագրաշարերը կամ Երրորդ Անձանց Ապրանքները վնասում են սարքաշարերի, ծրագրաշարերի, համակարգերի, ցանցերի, տվյալների, ինչպես նաև Ձեր և այլ անձանց BlackBerry Լուծումների աշխատանքին կամ նվազեցնում են դրանց աշխատանքի արդյունավետությունը կամ այլ կերպ բացասական ազդեցություն են ունենում դրանց վրա, ապա RIM կարող է առանց Ձեզ ծանուցելու հեռացնել Ծրագրաշարերը և/կամ Երրորդ Անձանց Ապրանքները Ձեր Սարքից, անորոշ ժամանակով կասեցնել կամ դադարեցնել RIM համապատասխան Ծառայությունների և/կամ Երրորդ Անձանց համապատասխան Ծառայությունների հասանելիությունը: Նման պարագայում RIM Ձեր նկատմամբ ոչ մի պատասխանատվություն չի կրում, ինչպես դա նախատեսված է սույն Պայմանագրի 6 (ա) կետով:

(ե) Լրացուցիչ իրավունքներ. Օրենքով արգելված չլինելու դեպքում RIM իրավունք է վերապահում իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ, ցանկացած պատճառով և առանց Ձեզ ծանուցելու փոփոխել, հեռացնել, անջատել, սահմանափակել, արգելել, դադարեցնել կամ կասեցնել Ծառայությունների հասանելիությունը, Ձեր BlackBerry Սարքից հեռացնել ցանկացած Ծրագրաշարեր կամ Երրորդ Անձանց Ապրանքներ, ինչպես նաև անջատել արդեն իսկ Սարքերի մեջ տեղադրված նյութերի աշխատանքը կամ հեռացնել դրանք: Այս պարագայում RIM Ձեր նկատմամբ ոչ մի պատասխանատվություն չի կրում, ինչպես դա նախատեսված է սույն Պայմանագրի 6 (ա) կետով:

8. Տեխնոլոգիաների օգտագործման անվտանգության կանոնները.

(ա) Ֆիզիկական սիմպտոմներ. Շատ հազվադեպ դեպքերում փայլող լույսերը և վիդեոխաղերում կիրառվող որոշ տեխնոլոգիաները մարդկանց մոտ կարող են առաջացնել ցնցումներ և գիտակցության մթազնում: Եթե նախկինում տեխնոլոգիաների օգտագործման հետևանքով զգացել կամ ունեցել եք սրտխառնոցներ, անկառավարելի շարժումներ, ձայն ականջներում, թմրություն կամ ունեցել եք տեսողության խնդիրներ, ապա նման տեխնոլոգիաներ օգտագործելուց առաջ խորհրդակցեք բժշկի հետ և մի շարունակեք օգտագործել

այդ տեխնոլոգիաները, եթե խնդիրները շարունակվում են: Բոլոր դեպքերում խուսափեք երկար ժամանակով տեխնոլոգիաներ օգտագործելուց: Մա կօզ նի նվազեցնել հոգնածությունը և տհաճ զգացողությունները, ինչպես նաև աչքերի, մկանների և հոդերի լարումները: Հսկողություն իրականացրեք Ձեր երախսաների կողմից տեխնոլոգիաների օգտագործման նկատմամբ խնդիրներից խուսափելու համար:

(բ) Վթարային և փրկարար ծառայություններ. BlackBerryՄարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի տեսագանգեր կատարելու ծառայությունը համակցված չէ հանրային օգտագործման հեռախոսային ցանցի հետ, մի՛ հավաքեք հեռախոսահամարներ այլ սարքերի հետ կապ հաստատելու համար: Այս ծառայությունը նախատեսված չէ փոխարինելու Ձեր ֆիքսված կամ բջջային հեռախոսային կապին: Ձեր BlackBerry Mobile Voice Ծրագրաշարերը (այսուհետ՝ «MVS») և Ծրագրաշարերի video chat ծառայությունը նույնպես նախատեսված չեն փոխարինելու Ձեր ֆիքսված կամ բջջային հեռախոսային կապին: Դրանց միջոցով հնրավոր չէ զանգահարել 911, 112, 999, 000 կամ այլ հատուկ ծառայությունների (այսուհետ՝ «Վթարային և Փրկարար Ծառայություններ»): Վթարային և Փրկարար Ծառայություններ հնարավոր չէ զանգահարել MVS և video chat ծառայության միջոցով: Այդ ծառայություններին զանգահարել կարող եք Ձեր BlackBerry Մարքի միջոցով, եթե այն գտնվում է Անլար Ծառայություններ Մատուցող Անձի բջջային ցանցի ներսում: Դուք համաձայնում և ընդունում եք, որ Վթարային և Փրկարար Ծառայություններին զանգահարելու համար հարկավոր է ձեռնարկել այլ միջոցներ, քան ընձեռում են MVS և video chat ծառայությունները: RIMԸնկերությունների Խումբը և նրանց ղեկավարները, տնօրեններն ու աշխատակիցները պատասխանատվություն չեն կրում MVS և video chat ծառայությունների միջոցով Վթարային և Փրկարար Ծառայություններին զանգահարել չկարողանալու հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի, մահ պատճառվելու և այլ վնասների համար:

9. RIME Store ծառայությունը. RIME Store ծառայությունից օգտվելու դեպքում Դուք և Ձեր Արտոնված Օգտագործողները պարտավոր եք հետևել ստորև գետեղված լրացուցիչ պայմաններին.

(ա) Պայմանների գործողությունն Առաջարկների նկատմամբ. Եթե սույն 9-րդ հոդվածով այլ բան նախատեսված չէ, ապա Ծրագրաշարերին, RIM Ծառայություններին, RIM Ապրանքներին, Երրորդ Անձանց Ապրանքներին և Երրորդ Անձանց Ծառայություններին վերաբերող սույն Պայմանագրի համապատասխան դրույթները կիրառելի են Առաջարկների համապատասխան տեսակների նկատմամբ: Ձեր բնակության երկրում RIM Ընկերությունների Խմբի կողմից իրականացվող էլ. առևտրի բոլոր գործարքների համար պատասխանատու է RIME: Հետևաբար, RIME Store Առաջարկների տարածման և In-App Ապրանքների ձեռք բերման դեպքում սույն Պայմանագրում RIM-ին կատարված բոլոր հղումները պետք է կարդալ և հասկանալ, որպես հղումներ RIME-ին:

(բ) Փոփոխություններ. RIME իրավունք է վերապահում իր հայեցողությամբ առանց ծանուցման արդիացնել, վերափոխել և կարգավորել RIME Store ծառայությունը, ինչպես նաև փոփոխել առկա Առաջարկները, Առաջարկների նկարագրությունները և պայմանները: Այդ փոփոխությունները հետադարձ ուժ չունեն:

(գ) Առաջարկների հասանելիությունը տարբեր երկրներում և տարածաշրջաններում.

Չնայած այն հանգամանքին, որ Առաջարկը կարող է ցուցադրված լինել RIME Store ծառայության միջոցով, այն հնարավոր է, որ հասանելի չլինի բոլոր երկրներում և տարածաշրջաններում: RIME իրավունք է վերապահում իր հայեցողությամբ սահմանափակել կամ ընդհանրապես բացառել այս կամ այն երկրում կամ աշխարհագրական գոտում գտնվող անձանց համար Առաջարկների հասանելիությունը: Այդ նպատակով RIME իրավունք է վերապահում իր հայեցողությամբ կիրառել տեխնոլոգիաներ և Ձեր օպերատորի ու սարքի վերաբերյալ տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան պարզել Ձեր գտնվելու վայրը: Չսահմանափակելով վերոգրյալ դրույթների գործողության ոլորտը՝ սույնով հայտնում ենք, որ Առաջարկները կարելի է ներբեռնել, տեղադրել և/կամ օգտագործել Վաճառողների Պայմաններով (սահմանումը բերված է ստորև) արտոնված կամ Վաճառողների կողմից սահմանված երկրներում: In-App Ապրանքները հասանելի են միայն այն երկրներում, որտեղ Ձեզ ներկայացվել է RIME Store Առաջարկը, որի միջոցով Ձեզ են ներկայացվել համապատասխան In-App Ապրանքները:

(դ) Անչափահասներ. Առաջարկները նախատեսված են լիովին գործունակ անձանց համար, որոնք կարող են իրավաբանորեն պարտադիր համաձայնություն տալ տեղեկություններ ստանալու և պայմանագիր կնքելու համար: Դուք համաձայնում եք վերահսկել և պատասխանատվություն ստանձնել անչափահասների կողմից RIME Store ծառայությունից օգտվելու և Ձեր անունից կամ Ձեր հաշվեհամարի միջոցով In-App Ապրանքներ ձեռք բերելու համար:

(ե) Ծառայություն մատուցող անձիք. RIME կարող է համագործակցել զանազան ծառայություն մատուցող անձանց, ինչպես նաև RIM Ընկերությունների Խմբի անդամ հանդիսացող ընկերությունների (այսուհետ՝ «Ծառայություններ Մատուցող Անձիք») հետ RIME Store ծառայության և BlackBerry Վճարումային Ծառայության _____ հոսթինգի և շահագործման նպատակներով:

(զ) Վաճառքի Գծով Պատասխանատու Երրորդ Անձիք. RIME Ձեզ և Ձեր Արտոնված Օգտագործողներին է մատուցում RIME Store ծառայությունը, սակայն չի հանդիսանում Վաճառքների Համար Պատասխանատու Անձ ո՛չ RIME Store ծառայության, ո՛չ Kiosk-ների և ո՛չ էլ In-App Ապրանքների գնումների մասով: RIME Store ծառայության միջոցով գնումներ կատարելու ժամանակ կամ In-App Ապրանքներ ձեռք բերելիս Ձեզ կներկայացվեն Վաճառքների Համար Պատասխանատու Երրորդ Անձանց տվյալները: Նրանց կողմից Ձեզ մատուցվող ծառայությունները սույն Պայմանագրի իմաստով համարվում են

Երրորդ Անձանց Ծառայություններ: Գնումներ կատարելու նպատակով Ձեզանից կարող է պահանջվել ընդունել լրացուցիչ պայմաններ և ունենալ հաշվեհամարներ այս կամ այն վճարումային համակարգերում, ինչպես օրինակ՝ PayPal Inc.-ի կողմից շահագործվող համակարգում:

- (է) Առաջարկներ Կատարող Անձանց Պայմանները. RIME Store ծառայության միջոցով ձեռք բերված Առաջարկներն օգտագործելու, իսկ ծառայություններ հանդիսացող Առաջարկների դեպքում նաև դրանք մատչելու և դրանցից օգտվելու Ձեր իրավունքները սահմանված են այդ Առաջարկների հետ տրամադրվող վերջնական օգտագործողների համար նախատեսված պայմանագրերում (այսուհետ՝ «Վաճառողների Պայմանները»): Եթե Վաճառողի Պայմանները չեն տրամադրվել Առաջարկը Կատարող Անձի կողմից, ապա Դուք համաձայնում և ընդունում եք, որ Առաջարկներից կօգտվեք սույն Պայմանագրի դրույթների համաձայն, այնպես կարծես Առաջարկները լինեին Ձեր BlackBerry Լուծումների մաս հանդիսացող Ծրագրաշարերը և RIM Ծառայությունները (կախված այն հանգամանքից, թե Առաջարկները ծրագրաշարեր են, թե՝ ծառայություններ): Այդ պարագայում պետք է նկատի ունենալ հետևյալը. i) Առաջարկը Կատարող Անձն կհամարվի լիցենզատու կամ ծառայություններ մատուցող անձ, կանխված այն հանգամանքից, թե Առաջարկները ծրագրաշարեր են, թե՝ ծառայություններ, ii) Առաջարկները RIME կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց կողմից Ձեզ են տրամադրվում այնպես, ինչպես կան, առանց որևէ հատուկ կամ ենթադրյալ պայմանների, երաշխիքների, երաշխավորությունների և առանց դրանք հավանության արժանացնելու, և iii) Առաջարկներից բխող կամ դրանց հետ կապված պատասխանատվության և դրանք վերադարձնելու առնչությամբ Ձեր և RIME միջև կգործեն Երրորդ Անձանց Առաջարկներից բխող կամ դրանց հետ կապված պատասխանատվության բացառման, սահմանափակման և դրանք վերադարձնելու սույն Պայմանագրի դրույթները: Հատուկ կցանկանայինք նշել, որ այդ կապակցությամբ չեն գործի Ծրագրաշարերից և RIM Ծառայություններից բխող և դրանց հետ կապված պատասխանատվության և դրանք վերադարձնելու սույն Պայմանագրի դրույթները:
- (ը) Առաջարկները նախատեսված են Ձեր BlackBerry Սարքի միջոցով օգտագործման և ոչ՝ վերավաճառքի համար. Եթե նույնիսկ այս կամ այն Առաջարկին վերաբերող պայմաններով նախատեսված են սույն դրույթի հետ չհամընկնող դրույթներ, ապա միևնույն է Դուք համաձայնում և երաշխավորում եք, որ Առաջարկները ձեռք կբերեք միայն Ձեր անձնական օգտագործման նպատակներով և ոչ մի դեպքում դրանք ձեռք չեք բերի վաճառքի կամ վերավաճառքի համար, և որ ծրագրաշարեր հանդիսացող Առաջարկները կներբեռնեք, կտեղադրեք և/կամ կօգտագործեք միայն RIM-ին պատկանող ծրագրային հարթակներով աշխատող Սարքերի մեջ:
- (թ) Սահմանափակ աջակցություն. RIME Store ծառայության, ինչպես նաև դրա միջոցով Ձեզ հասանելի դարձված Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների մասով RIME աջակցություն ցուցաբերելու

պարտավորությունը սահմանափակվում է հետևյալով. (ա) սահմանափակ աջակցություն Ծրագրաշարերը և Երրորդ Անձանց Ապրանքները ներբեռնելու հարցում և (բ) ընդլայնված աջակցություն բոլոր այն տեխնիկական խնդիրների վերաբերյալ, որ Դուք կարող եք ունենալ BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի կապակցությամբ, որոնք հնրավորություն են տալիս Ձեզ մատչել և օգտվել RIME Store ծառայությունից: RIME Store ծառայության մասով առաջարկվող աջակցության ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ կարող եք ստանալ՝ այցելելով տեխնիկական աջակցության կայքը:

(ժ) Վճարովի թարմացումներ և արդիացումներ. Որոշ դեպքերում RIM կարող է RIME ծառայության կամ ի սկզբանե Ձեր սարքերի մեջ ներկառուցելու միջոցով Ձեզ տրամադրել RIM Ծառայությունների կամ Ծրագրաշարերի այս կամ այն մասերի բազային տարբերակները կամ որոշակի ժամանակահատվածում դրանցից օգտվելու և դրանք մատչելու իրավունք, սակայն պահանջել Ձեզանից ձեռք բերել դրանց թարմացված և արդիացված տարբերակները (RIM Ծառայությունների դեպքում՝ նաև նորացված բաժանորդագրություն) լրացուցիչ ֆունկցիոնալ հնարավորություններ ստանալու կամ սահմանված ժամանակահատվածն ավարտվելուց հետո դրանցից օգտվելու և դրանք մատչելու համար:

(ի) Վաճառքի Գծով Պատասխանատու Անձանց և RIM պատասխանատվությունը Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների համար. Վաճառքի Գծով Պատասխանատու Երրորդ Անձիք և RIME չունեն տեխնիկական գիտելիքներ RIME Store ծառայության միջոցով Ձեզ հասանելի դարձված Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների վերաբերյալ: Առաջարկ Կատարող Անձիք իրենք են պատասխանատու իրենց կողմից ներկայացվող Առաջարկների երաշխիքի և տեխնիկական սպասարկման համար: Առաջարկների մասով Դուք կօգտվեք Առաջարկ Կատարող Անձանց կողմից տրված երաշխիքներից, եթե այդպիսի տրվել են: Երաշխիքները կարող է տարբեր լինել՝ կախված այն հանգամանքից, թե ում կողմից են տրվել, իսկ միևնույն անձի կողմից տրված լինելու դեպքում՝ նաև այն հանգամանքից, թե հոգուտ որ երկրներում բնակվող անձանց են տրվել: Ընթերցեք Առաջարկների հետ տրամադրվող փաստաթղթերը կամ Վաճառողի Պայմանները պարզելու համար, թե Առաջարկը Կատարող Անձն ինչպիսի սպասարկում է խոստանում այս կամ այն Առաջարկի կապակցությամբ և ինչ իրավունքներ Դուք ունեք տվյալ Առաջարկի սպասարկման և երաշխիքի կապակցությամբ: Եթե այլ բան նախատեսված չէ կամ եթե օրենքով արգելված չէ, Դուք երաշխիքից կարող եք օգտվել միայն այն դեպքում, երբ անձամբ օգտվում եք համապատասխան Առաջարկից և ձեռք չեք բերում այն վերավաճառելու նպատակով: Եթե օրենքով կամ Վաճառքի Գծով Պատասխանատու Անձի՝ ապրանքները և ծառայությունները վերադարձնելու կանոնակարգի՝ Երրորդ Անձանց Ապրանքներին և Երրորդ Անձանց Ծառայություններին վերաբերող դրույթներով այլ բան նախատեսված չէ, ապա Վաճառքի Գծով Պատասխանատու Անձիք և RIME (անկախ այն հանգամանքից, թե վերջինիս գործում է տվյալ հանգամանքում իր անունից, թե

հանդես է գալիս որպես Վաճառքի Գծով Պատասխանատու Անձին Ծառայություններ Մատուցող Անձ) պարտավոր չեն իրականացնել RIME Store ծառայության միջոցով հասանելի դարձված Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների տեխնիկական և շահագործման սպասարկումները կամ ետ վճարել դրանք ձեռք բերելու համար վճարված գումարները:

(լ) Վճարված գումարները ետ ստանալու կամ երաշխիքային իրավունքները. Եթե չնայած սույն Պայմանագրի դրույթներին RIME Ձեր բնակության երկրի օրենքների համաձայն պարտավոր է Առաջարկների մասով լրացուցիչ երաշխիքներ տրամադրել կամ գումարը վերադարձնելու լրացուցիչ պարտավորություններ ստանձնել, ապա RIME այդ օրենքների պահանջներին համապատասխան կտրամադրի նման երաշխիքներ և կստանձնի նման պարտավորություններ, իսկ օրենքով թույլատրված լինելու դեպքում RIM կարող է փոխարենը տրամադրել մեկ կամ մի քանի այլընտրանքային RIM Ապրանքներ, Ծրագրաշարեր, RIM Ծառայություններ, Երրորդ Անձանց Ապրանքներ կամ Երրորդ Անձանց Ծառայություններ:

(խ) In-App Ապրանքները և BlackBerry Վճարումային Ծառայությունը. BlackBerry Վճարումային Ծառայությունը հնարավորություն է տալիս Առաջարկ Կատարող Անձանց Ձեզ հասանելի դարձնել թվային ապրանքներ և ծառայություններ՝ օգտվելով Երրորդ Անձանց Ծրագրաշարերից կամ Ծրագրաշարերից: Դուք գիտակցում և ընդունում եք, որ երրորդ անձանց In-App Ապրանքները չեն պահեստավորվում RIME սպասարկիչներում, չեն տարածվում RIME Store ծառայության միջոցով: Դուք ընդունում եք, որ Առաջարկը Կատարող Անձի և ոչ թե RIME պարտավորությունն է կատարել In-App Ապրանքների պատվերները և Ձեզ առաքել In-App Ապրանքները:

10. My World. RIM Ծառայության կամ Երրորդ Անձանց Ծառայության միջոցով Ծրագրաշարերը կամ Երրորդ Անձանց Ապրանքները ներբեռնելուց հետո Ձեզ է անցնում դրանց կորստի, ոչնչացման կամ վնասվելու ռիսկը: RIM և վերջինիս հետ փոխկապակցված անձիք պատասխանատվության չեն կրում դրա համար: My World-ը իրավապես ծառայությունը հնարավորություն է տալիս այդ ծառայության կիրառելի կանոնների համաձայն Ձեր Սարքից հեռացնել և նորից տեղադրել որոշ Ծրագրաշարեր և Երրորդ Անձանց Ապրանքներ: Դուք համաձայնում և ընդունում եք, որ My World ծառայության կանոնները, դրա այս կամ այն ֆունկցիոնալ հնարավորությունները կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխման ենթարկվել: Դուք համաձայնում եք հետևել ծառայություններից օգտվելու ընթացիկ կանոններին:

11. Մտավոր սեփականություն. Սույնով Ձեզ և Ձեր Արտոնված Օգտագործողներին Ձեր BlackBerry Լուծումների, դրանց այս կամ այն մասի, ինչպես նաև սույն Պայմանագրի համաձայն RIM Ծառայությունների շրջանակներում RIM, վերջինիս հետ փոխկապակցված անձանց և նրանց մատակարարների կողմից տրամադրված Պարունակությունների նկատմամբ մտավոր սեփականության և այլ բացառիկ իրավունքներ, ներառյալ

արտոնագրերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքների, տվյալների բազաների, խորհրդապահական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների նկատմամբ սեփականության, տիրոջության և այլ բնույթի իրավունքներ չեն փոխանցվում: Ձեր BlackBerry Լուծումների, դրանց այս կամ այն մասի, ինչպես նաև RIM Ծառայությունների միջոցով Ձեզ հասանելի դարձված Պարունակությունների նկատմամբ Ձեզ վերապահված լիցենզիոն իրավունքները սահմանափակվում այն իրավունքներով, որոնք Ձեզ են վերապահվել սույն Պայմանագրով, համապատասխան Փաստաթղթերով և RIM և Ձեր միջև փոխհամաձայնեցված և գրավոր կերպով ստորագրված այլ պայմանագրերով: Սույն պայմանագրով RIM Ապրանք(ներ)ի (եթե այդպիսիք կան) նկատմամբ սեփականության և/կամ տիրապետման ոչ մի իրավունք Ձեզ չի փոխանցվում: Սույն Պայմանագրով Բետա Սարքաշարերի նկատմամբ սեփականության ոչ մի իրավունք Ձեզ չի փոխանցվում: Սույնով չնախատեսված իրավունքները պահպանվում են հոգուտ իրավատերերի: Երկխմաստություններից խուսափելու նպատակով և չնայած սույն Պայմանագրով այլ բան նախատեսված լինելուն տեղեկացնում ենք, որ Ծրագրաշարերի նկատմամբ սույնով վերապահված լիցենզիոն իրավունքները ոչ մի դեպքում չեն վերաբերում և չեն կարող մեկնաբանվել այնպես, որ վերաբերեն Երրորդ Անձանց Ծառայությունների կամ Երրորդ Անձանց Ապրանքների օգտագործմանը, անկախ այն հանգամանքից, թե դրանք օգտագործվում են որպես առանձին միավորներ, թե՝ Ձեր BlackBerry Լուծումների հետ մեկտեղ: Չսահմանափակելով վերոհիշյալ դրույթների գործողությունը՝ տեղեկացնում ենք նաև, որ սույնով վերապահված լիցենզիոն իրավունքները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ Երրորդ Անձանց Ծառայություններ և Երրորդ Անձանց Ապրանքներ մատակարարող անձիք կարողանան հավակնություններ ներկայացնել, թե Երրորդ Անձանց Ծառայությունների կամ Երրորդ Անձանց Ապրանքների օգտագործման իրավունքը (անկախ այն հանգամանքից, թե դրանք օգտագործվում են Ձեր BlackBerry Լուծումներ ի կամ դրանց այս կամ այն մասի հետ մեկտեղ, թե՝ որպես առանձին միավորներ) վերապահվել է RIM արտոնագրով սույն Պայմանագրի համաձայն Ծրագրաշարերն օգտագործելու լիցենզիոն իրավունքներ Ձեզ տրամադրելու միջոցով: Ծրագրաշարերը ներառյալ Ձեր կողմից դրանց պատրաստված պատճենները չեն վաճառվում Ձեզ: Ձեզ ընդամենը վերապահվում է դրանց օգտագործման իրավունքը: Բոլոր Ծրագրաշարերը, Փաստաթղթերը, RIM Ծառայությունների շրջանակներում RIM և վերջինիս հետ փոխկապակցված անձանց կողմից տրամադրված Պարունակությունները և բոլոր այն կայքերը, որոնք հնարավորություն են տալիս Ձեզ մատչել RIM Ծառայությունները, պաշտպանված են հեղինակային և արտոնագրային իրավունքների մասին կանոնական, ամերիկյան և միջազգային օրենքներով ու միջազգային պայմանագրերով: Մտավոր սեփականության իրավունքների խախտման համար սահմանված են ծանր պատժամիջոցներ՝ քրեական և քաղաքացիական: Դուք համաձայնում և ընդունում եք, որ սույն Պայմանագրով ոչինչ չի կարող բացասաբար ազդել մտավոր և բացառիկ իրավունքների պաշտպանության ոլորտում կիրառելի օրենքների համաձայն RIM և RIM Ծառայությունների համար Պարունակություններ մատակարարող անձանց ունեցած իրավունքների և

իրավական պաշտպանության միջոցների ծավալի վրա, այդ թվում նաև դատական ագրեյթներից օգտվելու նրանց հնարավորության վրա:

12. Արտահանման, Ներմուծման և Օգտագործման Սահմանափակումները և ԱՄՆ Կառավարության Աշխատակիցներին Վերապահվող Իրավունքները. Դուք համաձայնում և ընդունում եք, որ RIM Ապրանքները և Ծրագրաշարերը կարող են պարունակել գաղտնագրող տեխնոլոգիաներ: Դուք համաձայնում և ընդունում եք նաև, որ RIM Ապրանքները և Ծրագրաշարերն կարող են արտահանվել, ներմուծվել, օգտագործվել, փոխանցվել և վերաարտահանվել միայն համապատասխան երկրների իշխանությունների կողմից հրապարակված կիրառելի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջներին համապատասխան: Դուք երաշխավորում եք, որ (Ա) Ձեզ հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնք թույլ չէին տա Ձեզ կիրառելի օրենքներին համապատասխան ստանալ RIM Ապրանքները և Ծրագրաշարերը, Բ՛) Դուք չեք օգտագործի RIM Ապրանքները և Ծրագրաշարերը քիմիական, կենսաբանական և միջուկային զենք, այդպիսի զենք կրող հրթիռներ, նման զենքերում և հրթիռներում օգտագործվող նյութեր և սարքավորումներ նախագծելու, արտադրելու, կառավարելու, սպասարկելու, հայտնաբերելու, նույնացնելու, տարածելու կամ դրանց վերաբերող տվյալները պահեստավորելու նպատակներով: Դուք RIM Ապրանքները և Ծրագրաշարերը չեք վերավաճառի և չեք արտահանի այնպիսի անձանց, որոնք ներգրավված են նման գործունեության մեջ, և (Գ) Դուք կապահովեք, որպեսզի Ձեր Արտոնված Օգտագործողները RIM Ապրանքները և Ծրագրաշարերը օգտագործեն վերոգրյալ սահմանափակումների հաշվառմամբ: Եթե Դուք ԱՄՆ Կառավարության գործակալություն եք, և եթե Ձեր և RIM միջև այլ բան նախատեսված չէ գրավոր կազմված և RIM գործադիր տնօրենի կամ RIM տեխնիկական և արտադրության գծով տնօրենի կողմից ստորագրված պայմանագրով, ապա Ծրագրաշարերի մասով Ձեզ վերապահված իրավունքները չեն կարող գերազանցել սույն Պայմանագրով վերապահված իրավունքների ծավալը, անկախ օրենքով կամ երրորդ անձանց հետ ստորագրված պայմանագրերով նախատեսված դրույթներից:
13. Անվտանգություն, հաշվեհամարներ և գաղտնագրեր. Դուք համաձայնում եք ինքներդ Ձեր ուժերով ձեռնարկել անվտանգության այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան վերահսկել դեպի Ձեր Սարք և դրա հետ աշխատող համակարգիչներ կատարվող մուտքերը: Զսահմանափակելով վերոհիշյալ դրույթների գործողության ոլորտը՝ սույնով Ձեզ խրախուսում ենք ընտրել հուսալի գաղտնագրեր, հուսալի և գաղտնի պահել բոլոր այն գաղտնագրերը, որոնց միջոցով մատչում եք Ձեր BlackBerry Լուծումները, դրանց այս կամ այն մասերը, ինչպես նաև դրան ցից օգտվելու կապակցությամբ օգտագործվող հաշվեհամարները: Դուք համաձայնում և ընդունում եք, որ Ձեր գաղտնագրերի գործադրմամբ Ձեր հաշվեհամարների միջոցով կամ դրանցում տեղի ունեցող բոլոր գործողությունների համար պատասխանատվությունը կրում եք անձամբ Դուք, ներառյալ դրանցից բխող կամ դրանց հետ կապված վճարումներ կատարելու և այլ պարտավորությունների համար: Դուք համաձայնում եք անհապաղ RIM-ին տեղյակ պահել Ձեր BlackBerry Լուծումների այս կամ այն

մասի գաղտնագրերի, Ձեր BlackBerry Լուծումների, դրանց այս կամ այն մասերի չարտոնված գործածումների մասին՝ կապվելով RIM Հաճախորդների Սպասարկման Բաժնի հետ (կոնտակտային տվյալները կարելի է գտնել www.blackberry.com/support կայքում): Այդպիսի ծանուցում ստանալուց հետո, RIM կարող է, սակայն պարտավոր չէ, ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք անհրաժեշտ կհամարի: Դուք համաձայնում և ընդունում եք, որ նշված կարգով RIM ծանուցված լինելու հանգամանքը Ձեզ չի ազատում Ձեր գաղտնագրերի գործադրմամբ Ձեր հաշվեհամարների միջոցով կամ դրանցում տեղի ունեցող բոլոր գործողությունների համար պատասխանատվությունից:

14. Գողացված, կորցված, նոր սարքեր. պահեստային օրինակներ, հեռացված տեղեկություններ.
- (ա) Գողացված, կորցված սարքեր. Եթե կարծում եք, որ Ձեր Սարքը գողացել են, դիմեք օրինապահ մարմիններին: Եթե Ձեր Սարքը կորել է կամ կարծում եք, որ այն գողացել են, և եթե այդ Սարքն օգտագործել էք RIM Ծառայություններ ստանալու նպատակով բաժանորդագրվելու համար, ինչպես օրինակ՝ BlackBerry Protect Ծառայությունը, որը հնարավորություն է տալիս տեղակայել, արգելափակել Սարքը կամ տարածության մեջ ջնջել Սարքի մեջ պահեստավորված տվյալները, ապա Դուք պարտավոր եք քայլեր ձեռնարկել այդ ծառայության միջոցով Ձեր Սարքը տեղակայելու, արգելափակելու կամ դրա մեջ պահեստավորված տվյալները ջնջելու ուղղությամբ: Չնայած վերոգրյալին և չսահմանափակելով 22-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության բացառման վերաբերյալ դրույթների գործողությունը՝ սույնով հայտնում եք, որ RIM, վերջինիս հետ փոխկապակցված անձիք չեն կարող երաշխավորել (i) տեղակայման տվյալների, տեղակայման ծառայությունների միջոցով ստացված տեղեկությունների ճշգրտությունը, հասանելիությունը, անթերիությունը, հուսալիությունը և արդիական լինելը, (ii) որ տարածության մեջ Սարքն արգելափակելու, դրա մեջ պահեստավորված տվյալները ջնջելու և նման ֆունկցիոնալ հնարավորությունները անխափան կկատարեն դրված հանձնարարությունները, քանզի Անլար Ծառայությունների ծածկույթը, Ձեր Սարքի վիճակը, համակարգի ռեսուրսներն իմանալն անհնար է նախօրոք:
- (բ) Պահեստային օրինակներ և հեռացված տեղեկություններ. RIM խորհուրդ է տալիս պատրաստել էլ. փոստով առաքված բոլոր նամակների, Ձեր կողմից գնված բոլոր Պարունակությունների, Երրորդ Անձաց Ծրագրաշարերի և Ձեր Սարքում պահեստավորված այլ տվյալների ու տեղեկությունների պահեստային օրինակները, պայմանով, որ նման իրավունք Ձեզ վերապահված է, քանի որ դրանք հաճախ RIM կամ վերջինիս հանձնարարությամբ մեկ այլ անձի կողմից չեն պահեստավորվում և դրանց պահեստային օրինակներ նրանց կողմից չի պատրաստվում: Ձեր Սարքն այս կամ այն, ներառյալ վերանորոգման նպատակով, այլ անձանց փոխանցելու դեպքում (ինչպես դա թույլատրված է BlackBerry Լուծումներն Օգտագործելու Լիցենզային Պայմանագրով) Ձեր տվյալները և տեղեկությունները հասանելի կլինեն այն անձանց, ում փոխանցում եք Սարքը, եթե նախօրոք չեք հեռացրել դրանք և

լրացուցիչ հիշողության սարքերը: Եթե Սարքը դրանում եղած տվյալները և տեղեկությունները հեռացվելուց և այլ անձանց փոխանցվելուց հետո վերադարձվում է Ձեզ, ապա Դուք պարտավոր եք նորից տեղադրել բոլոր այն ծրագրաշարերը, որոնք ի սկզբանե Սարքի մեջ տեղադրված չեն եղել:

(գ) Ծառայությունների անջատումը. Որոշ RIM Ծառայություններ, ինչպես օրինակ՝ BlackBerry Protect-ը և BlackBerry Ինտերնետային Ծառայությունը հնարավորություն են տալիս անջատել այդ ծառայությունները Ձեր Սարքից: Եթե Ձեր Սարքը կորել է կամ այն գողացել են, կամ Դուք այն փոխանցել եք այլ անձանց, կամ եթե Դուք այլևս չեք ցանկանում, որ Ձեր Սարքը կապված լինի այդ ծառայությունների հետ, ապա անջատեք այդ ծառայությունները Ձեր Սարքից:

15. Գաղտնիությունը և Ապաքանաքաղման Արգելքը. Դուք համաձայնում և ընդունում եք, որ (ա) RIM և/կամ RIM Ընկերությունների Խումբը զգալի ժամանակ և գումարներ են վատնել BlackBerry Լուծումների մշակման համար, և (բ) որ RIM Ապրանքները, RIM Ծառայությունները, Ծրագրաշարերը, դրանց հետ կապված Մատչելու Լիցենզիաները (CAL) և Բետա Ապրանքները պարունակում են գաղտնի տեղեկություններ, ներառյալ RIM-ին, RIM Ընկերությունների Խմբին և վերջիններիս մատակարարներին պատկանող առևտրային գաղտնիքներ: Չսահմանափակելով վերոգրյալի գործողության ոլորտը՝ սույնով տեղեկացնում ենք, որ Բետա Ապրանքների մասով գաղտնի տեղեկություններ են համարվում ծրագրաշարերի և սարքաշարերի արտաքին տեսքը և ոճը, ֆունկցիոնալ հնարավորությունները, յուրահատկությունները, տեխնիկական բնութագրերը, աշխատանքի կատարողականությունը և ֆունկցիաները: Դուք և Ձեր Արտոնված Օգտագործողները չեք կարող քննարկել և ցուցադրել դրանք այլ անձանց մինչև RIM կողմից դրանց շուկա դուրս բերելը: Սույնով Ձեզ իրավունք չի վերապահվում RIM-ից, վերջինիս հետ փոխկապակցված անձանցից կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցիչներից ստանալ Ծրագրաշարերի, RIM Ծառայությունների, Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների սկզբնաղբյուրի այլագրերը (source code), և եթե չկան ստորև նշված սահմանափակումներն օրենքով արգելող դրույթներ, ապա Դուք համաձայնում եք, որ Դուք և Ձեր Արտոնված Օգտագործողները չեք վերափոխի, չեք ձևափոխի, չեք հարմարեցնի, չեք թարգմանի, չեք Ապաքանաքաղի (reverse engineer) Ծրագրաշարերը, դրանց հետ կապված Մատչելու Լիցենզիաները, RIM Ծառայությունները, Երրորդ Անձանց Ապրանքները և Երրորդ Անձանց Ծառայությունները, դրանցից չեք պատրաստի ածանցյալ աշխատանքի օբյեկտներ, չեք ջնջի դրանց վրայի իրավունքների մասին ծանուցումները, չեք փորձի կատարել նշված գործողությունները, ինչպես նաև թույլ չեք տա, չեք արտոնի այլ անձանց և չեք համաձայնի ու չեք քաջալերի նրանց, որպեսզի վերջիններս էլ կատարեն նշված գործողություններից որևէ մեկը: Սույն Պայմանագրի իմաստով «Ապաքանաքաղել» նշանակում է ցանկացած գործողություն, որը նպատակ է հետապնդում ապաքանաքաղել, թարգմանել, ապամոնտաժել, տարանջատել, վերծանել կամ ապակազմավորել (ներառյալ տպագրել RAM/ROM կամ մշտական հիշողության պարունակությունը,

գաղտնի տվյալների հայտնաբերման նպատակով վերլուծել տվյալների հաղորդման լարային կամ անլար ուղիները կամ ապաքանաքաղել «սև արկղերը») տվյալները, տեղեկությունները, ծրագրաշարերը (ներառյալ միջերեսները, հաղորդակարգերը և ցանկացած այլ տվյալներ, որոնք ներառված են կամ օգտագործվում են ծրագրերի զուգակցությամբ, անկախ այն հանգամանքից, թե դրանք կարող են տեխնիկապես համարվել ծրագրաշարերի այլագրեր, թե՛ ոչ), ծառայությունները, սարքաշարերը, ի նչպես նաև տեղեկություններ, տվյալներ և ծրագրաշարեր ստանալու կամ դրանք մի ձևից մարդու համար հասկանալի մեկ այլ ձևի վերափոխելու մեթոդները կամ պրոցեսները:

16. Գործողության Ժամկետը. Սույն Պայմանագիրն (սահմանումը բերված է ներածական մասում) ուժի մեջ է մտնում դրա դրույթները Ձեր կողմից ընդունվելու պահից: Այն կշարունակի մնալ ուժի մեջ մինչև չլուծվի սույն Պայմանագրով նախատեսված դեպքերում:

17. Իրավական Պաշտպանության Միջոցները և Պայմանագրի Լուծումը.

Ի լրումն սույն Պայմանագրով նախատեսված RIM այլ իրավունքներին և իրավական պաշտպանության միջոցներին, տեղեկացնում ենք, որ.

(ա) Եթե Դուք կամ Ձեր Արտոնված Օգտագործողները խախտեք սույն Պայմանագրի դրույթները, RIM կամ վերջինիս գործակալը կարող են, սակայն պարտավոր չեն, ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կհամարեն անհրաժեշտ: Այդպիսի միջոցներից կարող են լինել Պարունակությունների ժամանակավորապես կամ մեկընդմիջտ հեռացումը, ինտերնետային հաղորդումների մասնակի կամ ամբողջական արգելափակումը և/կամ Ձեր BlackBerry Լուծումների, դրանց այս կամ այն մասերի, ինչպես նաև դրանց զուգակցությամբ օգտագործվող Երրորդ Անձանց Ապրանքների անհապաղ կասեցումը կամ դադարեցումը:

(բ) Ի լրումն սույն Պայմանագրով կամ օրենքով իրեն վերապահված մնացած բոլոր իրավունքներին և իրավական պաշտպանության միջոցներին RIM կարող է (i) անհապաղ լուծել սույն Պայմանագիրը և Ձեր կամ Ձեր Արտոնված Օգտագործողների կողմից BlackBerry Լուծումների այս կամ այն մասերը Ծրագրաշարերի զուգակցությամբ օգտագործելու կապակցությամբ Ձեր և RIM միջև կնքված այլ լիցենզային պայմանագրերը, եթե Դուք խախտել եք սույն Պայմանագրի, Հավելվածների և Ձեր ու RIM միջև կնքված ցանկացած այլ պայմանագրերի դրույթները, ներառյալ այն դեպքում, երբ Դուք սահմանված օրվանից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում չեք կատարել նախատեսված բոլոր վճարումները և/կամ (ii) դադարեցնել Ձեր BlackBerry Լուծումների առնչությամբ Ձեզ կամ Ձեր Արտոնված Օգտագործողներին տրամադրվող RIM Ծառայության(ների) մատուցումը: Եթե Դուք RIM-ին տրամադրել եք ստույգ կոնտակտային տվյալներ, ապա RIM ողջամիտ քայլեր կձեռնարկի Ձեզ վերոգրյալի վերաբերյալ ծանուցում տրամադրելու համար:

- (գ) Եթե BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերը նախատեսված են եղել Ձեզ հնարավորություն ընձեռել մատչել Երրորդ Անձանց Ծառայությունները, և եթե Երրորդ Անձանց Ծառայություններն այս կամ այն պատճառով այլևս Ձեզ չեն մատուցվելու, ապա RIM կարող է, սակայն պարտավոր չէ, ցանկացած ժամանակ առանց ծանուցման կամ ծանուցմամբ դադարեցնել BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի օգտագործման լիցենզային պայմանագրերը: Ինչնիցե, RIM, հնարավորության դեպքում, ողջամիտ քայլեր կձեռնարկի պայմանագիրը լուծելու վերաբերյալ Ձեզ ծանուցում տրամադրելու նպատակով: Եթե Դուք վճարել եք BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի համար և եթե Դուք չեք խախտել սույն Պայմանագրի դրույթները, ապա հնարավոր է, որ Դուք իրավունք ունենաք ետ ստանալ դրանց համար վճարված գումարները կամ դրանց մի մասը: Եթե որոշում ընդունվի գումարները ետ վերադարձնելու վերաբերյալ, ապա Դուք գումարները կամ դրանց մի մասը կարող եք ետ ստանալ ապրանքները վերադարձնելու վերաբերյալ այդ պահին գործող կանոնակարգի BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերին վերաբերող դրույթներին համապատասխան: Նման պարագայում գումարի վերադարձը (եթե այն վերադարձվի) կլինի Ձեր միակ իրավունքը և RIM միակ պարտավորությունը Ձեր հանդեպ:
- (դ) Ի լրումն վերոգրյալին RIM կարող է առանց Ձեր կամ Ձեր Արտոնված Օգտագործողների նկատմամբ որևիցե պատասխանատվություն կրելու լուծել սույն Պայմանագիրը և/կամ անհապաղ դադարեցնել RIM Ծառայության(ների) մատուցումը, եթե օրենքով, ենթաօրենսդրական ակտերով կամ դատական կամ իշխանության այլ մարմինների կողմից արձակված պահանջների կամ որոշումների (ինչպիսի տեսքով էլ որ դրանք լինեն) կամ կառավարական որևիցե գործակալության կամ դեպարտամենտի ծանուցման համաձայն ամբողջությամբ կամ մասամբ արգելվի RIM կողմից RIM Ծառայությունների մատուցումը: Սույն Պայմանագրով նախատեսված ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ պարտավորեցնի RIM-ին ապահովել, որպեսզի համապատասխան մարմինները հրաժարվեն կիրառել այդ օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սահմանափակումները և կանոնակարգերը կամ բողոքարկել դատական իշխանությունների կողմից կայացված ակտերը: Հնարավորության դեպքում RIM ողջամիտ քայլեր կձեռնարկի Պայմանագիրը լուծելու և/կամ RIM Վճարովի Ծառայությունների մատուցումը դադարեցնելու դեպքում Ձեզ 30 օր առաջ այդ մասին ծանուցում տրամադրելու համար:
- (ե) Եթե սույն Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա RIM Ձեր և Ձեր Արտոնված Օգտագործողների նկատմամբ ոչ մի պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրի լուծման, ինչպես նաև դրանով վերապահված իրավունքների, լիցենզիոն իրավունքների դադարեցման համար:
- (զ) Սույն Պայմանագրի լուծման համար դատական կամ վարչական մարմինների համաձայնությունը, հավանությունը կամ որոշումները չեն պահանջվում:

18. Պայմանագիրը Լուծելու Հետևանքները. Ցանկացած պատճառով սույն Պայմանագիրը լուծվելու, RIM Ծառայությունների մատուցումը դադարեցվելու, Ձեր բաժանորդագրության կամ փորձնական օգտագործման ժամկետները լրանալու, այդ թվում նաև Բետա Ապրանքների փորձնական օգտագործման ժամկետները լրանալու կամ դադարեցվելու դեպքում (ա) Դուք անմիջապես կդադարեցնեք Ծրագրաշարերի և RIM Ծառայությունների օգտագործումը, իսկ եթե Պայմանագիրը չի լուծվել, ապա Ծրագրաշարերի և RIM Ծառայությունների այն մասերի օգտագործումը, որոնց համար տրամադրված լիցենզիոն իրավունքները և որոնց մատուցումը դադարեցվել են կամ որոնց գործողության/մատուցման ժամկետները լրացել են: Այդ դեպքում Դուք կվերադարձնեք Ձեր կամ Ձեր Արտոնված Օգտագործողների տիրապետության և վերահսկողության ներքո գտնվող այդ Ծրագրաշարերի օրինակները, իսկ Բետա Ապրանքների դեպքում նաև՝ համապատասխան Բետա Սարքաշարերը, և (բ) RIM իրավունք կունենա առանց Ձեզ ծանուցելու արգելափակել նման Ծրագրաշարերի և RIM Ծառայությունների միջոցով տվյալների փոխանցումները: RIM մոտ Ձեր ունեցած հաշվեհամարները փակելու դեպքում Դուք արտոնում եք RIM-ին առանց Ձեզ ծանուցելու ջնջել այդ հաշվեհամարի հետ կապված բոլոր ֆայլերը, ծրագրերը, տվյալները և էլ. փոստային նամակները: Դուք պատասխանատվություն եք կրում մինչև և ընդհուպ նաև լուծման օրը այդ Ծրագրաշարերի, RIM Ծառայությունների, Երրորդ Անձանց Ապրանքների մասով կուտակված վճարային պարտավորությունների, այդ թվում նաև Ձեր Արտոնված Օգտագործողներին դրանց առնչությամբ ներկայացված հաշիվների համար: RIM կողմից սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան Պայմանագիրը լուծվելու դեպքում Դուք RIM-ին կփոխհատուցեք վերջինիս կողմից սույնով իրեն վերապահված իրավունքներն իրականացնելու կապակցությամբ կատարված վճարները և կրած բոլոր ծախսերը (ներառյալ փաստաբանի՝ ողջամտորեն հաշվարկված վճարները ու ծախսերը): Չնայած վերոգրյալին և, հաշվի առնելով Ծրագրաշարերի էությունը, հնարավոր է, որ Ծրագրաշարերը վերադարձնելն անհնար լինի զուտ այն պատճառով, որ դրանք ներկառուցված են Ձեզ պատկանող սարքաշարերի (ինչպես օրինակ՝ Սարքերի) մեջ և/կամ տեղադրված են աշխատանքային էկրանի վրա կամ սպասարկչի մեջ այնպես, որ այն, ինչ որ Դուք կարողանաք վերադարձնել, կլինի միայն դրանց հետագա վերարտադրությունը: Նման պարագայում խնդրում ենք լրացուցիչ ցուցումներ ստանալու նպատակով կապվել RIM հետ հետևյալ հասցեով. legalinfo@rim.com:

19. Փոխհատուցում/Պատասխանատվություն. Դուք պարտավոր եք RIM, RIM Ընկերությունների Խմբին, RIM հետ փոխկապակցված անձանց, RIM մատակարարներին, իրավահաջորդներին, գործակալներին, պաշտոնական ներկայացուցիչներին կամ ցեսիոնարներին, նրանցից յուրաքանչյուրի տնօրեններին, ղեկավարներին, աշխատակիցներին և նրանց հետ պայմանագրային հարաբերություններ մեջ գտնվող անձանց (այսուհետ յուրաքանչյուրը՝ Փոխհատուցում Ստանալու Իրավունք Ունեցող RIM Անձ) փոխհատուցել և նրանց պաշտպանել ու զերծ պահել բոլոր տեսակի վնասներից, կորուստներից և ծախսերից (ներառյալ, սակայն ոչ միայն,

փաստաբանի՝ ողջամտորեն հաշվարկված վճարներից ու ծախսերից), ինչպես նաև Փոխհատուցում Ստանալու Իրավունք Ունեցող RIM Անձանց պահանջով Ձեր հաշվին իրականացնել նրանց դեմ երրորդ անձանց կողմից ներկայացված հայցերի հիմքով հարուցված բոլոր այն դատական գործերի պաշտպանությունը, որոնք բխում են կամ կապված են (ա) այլ սարքերը (բացառությամբ BlackBerry Սարքերի), համակարգերը կամ ծառայությունները Ձեր BlackBerry Լուծումների կամ դրանց այս կամ այն մասերի զուգակցությամբ օգտագործելու հետևանքով արտոնագրային, մտավոր սեփականության կամ բացառիկ այլ իրավունքները խախտելու, (բ) սույն Պայմանագրի կամ դրա հավելվածների պահանջները չկատարելու հետ: Սույնով RIM-ին վերապահված իրավական պաշտպանության միջոցները չեն բացառում և չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառեն սույն Պայմանագրով, օրենքով կամ արդարությամբ վերապահված մյուս բոլոր իրավական պաշտպանության միջոցների գոյությունը: Իրավական պաշտպանության բոլոր այդ միջոցները լրացնում են մեկ մյուսին:

20. Սահմանափակ Երաշխիք.

(ա) Ծրագրաշարեր.

- (i) Եթե Ծրագրաշարերը RIM կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցիչների կողմից Ձեզ առաքված լինելուց հետո 90 (իննսուն) օրվա ընթացքում (այսուհետ՝ Երաշխիքային Ժամկետ) սովյալ տեսակի և տարաբերակի Ծրագրաշարերին վերաբերող Փաստաթղթերում RIM կողմից սահմանված ձևով Ձեր BlackBerry Լուծումների չվերափոխված մասերի զուգակցությամբ օգտագործելիս չաշխատեն այնպես, ինչպես նկարագրված է վերջնական օգտագործողների համար նախատեսված ստանդարտ Փաստաթղթերում (այսուհետ՝ «Տեխնիկական Շահագործման Ձեռնարկներ»), ապա RIM իր հայեցողությամբ և ընտրությամբ ողջամիտ ջանքեր կգործադրի անսարքությունը շտկելու կամ Ձեզ անսարքությունն ուղղելու նպատակով լուծումներ (անսարքությունների շտկման կամ ուղղման այդ լուծումները RIM հայեցողությամբ Ձեզ կարող են տրամադրվել մեկ կամ մի քանի ձևով ներառյալ հեռախոսի կամ էլ.փոստի միջոցով հաճախորդների սպասարկում իրականացնելու, համընդհանուր օգտագործման համար նախատեսված վրիպակների շտկման ծրագրեր թողարկելու, RIM կայքի կամ ցանկացած այլ միջոցով, որոնց մասին RIM Ձեզ կտեղեկացնի) տրամադրելու համար կամ էլ Ձեզ կվերադարձնի համապատասխան Ծրագրաշարերի համար Ձեր կողմից վճարված միանվագ գումարները պայմանով, եթե Դուք դադարեցնեք Ծրագրաշարերի օգտագործումը և Երաշխիքային Ժամկետի ընթացքում երաշխիքային ապրանքանքների համար սահմանված վերադարձման ընթացակարգի համաձայն (ինչը կարող է լինել Ձեզ Անլար Ծառայություններ Մատուցող Անձի կամ գնման կետի միջոցով) RIM-ին վերադարձնեք կրիչը, որի վրա Ծրագրաշարերը

Ձեզ են տրամադրվել, դրանց բոլոր փաթեթվածքները և գնման փաստը հավաստող փաստաթղթերը: Վերոգրյալ դրույթները կիրառելի կլինեն միայն այն դեպքում, եթե Ծրագրաշարերը գտնվել են այն վիճակում, որում Դուք դրանք ստացել եք RIM կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցիչների կողմից:

- (ii) Չնայած սույն Պայմանագրով այլ բան նախատեսված լինելուն Ձեզ անվճար տրամադրված արդիացումները, թարմացումները և Բետա Ապրանքները տրամադրվում են «այնպես, ինչպես կան» առանց որևիցե երաշխիքների:
- (iii) Այն արդիացումների և թարմացումների համար, որոնց համար Դուք վճարել եք լրացուցիչ լիցենզային վճարներ, սահմանվում է երաշխիք՝ վերոհիշյալ պայմաններով: Տվյալ պարագայում երաշխիքային ժամկետը սահմանվում է 90 (իննսուն) օր՝ հաշված Ծրագրաշարերի թարմացումները Ձեզ առաքվելու օրվանից:
- (iv) Վերոգրյալ երաշխիքը կիրառելի չէ, եթե Ծրագրաշարերը Տեխնիկական Շահագործման Ձեռնարկներում սահմանված կերպ չեն աշխատում. (Ա) դրանք սույն Պայմանագրով նախատեսված Ձեր պարտավորությունների կամ էլ Ծրագրաշարերի համապատասխան տեսակին և տարբերակին վերաբերող Փաստաթղթերում RIM կողմից սահմանված ցուցումների, այդ թվում նաև անվտանգության հրահանգների խախտմամբ օգտագործելու հետևանքով կամ (Բ) այնպիսի անսարքության կամ խնդրի հետևանքով, որը կապված է սարքաշարերի (ներառյալ Երրորդ Անձանց անպատշաճ որակի Սարքերի), ցանցերի, ծրագրաշարերի կամ հեռահաղորդակցության համակարգերի հետ (անպատշաճ որակի BlackBerry Սարքերի վերանորոգումը կատարվում է դրանց համար սահմանված երաշխիքի/տեխնիկական սպասարկական պայմանավորվածությունների համաձայն) կամ (Գ) Ծրագրաշարերի, դրանց կրիչների վրա արտաքին գործոնների ունեցած անբարենպաստ ազդեցության հետևանքով: Այդպիսի արտաքին գործոններից կարող են լինել օրինակ վթարները, տարերային աղետները, էլեկտրաստատիկ լիցքաթափումը, հրդեհները, ջրհեղեղները, կայծակը, ջուրը, քամին, Ծրագրաշարեր չհամարվող ծրագրաշարերի վրիպակների ուղղումները, RIM կողմից չարտոնված վերանորոգումների կամ վերափոխումների արդյունքում ի հայտ եկած թերությունները:
- (v) Թույլիմացություններից խուսափելու նպատակով հայտնում ենք, որ եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա սույն երաշխիքը տարածվում է նոր Սարքերի մեջ տեղադրված BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի վրա, այն չի տարածվում օգտագործված կամ վերանորոգված Սարքերի մեջ տեղադրված BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի վրա:

- (vi) Սույնով ոչ մի երաշխիք չի սահմանվում Ծրագրաշարերի՝ երկրորդային շուկայից անվճար ներբեռնված լրացուցիչ մասերի, ինչպես նաև անվճար տրամադրված BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարերի համար: Եթե այդ Ծրագրաշարերի այս կամ այն մասերը Ձեր Սարքի կամ համակարգչի մեջ տեղադրելուց հետո 90 (իննսուն) օրվա ընթացքում չաշխատեն այնպես, ինչպես նախատեսված է համապատասխան Փաստաթղթերում, ապա Դուք կարող եք կապվել RIM հետ, և RIM կորոշի, թե այդ Ծրագրաշարերի մասով աջակցություն ցուցաբերվու ինչպիսի տարբերակներ գոյություն ունեն, եթե այդպիսիք ընդհանրապես գոյություն ունեն (աջակցությունը RIM ողջամիտ հայեցողությամբ Ձեզ կարող է ցուցաբերվել մեկ կամ մի քանի ձևով ներառյալ հեռախոսի կամ էլ.փոստի միջոցով հաճախորդների սպասարկում իրականացնելու, համընդհանուր օգտագործման համար վրիպակները շտկելու ծրագրեր թողարկելու, RIM կայքի կամ ցանկացած այլ միջոցով, որոնց մասին RIM Ձեզ կտեղեկացնի):

- (vii) Դուք համաձայնում և ընդունում եք, որ այն դեպքերում, երբ Ծրագրաշարերը Ձեզ են տրամադրվում Երրորդ Անձանց Ապրանքներից օգտվելու կամ Երրորդ Անձանց Ծառայությունները մատչելու համար, ապա հնարավոր է, որ RIM հնարավորություն չունենա վերահսկել Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների աշխատանքը և չաշխատելու պատճառները կամ եթե նույնիսկ ինչ-որ վերահսկողություն ունենա, ապա հնարավոր է, որ դա լինի շատ սահմանափակ, և հնարավոր է, որ Ձեր կողմից այս Ծրագրաշարերի հետ կապված խնդիրներ հայտնաբերվելու դեպքում RIM հանավորություն չունենա ուղղել դրանք կամ դրանք շտկելու համար լուծումներ տրամադրել: RIM երաշխիք չի տրամադրում Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների համար, այդ հարցում Դուք պետք է դիմեք այդ ապրանքները և ծառայությունները մատակարարող անձանց: Երաշխիքները կարող են տարբեր լինել՝ կախված այն հանգամանքից, թե ում կողմից են տրամադրվել, իսկ նույն անձի կողմից տրամադրված լինելու դեպքում՝ կանխված այն հանգամանքից, թե որ երկրում եք Դուք բնակվում: Ապրանքների և ծառայությունների սպասարկման, դրանց մասով ցուցաբերվող աջակցության վերաբերյալ տեղեկություններ կարող եք գտնել այդ ապրանքներին և ծառայություններին վերաբերող փաստաթղթերում կամ դրանք մատակարարող անձանց պայմաններում: Այդտեղ Դուք կարող եք գտնել նաև տեղեկություններ Ձեր իրավունքների և երաշխիքների վերաբերյալ:

- (viii) Սույն բաժնում սահմանվում են Ծրագրաշարերի, դրանց թերությունների, վրիպակների, դրանց հետ կապված խնդիրների և դրանց համար սահմանված երաշխիքների խախտման

կապակցությամբ RIM բացառիկ պարտականությունները և Ձեր՝ իրավական պաշտպանության բացառիկ միջոցները:

(բ) Ապրանք(ներ). Ապրանք(ներ)ի սահմանափակ երաշխիքի (այսուհետ՝ Ապրանքների Սահմանափակ Երաշխիք), եթե այդպիսին սահմանված է, պայմանները կարող եք գտնել համապատասխան Փաստաթղթերում: Ապրանքների Սահմանափակ Երաշխիքը սույն Պայմանագրի համաձայն վաճառված RIM Ապրանքների համար սահմանված միակ երաշխիքն է: Դրանով սահմանում են RIM Ապրանքների և դրանց համար սահմանված սահմանափակ երաշխիքի պայմանների խախտման կապակցությամբ Ձեր իրավական պաշտպանության բացառիկ միջոցները: Բետա Ապրանքները տրամադրվում են այնպես, ինչպես կան առանց որևիցե երաշխիքների: Սույն Պայմանագրի Ընդհանուր Դրույթներ վերատառությամբ հոդվածի (հոդված 29) հետևյալ կետերը հղմամբ ներառվում են Ապրանքների Սահմանափակ Երաշխիքի պայմանների մեջ այն փոփոխություններով հանդրեձ, որոնք անհրաժեշտ են Ապրանքների Սահմանափակ Երաշխիքի կոնտեքստում կիրառելի լինելու համար. «Պայմանագրի Խախտումներից Բխող Իրավունքներից և Իրավական Պաշտպանության Միջոցներից Հրաժարվելը» (կետ 29(բ)), «Պայմանագրի Որոշ Դրույթների Գործողությունը Պայմանագրի Ուժը Կորցնելուց Հետո» (կետ 29(գ)), «Պայմանագրի Դրույթների Գործողությունն Առանձին-Առանձին» (կետ 29(ե)), «Պայմանագրի Լեզուն» (կետ 29(զ)) և «Պայմավորվածությունների Ամբողջականությունը» (կետ 29(ը)): Նշված ձևով համաձայնություն տալով սույն Պայմանագրի դրույթներին՝ Դուք համաձայնում և ընդունում եք, որ կարդացել եք Ապրանքների Սահմանափակ Երաշխիք վերատառությամբ փաստաթուղթը և համաձայնություն եք տալիս դրա դրույթներին: Թյուրիմացությունների խուսափելու նպատակով նշում ենք, որ օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Ապրանքների Սահմանափակ Երաշխիքը տարածվում է միայն RIM նոր Ապրանք(ներ)ի վրա, իսկ RIM վերանորոգված Ապրանքների վրա տարածվում է այդ երաշխիքի միայն չսպառված մասը, եթե այդպիսին գոյություն ունի:

21. Ետերաշխիքային Աջակցություն. Եթե ցանկանում եք երաշխիքային ժամկետի ավարտից հետո աջակցություն ստանալ RIM-ից, ապա խնդրում ենք կապվել RIM հետ հետևյալ հասցեով. sales@blackberry.com (կամ <http://www.blackberry.com/legal/> կայքում նշված մեկ այլ հասցեով) կամ Ձեզ Անլար Ծառայություններ Մատուցող Անձանց հետ: Եթե Ծրագրաշարերը տեղադրված են երրորդ անձանց մոտ, և Դուք ցանկանում եք, որ վերջիններս կարողանան Ծրագրաշարերի կապակցությամբ Ձեր անունից աջակցություն ստանալ RIM-ից, ապա Դուք կամ նման անձը պետք է ունենաք RIM հետ կնքված պայմանագիր Ծրագրաշարերի համապատասխան մասերի կապակցությամբ աջակցություն ստանալու վերաբերյալ: Դուք պետք է նաև ժամանակ առ ժամանակ RIM տեղեկություններ տրամադրեք այլ անձանց մոտ տեղադրված Ձեր Ծրագրաշարերի մասին՝ ուղարկելով հետևյալ տվյալներն այս հասցեով. sales@blackberry.com (կամ <http://www.blackberry.com/legal/> կայքում նշված մեկ այլ հասցեով). Ծրագրաշարերը բնութագրող տվյալներ,

Ծրագրաշարերի օրինակների քանակը, որոնց կապակցությամբ Դուք կնքել եք լիցենզային պայմանագրեր, տվյալներ SRP նույնացուցիչների և մատչելի լիցենզաների (CAL) մասին: Կարող է պատահել, որ BlackBerry Լուծումների կապակցությամբ աջակցություն ընդհանրապես հնարավոր չլինի ցուցաբերել Անլար Ծառայություններ Մատուցող որոշ Անձանց միջոցով:

22. Պատասխանատվության Բացառում.

Որոշ երկրների օրենքներով արգելվում է սպառողների հետ կնքված պայմանագրերում նախատեսել պատասխանատվությունը սահմանափակող, ինչպես նաև երաշխիքները, պայմանները, հավաստումները, երաշխավորությունները, հավանությունները բացառող դրույթներ: Նման պարագայում, եթե Դուք սպառող եք, ապա այդ տեսակ բոլոր սահմանափակումները և բացառումները կիրառելի չեն լինի Ձեր նկատմամբ:

(ա) Ընդհանուր Երաշխիք.

- (i) Կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի առավելագույն սահմաններում և եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով, բոլոր պայմանները, հավաստումները, երաշխավորությունները, երաշխիքները, հավանության արժանացնող կարծիքները՝ հատուկ և ենթադրյալ, ներառյալ, սակայն ոչ միայն, ծառայության ժամկետների, ըստ նպատակի և նշանակության օգտագործելու համար պիտանելիության, գնորդի ակնկալիքներին համապատասխան լինելու, այլոց իրավունքները չտոնահարելու, բավարար որակի, վաճառքի համար վաճառողի մոտ համապատասխան սեփականության իրավունքի առկայության, ինչպես նաև օրենքից, սովորույթից, գործարար շրջանառությունից, գործարար սովորույթներից, նախկինում ձևավորված հարաբերություններից բխող և ցանկացած տեսակի այլ երաշխիքները, երաշխավորությունները, պայմանները, հավաստումները, հավանության արժանացնող կարծիքները (հատուկ և ենթադրյալ) սույնով բացառվում և ժխտվում են:
- (ii) Եթե արգելվում վերոգրյալ կարգով բացառել Ծրագրաշարերի վերաբերյալ ենթադրյալ երաշխիքների կամ պայմանների գոյությունը, սակայն թույլատրվում է սահմանափակել դրանց գործողության ժամկետները, ապա տեղեկացնում ենք, որ կիրառելի օրենսդրությամբ թույլատրված առավելագույն սահմաններում դրանց գործողության ժամկետը սույնով սահմանվում է 90 (իննսուն) օր՝ հաշվարկված Ձեր BlackBerry Լուծումների որևիցե մասը որևիցե համակարգչի վրա առաջին անգամ տեղադրելու օրվանից:
- (բ) RIM Ծառայություն(ներ)ը.
 - (i) Կիրառելի օրենսդրությամբ արգելված չլինելու սահմաններում հայտնում ենք, որ բոլոր ծառայությունները տրամադրվում կամ հասանելի են դարձվում «այնպես, ինչպես կան» առանց RIM կողմից որևիցե

պայմանների, հավաստումների, երաշխավորությունների, երաշխիքների և առանց RIM կողմից դրանք հավանության արժանացնելու: 23 (բ) կետի դրույթների պահպանմամբ, սույնով հայտնում ենք նաև, որ RIM Ձեր և Ձեր անունից կամ Ձեր միջոցով պահանջ ներկայացնող որևիցե երրորդ անձաց առջև պատասխանատվություն չի կրում բոլոր այն խնդիրների համար, որոնք բխում են կամ կապված են RIM անվճար Ծառայությունների հետ:

(ii) Կիրառելի օրենսդրությամբ արգելված չլինելու սահմաններում հայտնում ենք, որ RIM ոչ մի երաշխիք կամ նմանատիպ այլ հավաստում չի տրամադրում առ այն, որ RIM Ծառայությունները հնարավոր կլինի օգտագործել առանց խափանումների և ընդհատումների, որ դրանք կաշխատեն և հասանելի կլինեն առանց խափանումների և ընդհատումների, որ Ձեզ կամ Ձեր կողմից ուղարկված, Ձեր կամ Ձեր հանձնարարությամբ մեկ այլ անձի կողմից պահեստավորված հաղորդագրությունները, Պարունակությունները և տեղեկությունները չեն կորչի, չեն ջնջվի և չեն վնասվի, որ դրանք կլինեն ճշգրիտ, կհաղորդվեն առանց աղավաղումների և ողջամիտ ժամկետներում:

(գ) Երրորդ Անձանց Ապրանքները և Երրորդ Անձանց Ծառայությունները, ՀղվածԿայքեր.

(i) Կիրառելի օրենսդրությամբ արգելված չլինելու սահմաններում հայտնում ենք, որ Երրորդ Անձանց Ծառայությունները և Երրորդ Անձանց Ապրանքները RIM կողմից չեն վերահսկվում, և RIM հավանության չի արժանացնում Երրորդ Անձանց որևիցե Ապրանք կամ Երրորդ Անձանց որևիցե Ծառայություն, և որ RIM ոչ մի պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից Երրորդ Անձանց այս կամ այն Ծառայությունը կամ Երրորդ Անձանց այս կամ այն Ապրանքն ընտրելու, օգտագործելու, մատչելու կամ կիրառելու համար:

(ii) Վերոհիշյալ դրույթները կիրառելի են անկախ այն հանգամանքից, թե (Ա) ինչպես էք Դուք ձեռք բերել կամ մատչել Երրորդ Անձանց Ապրանքները և/կամ Երրորդ Անձանց Ծառայությունները, այսինքն՝ RIM-ից անկախ, թե վերջինիս կամ Ձեզ Անկախ Ծառայություններ Մատուցող Անձի միջոցով, (Բ) Երրորդ Անձանց այդ Ապրանքները և Երրորդ Անձանց այդ Ծառայությունները (ներառյալ Անկախ Ծառայությունները) անհրաժեշտ են եղել Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասերն օգտագործելու համար, թե՛ ոչ, ինչպես նաև անկախ այն հանգամանքից, թե (Գ) Դուք Երրորդ Անձանց այդ Ապրանքներն ու Երրորդ Անձանց այդ Ծառայությունները ձեռք էք բերել կամ մատչել էք Սարքի միջոցով, թե՛ ոչ, ներառյալ, սակայն ոչ միայն, BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի հետ տրամադրվող ինտերնետ դիտարկչի (browser), թե RIME Store ծառայության միջոցով ձեռք բերված ծրագրաշարերի միջոցով, թե Երրորդ Անձանց Ծառայությունները կամ Երրորդ Անձանց Ապրանքները հասանելի դարձնող BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերը երկրորդային շուկայից ներբեռնելու, թե Երրորդ Անձանց

Ծրագրաշարերին, Երրորդ Անձանց կայքերին և Երրորդ Անձանց այլ Ծառայություններին Ձեր Սարքի մեջ պարունակվող էջանշանների (bookmark) կամ պատկերանշանների (icon) միջոցով տրված հղումների, թե ցանկացած այլ միջոցով ներառյալ, սակայն ոչ միայն, այլ կայքերի, Ձեր Սարքն օգտագործելու միջոցով տեղեկություններ ստանալու կամ RIM կամ Անլար Ծառայություններ Մատուցող Անձանց կողմից Ձեզ տեղեկությունների տրամադրելու միջոցով:

- (iii) Առանց սահմանափակելու վերոհիշյալ դրույթների գործողությունը սույնով հայտարարում ենք, որ Երրորդ Անձանց բոլոր Ապրանքները և Երրորդ Անձանց բոլոր Ծառայությունները կիրառելի օրենսդրությամբ արգելված չլինելու դեպքում RIM կողմից Ձեզ են տրամադրվում կամ Ձեզ հասանելի են դարձվում կամ այլապես Ձեր կողմից Ձեր BlackBerry Լուծումների զուգակցությամբ օգտագործվում են «այնպես, ինչպես կան», առանց որևիցե պայմանների, հավաստումների, երաշխավորությունների, երաշխիքների և առանց RIM կողմից դրանք հավանության արժանացնելու, և RIM ոչ մի պատասխանատվություն չի կրում Ձեր կամ Ձեր միջոցով պահանջներ ներկայացնող որևիցե երրորդ անձի առջև Երրորդ Անձանց Ապրանքների կամ Երրորդ Անձանց Ծառայությունների հետ կապված այս կամ այն խնդրի ներառյալ, սակայն ոչ միայն, բոլոր այն խնդիրների համար, որոնք կարող են կապված լինել (Ա) Երրորդ Անձանց Ապրանքների, Երրորդ Անձանց Ծառայությունների կամ դրանք մատչելու համար նախատեսված Ծրագրաշարերի այս կամ այն մասերի ճշգրտության, հաղորդման, արդիականության կամ շարունակական հասանելիության, (Բ) Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների աշխատանքի կամ դրանց չաշխատելու, (Գ) Երրորդ Անձանց Ապրանքները կամ Երրորդ Անձանց այդ Ծառայությունները Ձեր BlackBerry Լուծումների կամ դրանց այս կամ այն մասերի զուգակցությամբ չաշխատելու, ինչպես նաև (Դ) Երրորդ Անձանց Ապրանքների և Երրորդ Անձանց Ծառայությունների հետ կապված երրորդ անձանց գործողությունների կամ անգործության, ներառյալ նաև Երրորդ Անձանց կողմից Ձեր տվյալներն օգտագործելու հետ:
- (iv) Առանց սահմանափակելու վերոհիշյալ դրույթների գործողությունը Դուք աներկբաորեն համաձայնում և ընդունում եք, որ կիրառելի օրենսդրությամբ արգելված չլինելու դեպքում RIM պատասխանատվություն չի կրում որևիցե վնասգրերի (virus), Երրորդ Անձանց սպառնալի, զրպարտիչ, անպատշաճ, իրավախախտ, վիրավորիչ կամ սպօրինի Ծառայությունների, Երրորդ Անձանց նման Ապրանքների կամ այլոց մտավոր սեփականության իրավունքները ոտնահարող Երրորդ Անձանց ցանակացած այլ Ապրանքների կամ Երրորդ Անձանց ցանակացած այլ Ծառայությունների ու դրանց փոխանցման համար: Երրորդ Անձանց Ապրանքների կամ Երրորդ Անձանց Ծառայությունների հետ կապված պահանջներ ունենալու դեպքում Դուք պետք է դրանք ուղղեք համապատասխան Երրորդ Անձանց:

(դ) Հակացուցում. Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ մասերը նախատեսված չեն ծայրահեղ կարևոր իրավիճակներում օգտագործման համար: Դրանք նախատեսված չեն նաև վտանգավոր, ինչպես նաև այնպիսի իրավիճակներում օգտագործվելու համար, որտեղ պահանջվում է անխափան վերասկողություն կամ աշխատանք, ինչպես օրինակ՝ ստումային կայանների շահագործման, ինքնաթիռների կամ հեռահաղորդակցության համակարգերի կառավարման, օդագնացության վերահսկման, կենսագործունեության ապահովման, զենք ու զինամթերքի համակարգերում օգտագործման, արտակարգ իրավիճակներում տեղորոշման կամ արտակարգ իրավիճակներում այլ գործողություններ կատարելու համար: Դուք հայտնում և երաշխավորում եք, որ կունենաք և կպահպանեք տվյալների վերականգման և պահեստային պատճեններ պատրաստելու համակարգեր և (i) օգտագործման կամ ծառայությունների խափանման, (ii) տվյալների փոխանցման ժամանակ դժարություններ կամ սխալներ արձանագրվելու, ինչպես նաև (iii) տվյալների կորստի կամ վնասվելու դեպքում Դուք անհապահ կմեղմեք և կնվազեցնեք կորուստներն ու վնասները և այդ մասին տեղյակ կպահեք RIM-ին: Չսահմանափակելով 23 (ա) կետով նախատեսված պատասխանատվության սահմանափակման դրույթների գործողության ոլորտը՝ սույնով հայտնում ենք, որ RIM պատասխանատվություն չի կրում բոլոր այն վնասների համար, որոնք առաջացել են Ձեր BlackBerry Լուծումները, դրանց այս կամ այն մասերը ծայրահեղ կարևոր, վտանգավոր, ինչպես նաև այնպիսի իրավիճակներում օգտագործելու հետևանքով, որտեղ պահանջվում է անխափան վերահսկողություն կամ աշխատանք: Սույն դրույթը գործում է անկախ այն հանգամանքից, թե նշված վնասները կանխատեսելի են եղել, թե՛ ոչ, և անկախ այն հանգամանքից, թե RIM դրանց մասին տեղեկացված է եղել, թե՛ ոչ:

(ե) Բետա Ապրանքներ. Բետա Ապրանքները հնարավոր է, որ նախատեսված չլինեն լայն հանրության կողմից օգտագործման համար: Հնարավոր է նաև, որ դրանք Ձեր բնակության երկրում համապատասխան սերտիֆիկացում կամ ստանդարտացում անցած չլինեն: RIM չի երաշխավորում, որ դրանք երբևէ կանցնեն պահանջվող ստանդարտացումները և սերտիֆիկացումները: Հետևաբար, Դուք համաձայնում և ընդունում եք, որ Բետա Ապրանքները չեն կարող վաճառքել կամ վարձույթով տրամադրվել, քանի դեռ դրանք չեն անցել պահանջվող ստանդարտացումները և/կամ սերտիֆիկացումները: Բետա Ապրանքները նախատեսված չեն արտադրական կամ այնպիսի այլ նպատակներով օգտագործման համար, որտեղ պահանջվում է դրանց աշխատանքի բարձր հուսալիություն: Բետա Ապրանքները Ծրագրաշարերի, Ծառայությունների և RIM Ապրանքների նախակումերցիոն տարբերակներն են և, որպես այդպիսին, նախատեսված չեն և չեն էլ կարող աշխատել այնպես, ինչպես վաճառքի համար նախատեսված տարբերակները: Բետա Ապրանքները նաև չեն հանդիսանում վաճառքի համար նախատեսված ապրանքների և ծառայությունների հարյուր տոկոսանոց նախատիպերը: Դուք պետք է պարբերաբար պատրաստեք դրանց հետ օգտագործվող տվյալների պահեստային օրինակները: Ի լրումն վերոգրյալին, պետք է նկատի ունենալ, որ Բետա Ապրանքները կարող են պարունակել ծառայությունների և ծրագրաշարերի ֆունկցիոնալ հնարավորություններ և ծրագրեր, որոնք դեռևս վաճառքի չեն հանվել: Դուք ընդունում և համաձայնում եք, որ Բետա Ապրանքները կամ դրանց այս կամ այն

մասերը հնարավոր է երբեք էլ վաճառքի չհանվեն և հանրորեն չներկայացվեն RIM կողմից, իսկ վաճառքի հանվելու և հանրորեն ներկայացվելու դեպքում էլ, հնարավոր է, որ դրանք ենթարկված լինել էական փոփոխությունների: RIM պարտավոր չէ հանրորեն ներկայացնել կամ վաճառքի հանել այդ Ծրագրաշարերը, Ծառայությունները, Բետա Ապրանքները կամ դրանց այս կամ այն մաս երբ: Դուք համաձայնում և ընդունում եք գործել Ձեր սեփական ռիսկով Բետա Ապրանքների, դրանց հետ կապված Ծրագրաշարերի և Ծառայությունների փորձարկումներ, գնահատումներ և լրամշակումներ իրականացնելիս:

23. Պատասխանատվության Սահմանափակում.

Որոշ երկրների օրենքներով արգելվում է սահմանափակել կամ բացառել կողմնակի, անուղղակի կամ այլ տեսակ վնասները հատուցելու պատասխանատվությունը, եթե պայմանագրի կողմերից մեկը սպառող է: Հետևաբար, եթե Դուք սպառող եք, ապա սույն կետում գետեղված սահմանափակումները և բացառումները Ձեր նկատմամբ կիրառելի չեն:

(ա) Կիրառելի օրենսդրությամբ թույլատրված առավելագույն սահմաններում և սույն Պայմանագրով իրավական պաշտպանության մյուս բոլոր միջոցների հաշվառմամբ հայտնում ենք, որ RIM ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում հետևյալի համար. կողմնակի, տուգանային, պատահական, անուղղակի, փաստացի, տուժանքային, ծանրացուցիչ և բարոյական վնասների, ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների կամ շահույթի, ակնկալվող խնայողությունների, ձեռնարկատիրական/աշխատանքային տեղեկությունների կորստի, գործունեության խափանման, ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների կորստի, տվյալների վնասվելու կամ կորչելու, տվյալների անվտագությունը խոցվելու, տվյալներ հաղորդելու և ստանալու անհնարինության, Ձեր BlackBerry Լուծումների հետ օգտագործվող ծրագրերի հետ կապված խնդիրների, Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասերը RIM-ից բացի այլ անձանց կողմից վերափոխման ենթարկվելուց բխող խնդիրների, պարապուրդով պատճառված վնասների, Ձեր BlackBerry Լուծումները, դրանց այս կամ այն մասերը, Երրորդ Անձանց Ապրանքները կամ Երրորդ Անձանց Ծառայություններն օգտագործելու անհնարինության, փոխարինող ապրանքների համար կատարված ծախսերի, ապահովագրական ծախսերի, սարքավորումների կամ ծառայությունների, կապիտալի ներգրավման ծախսերի, ինչպես նաև սույն Պայմանագրից կամ Ձեր BlackBerry Լուծումներից, ներառյալ նաև Ձեր BlackBerry Լուծումներն օգտագործելուց կամ դրանք օգտագործելու անհնարինությունից, դրանց աշխատելուց կամ չաշխատելուց բխող կամ դրանց հետ կապված ցանակցած այլ դրամական վնասների համար, անկախ այն հանգամանքից, թե դրանք կանխատեսելի էին, թե՛ ոչ, և անկախ այն հանգամանքից, թե RIM դրանց ծագման հնարավորության մասին տեղեկացված է եղել, թե՛ ոչ:

(բ) Կիրառելի օրենսդրությամբ թույլատրված լինելու դեպքում ոչ մի պարագայում Ձեր նկատմամբ RIM պատասխանատվության չափը չի կարող գերազանցել (i) խնդրո առարկա RIM Ապրանք(ներ)ի համար Ձեր կողմից վճարված գումարի չափը, (ii) խնդրո առարկա Ծրագրաշարերի մասերի համար Ձեր կողմից վճարված գումարի

չափը, (iii) խնդրո առարկա RIM Վճարովի Ծառայություններից որոշակի ժամանակահատվածում օգտվելու համար Ձեր կողմից վճարված գումարի չափը և (iv) 5 (հինգ) ԱՄՆ դոլարը՝ կախված այն հանգամանքից, թե դրանցից, որն է ավելի բարձր:

(գ) Կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի սահմաններում, հայտնում ենք, որ եթե RIM սույն Պայմանագրի համաձայն պատասխանատվություն է կրում Ձեր առջև, ապա վերջինիս պատասխանատվությունը պետք է սահմանափակվի միայն BlackBerry Լուծումների աշխատանքի խափանման, դրանց չաշխատելու և դրանց աշխատանքի ուշացման ժամանակահատվածում կրած վնասներով:

(դ) Ոչինչ սույն Պայմանագրում չի սահմանափակում Ձեր նկատմամբ RIM պատասխանատվությունը, եթե դա բխում է կյանքին, առողջությանը վնաս կամ մահ պատճառելուց և եթե վնասը կամ մահը պատճառվել է RIM անզգուշության հետևանքով: Նման պարագայում, եթե առկա է նաև Ձեր կամ երրորդ անձանց մեղքը, RIM պատասխանատվության չափը կ նվազեցվի համապատասխան չափով:

(ե) Կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի առավելագույն սահմաններում հայտնում ենք, որ յուրաքանչյուր կողմ մյուս կողմի առջև կրում է միայն այնպիսի պատասխանատվություն, որը նախատեսված է սույն Պայմանագրով, և ազատվում է բոլոր այլ պարտավորություններից, պարտականություններից կամ պատասխանատվության այլ տեսակներից՝ լինեն դրանք պայմանագրային, դելիկտային, օրենքով սահմանված թե՛ այլ բնույթի:

(զ) Կիրառելի օրենսդրությամբ թույլատրելի առավելագույն սահմաններում սույն Պայմանագրով նախատեսված սահմանափակումները և բացառումները (i) գործում են անկախ Ձեր կողմից ներկայացված հայցի հիմքերից, Ձեր կողմից ներկայացված պահանջի և հայցի բնույթից, անկախ այն հանգամանքից, թե Ձեր հայցը, պահանջը բխում է պատշաճ շրջահայացություն ցուցաբերելու պարտավորությունն անզգուշորեն խախտելուց, թե՛ դելիկտային իրավունքից, թե՛ առանց մեղքի պատասխանատվության սկզբունքից, թե՛ օրենքից, թե՛ պայմանագրային պարտավորությունները խախտելուց, թե՛ իրավունքի այլ սկզբունքներից, (ii) կշարունակեն ուժի մեջ մնալ սույն Պայմանագրի դրույթների էական խախտում(ներ) թույլ տալուց, Պայմանագրի կատարումն անհնարին դառնալուց (Պայմանագրի առարկան ձախողվելուց), Պայմանագրով նախատեսված իրավական պաշտպանության միջոցները ձախողվելուց հետո, (iii) կիրառելի չեն լինի սույն Պայմանագրով նախատեսված փոխհատուցում վճարելու պարտավորությունների նկատմամբ, կողմերից մեկի կողմից մյուս կողմի մտավոր սեփականության իրավունքները յուրացնելու կամ ռոնահարելու, ինչպես նաև սույն Պայմանագրի հետևյալ հոդվածների դրույթների խախտումներ թույլ տալու դեպքերում. «Ձեր BlackBerry Լուծումների Օգտագործման Պայմանները» (հոդված 3), «Օրագրաշարերի և Փաստաթղթերի Լիցենզիոն Օգտագործման Իրավունքները» (հոդված 2), «Մտավոր Սեփականություն» (հոդված 11), «Արտահանման, Ներմուծման և Օգտագործման Սահմանափակումները, ԱՄՆ Կառավարության Աշխատակիցներին Վերապահվող Իրավունքները» (հոդված 12), «Գաղտնիությունը և Ապաբանաբաղման Արգելքը» (հոդված 15), «Օգտատերերի Տվյալները» (հոդված 25) և (iv) կիրառելի կլինեն RIM,

RIM Ընկերությունների Խմբի, նրանց իրավահաջորդների, ցեսիոնարների, RIM պաշտոնական ներկայացուցիչների պարագայում (ներառյալ նաև Անլար Ծառայություններ Մատուցող այն Անձանց պարագայում, եթե նրանք Ծրագրաշարերի մասով հանդես են գալիս, որպես RIM պաշտոնական ներկայացուցիչներ):

(ե) RIM Ընկերությունների Խմբի ղեկավարները, տնօրենները, աշխատակիցները, գործակալները, պաշտոնական ներկայացուցիչները, մատակարարները (բացառությամբ Առաջարկ Կատարող Անձանց), նրանց ծառայություն մատուցող, նրանց հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձիք, ինչպես նաև նրանց հետ համագործակցող Անլար Ծառայություններ Մատուցող Անձիք (բացառությամբ վերոհիշյալ դեպքերի) սույն Պայմանագրի հետ առնչությամբ պատասխանատվություն չեն կրում:

(զ) Դուք ընդունում և համաձայնում եք, որ սույն Պայմանագրով նախատեսված սահմանափակումները, բացառումները հանդիսանում են կողմերի միջև կայացված համաձայնության առանցքային տարրերից մեկը, և որ եթե չլինեին դրանք, ապա (i) սույն Պայմանագրով նախատեսված վճարների չափը և այլ պայմաններն էապես տարբեր կլինեին, և (ii) դա կազդեր Ծրագրաշարերը և RIM Ծառայությունները RIM կողմից Ձեզ առաջարկելու և դրանց օգտագործման իրավունքը Ձեր կողմից ձեռք բերելու և/կամ Երրորդ Անձանց Ապրանքները և Երրորդ Անձանց Ծառայությունները Ձեր BlackBerry Լուծումների միջոցով Ձեզ համար հասանելի դարձնելու RIM հնարավորության վրա:

Ձեր BlackBerry Լուծումների՝ Ծրագրաշարեր և Ծառայություններ չհանդիսացող մասերի համար RIM կողմից սահմանված երաշխիքները և դրանց առնչությամբ կնքված պայմանագրերի դրույթները սույով փոփոխության չեն ենթարկվում:

24. Տեղեկություններ հավաքելու, օգտագործելու, մշակելու, փոխանցելու, պահպանելու և տրամադրելու (այսուհետ միասին՝ «մշակելու») համար համաձայնությունը.

RIM Ընկերությունների Խմբի, վերջիններիս ծառայություն մատուցող անձանց կողմից անհատական տվյալների մշակումն իրանացվում է Անհատական Տվյալների Պաշտպանության Մասին RIM Կանոնակարգի համաձայն (որը հղմամբ ներառվում է սույն Պայմանագրի մեջ, և որը կարելի է գտնել www.blackberry.com/legal կայքում կամ ստանալ՝ գրելով հետևյալ հասցեով. legalinfo@rim.com): Ձեր անհատական տվյալները մշակող անձը հանդիսանում է RIM Ընկերությունների Խմբի մեջ մտնող այն ընկերությունը, որի հետ դուք կնքել եք սույն Պայմանագիրը, պայմանով, սակայն, որ RIME Store ծառայության միջոցով կատարված Առաջարկների կապակցությամբ հավաքված տվյալների մասով տվյալներ մշակող անձը հանդիսանում է RIME այն ընկերությունը, որի հետ Դուք կնքել եք այդ ծառայություններից օգտվելու պայմանագիր:

(ա) Անհատական Տվյալները. Ձեր BlackBerry Լուծումները կամ դրանց այս կամ այն մասերը տեղադրելու, դրանցից, RIM Ծառայություններից կամ դրանց հետ կապված

Անլար Ծառայություններից օգտվելու դեպքում հնարավոր է, որ RIM Ընկերությունների Խումբը, վերջիններիս ծառայություններ մատուցող անձիք, Ձեզ Անլար Ծառայություններ Մատուցող Անձիք, Ձեր BlackBerry Լուծումների հետ օգտագործվող ապրանքներն արտադրող երրորդ անձիք, Ձեր BlackBerry Լուծումների հետ օգտագործվող ծառայությունները մատուցող երրորդ անձիք հավաքեն և մշակեն Ձեր և/կամ Ձեր Արտոնված Օգտագործողների (այսուհետ միասին՝ «Օգտագործողների») անհատական տվյալները (անհատական տվյալների շրջանակը սահմանված է կիրառելի օրենսդրությամբ): Կախված օգտագործվող ծառայությունների տեսակից՝ անհատական տվյալները կարող են ներառել այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են անուն, ազգանուն, էլ.փոստի հասցեն, հեռախոսի համարը, BlackBerry ID-ն, հաշվեհամարի տվյալները, Սարքի մասին տեղեկություններ (օրինակ՝ Սարքի PIN-ը և այլ նույնացուցիչները), Սարքի տեղակայման տվյալները (սահմանումը բերված է ստորև), Անլար Ծառայություններ Մատուցող Անձի մասին տեղեկություններ, Ձեր BlackBerry Լուծումների ֆունկցիոնալ հնարավորությունների օգտագործման, ինչպես նաև դրանց հետ օգտագործվող RIM Ծառայությունների, ծրագրաշարերի և սարքաշարերի մասին տեղեկություններ: Դուք համաձայնում եք, որ այդ տեղեկությունները RIM Ընկերությունների Խումբը կարող է ստանալ անձամբ Ձեզանից կամ Անլար Ծառայություններ Մատուցող Անձանցից կամ Ձեր BlackBerry Լուծումների հետ օգտագործվող ապրանքներն արտադրող կամ ծառայությունները մատուցող երրորդ անձանցից:

(բ) Լայատակը. Անհատական Տվյալների Պաշտպանության Մասին RIM Կանոնակարգի համաձայն RIM Ընկերությունների Խումբը և վերջիններիս ծառայություններ մատուցող անձիք կարող են անհատական տվյալները մշակել (i) Ձեր ցանկությունները և նախասիրությունները հասկանելու և բավարարելու, Ձեր BlackBerry Լուծումները Ձեզ հասանելի դարձնելու, (ii) նոր ծառայություններ և ապրանքներ մշակելու կամ գոյություն ունեցողները բարելավելու, դրանց մասին Ձեզ ծանուցելու, (iii) RIM Ընկերությունների Խմբի գործունեությունը և աշխատանքները դեկավարելու և զարգացնելու, ինչպես նաև (iv) իրավական և կարգավորող մարմինների կողմից սահմանված պահանջները կատարելու նպատակով: Ի լրումն վերոգրյալին, RIM կարող է Օգտատերերին հասանելի դարձնել կամ նրանց տրամադրել Ծրագրաշարերի թարմացումներ և արդիացումներ, այդ թարմացումների և արդիացումների մասին ծանուցումներ, RIM այլ ապրանքներ և ծառայություններ, Երրորդ Անձանց Ծրագրաշարեր, Երրորդ Անձանց Պարունակություններ, Երրորդ Անձանց Ծառայություններ և հարակից այլ ապրանքներ ու ծառայություններ:

(գ) Քլաուզ Ծառայություններ. Եթե Դուք գրանցվեք կամ օգտվեք քլուզ հաղորդագրություններից և ծառայություններից կամ օգտվեք RIM Ընկերությունների Խմբի, վերջիններիս ծառայություններ մատուցող անձանց կողմից առաջարկվող տարածության մեջ համակարգ մատչելու, տվյալներ պահեստավորելու, դրանց պահեստային պատճեններ պատրաստելու ֆունկցիոնալ հնարավորություններից, ապա տեղեկությունները, որ Դուք կմուտքագրեք, կտրամադրեք կամ կավելացնեք այդ ծառայություններում (ինչպես օրինակ՝ պրոֆիլի անունը, նկարը, կոնտակտային տվյալները, ստատուսները, օրացույցները, զ անազան խմբերում Ձեր անդամակցության մասին և սարքում պարունակվող այլ տեղեկությունները, ինչպես օրինակ՝ կատարվելիք գործողությունների ցանկերը և մեղիա ֆայլերը) կարող են

մշակվել RIM Ընկերությունների Խմբի կողմից RIM հետ կնքված Պայմանագրի համաձայն Ձեզ ծառայություններ մատուցելով նպատակով: Դուք երաշխավորում և հայտարարում եք, որ նման տեղեկություններ տրամադրելու համար ունեք և ստացել եք բոլոր անհրաժեշտ համաձայնությունները: BlackBerry AppWorld, My World և նմանատիպ այլ ծառայություններից օգտվելու պարագայում RIM Ընկերությունների Խմբի կողմից կարող են մշակվել տեղեկություններ այն մասին, թե ինչ Ծրագրաշարեր, RIM Ծառայություններ, Երրորդ Անձանց Ապրանքներ և Երրորդ Անձանց Ծառայություններ են ներբեռնվում և օգտագործվում Սարքերի մեջ:

(դ) Սոցիալական Ծառայություններ. Որոշ RIM Ծառայություններ կամ Ծրագրաշարերի որոշ ֆունցիաներ կարող են ունենալ այնպիսի հնարավորություններ, որոնք թույլ են տալիս Ձեզ տեսանելի լինել այլ անձանց, շփվել նրանց հետ, ինչպես նաև առավել դյուրին և հաճելի դարձնել RIM կողմից սոցիալական ծառայությունների միջոցով հասանելի դարձվող RIM Ծառայությունների, Ծրագրաշարերի, Երրորդ Անձանց Ծառայությունների և Երրորդ Անձանց Ծրագրաշարերի օգտագործումը (այսուհետ «սոցիալական ծառայություններ»): Այդ ծառայություններից օգտվելիս Դուք համաձայնում եք, որ այլ անձանց կարող են փոխանցվել տեղեկություններ, որ Դուք հասանելի եք շփման համար, որ նրանց կարող են տեսանելի լինել և մեկնաբանություններ ու հաղորդագրություններ թողնելու համար հասանելի լինել Ձեր պրոֆիլը, պրոֆիլի անունը, պրոֆիլի նկարը, ստատուսները, տեղեկություններ այս կամ այն խմբերում Ձեր անդամակցության վերաբերյալ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք կարող են նույնացնել Ձեր անձը: Օրինակ՝ եթե Դուք օգտվում եք BlackBerry Messenger Social Platform-ի միջոցով հասանելի դարձված RIM Ծառայություններից կամ Երրորդ Անձանց Ծառայություններից, ապա Դուք համաձայնում եք, որ (i) BlackBerry Messenger-ում Ձեր ընկերները կարող են տեսնել և իմանալ, թե օգտվում եք Դուք արդյոք RIM այդ Ծառայություններից և Երրորդ Անձանց այդ Ծառայություններից, թե՛ ոչ, (ii) BlackBerry Messenger-ում Ձեր ընկերները կարող են տեսնել Ձեր պրոֆիլը և իմանալ, թե RIM Ծառայություններից և Երրորդ Անձանց Ծառայություններից օգտվելիս ինչ ծրագրաշարեր և Պարունակություններ (ինչպես օրինակ՝ խաղեր, երաժշտություն և այլ մեդիա ֆայլեր՝ կախված RIM Ծառայությունների և Երրորդ Անձանց Ծառայությունների բնույթից) եք ներբեռնել, օգտագործում կամ դրանցից որոնք եք Դուք պատրաստ կիսել այլ անձանց հետ, ինչպես նաև տեսնել և կարդալ դրանց վերաբերյալ Ձեր և այլ անձանց կողմից թողնված մեկնաբանությունները և հաղորդագրությունները, (iii) երբ մեկնաբանություններ և հաղորդագրություններ թողնեք Ձեր ընկերների, RIM Ծառայություններից և Երրորդ Անձանց Ծառայություններից օգտվելիս Ձեր ընկերների կողմից ներբեռնված և օգտագործվող ծրագրաշարերի և Պարունակությունների վերաբերյալ, ապա Ձեր մասին տեղեկությունները (ինչպես օրինակ՝ Ձեր կողմից թողնված մեկնաբանությունները, Ձեր պրոֆիլի անունը, պրոֆիլի նկարը) տեսանելի կլինեն նաև նրանց ընկերներին, և (iv) RIM Ծառայությունները և Երրորդ Անձանց Ծառայությունները կարող են պարունակել ավտոմատ վերլուծություններ կատարելու ֆունկցիոնալ հանարավորություններ, որոնք կարող են օգտագործվել Ձեր նախասիրություններին և Ձեր կողմից RIM Ծառայություններից և Ծրագրաշարերից օգտվելուն համապատասխան առաջարկներ կազմելու համար: Ստուգեք RIM համապատասխան Ծառայությունների և Ծրագրաշարերի կարգավորումները,

տեսեք, թե ինչ տարբերակներ գոյություն ունեն, ըստ անհրաժեշտության փոփոխեք դրանց հասանելիության կամ գաղտնիության կարգավորումները:

(ե) Երրորդ Անձանց Ծառայությունների ավելացումը. Եթե որոշեք Ձեր BlackBerry Լուծումներում ավելացնել Երրորդ Անձանց Ծառայություններ (ինչպես օրինակ՝ երրորդ անձանց կողմից մատուցվող էլ. փոստային ծառայություններ կամ ծառայություններ, որոնք հնարավորություն են տալիս Ձեր Սարքի միջոցով օգտվել սոցիալական ցանցերից կամ երրորդ անձանց կողմից առաջարկվող այլ ծառայություններից), ապա Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը, որ RIM օգտագործի Ձեր հաշվեհամարի տվյալները, Ձեր անունից մատչի Երրորդ Անձանց Ծառայությունները և մշակի Երրորդ Անձանց Ծառայություններին վերաբերող Ձեր անհատական տվյալները այնպես, որպեսզի Դուք կարողանաք Ձեր BlackBerry Լուծումների միջոցով մատչել այդ ծառայությունները Ձեր անձնական և/կամ ընտանեկան օգտագործման նպատակներով: Այդ պարագայում կարող են մշակվել հետևյալ տեղեկությունները (i) Այդ էլ. փոստային հաշվեհամարների, ինչպես նաև Ձեր BlackBerry Լուծումներում ավելացվող այլ հաշվեհամարների օգտատիրոջ ID-ն, գաղտնաբառերը, նույնացման և այլ տվյալները, (ii) Ձեր Ծրագրաշարային հաշվեհամարի պրոֆիլի տվյալները (BlackBerry ID, պրոֆիլի անունը, պրոֆիլի նկարը, անձնական հաղորդագրությունը, հասանելիության ստատուսը, երկիրը, ժամային գոտին, սարքի նույնացուցիչները և այլն), (iii) սարքում պարունակվող կոնտակային տեղեկությունները, (iv) տեղեկություններ այն մասին, թե երրորդ անձանց ինչ ծրագրեր և ծառայություններ եք ավելացրել Ձեր Ծրագրաշարային հաշվեհամարում, և (v) տեղեկություններ Ձեր Ծրագրաշարային հաշվեհամարում ավելացված երրորդ անձանց ծառայությունների և ծրագրերի օգտագործման վերաբերյալ (ինչպես օրինակ՝ ավելացված երրորդ անձանց խաղերում կամ ծրագրերում գրանցած ամենաբարձր միավորները, որոնք կցուցադրվեն Ձեր Ծրագրաշարային հաշվեհամարի պրոֆիլում, տեղեկություններ ավելացված երրորդ անձանց ծագրերի կամ ծառայությունների միջոցով Ձեր կողմից ուղարկված և ստացած հաղորդագրությունների վերաբերյալ, եթե այդ ծառայություններից և ծրագրերից օգտվել եք Ծրագրաշարերի արագ հաղորդագրություններ ուղարկելու ֆունկցիոնալ հնարավորությունների գործադրմամբ և այլն): Դուք իրավունք եք վերապահում RIM-ին այդ տեղեկությունները տրամադրել համապատասխան ծառայությունները մատուցող երրորդ անձանց ծառայություններն ակտիվացնելու, ծառայություններից օգտվելու համար հաշիվ ներկայացնելու, ծառայությունները մատուցելու, սպասարկում իրականացնելու և ծառայություններն անհրաժեշտության դեպքում ապակտիվացնելու համար: Եթե Դուք Երրորդ Անձանց Ծառայություններից կամ Երրորդ Անձանց Ծրագրաշարերից օգտվում եք Ձեր BlackBerry Սարքի միջոցով կամ դրա զուգակցությամբ, ապա իմացեք, որ երրորդ անձիք կարող են կարդալ, մատչել, արտահանել կամ այլ կերպ մշակել Ձեր BlackBerry Սարքում պահեստավորված տվյալները (այդ թվում նաև անհատական տվյալները): Ձեր կողմից մատչվող Երրորդ Անձանց Ծառայությունները RIM կողմից չեն վերահսկվում: Երրորդ Անձանց Ծառայություններից և Երրորդ Անձանց Ծրագրաշարերից օգտվելու դեպքում կիրառելի են համապատասխան երրորդ անձանց պայմանները և անհատական տվյալների մշակման մասին կանոնակարգերը: Կարդացեք այդ պայմանները և կանոնակարգերը նախքան կօգտվեք Երրորդ Անձանց Ծառայություններից և Երրորդ Անձանց Ծրագրաշարերից: Ուսումնասիրեք Ձեր

Սարքի ընտրանքները կամ օգնության ընտրացանկերը իմանալու համար, թե Երրորդ Անձանց որ Ծառայությունները և Երրորդ Անձանց որ Ծրագրաշարերն են թույլատրված և վերահսկողության ինչպիսի համակարգեր են միացված, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դրանք փոփոխելու համար:

(գ) Cookies և նմանատիպ այլ տեխնոլոգիաներ. RIM Ընկերությունների Խումբը կարող է օգտագործել cookies ֆայլեր (փոքր ծավալով տեղեկություններ, որ պահվում են Ձեր համակարգչում կամ Սարքում) և ապանձնավորված տվյալներ օգտագործող նմանատիպ այլ գործիքներ, որպեսզի հնարավորություն ընձեռի Ձեզ և RIM-ին պաշտպանելու նպատակով գրանցվել և ստանալ որոշ ծառայություններ, RIM Ծառայությունները դարձնի օգտագործման համար առավել դյուրին, դրանք հարմարեցնի Ձեր նախասիրություններին, ինչպես նաև վերլուծի, թե Դուք ինչպես եք օգտագործում RIM Ծառայությունները և BlackBerry Լուծումները և բարելավելի դրանց ֆունկցիոնալ հնարավորությունները: Խնդրում ենք ստուգել Ձեր Սարքի ինտերնետ դիտարկչի կարգավորումները, այդտեղից Դուք կարող եք արգելափակել կամ հեռացնել cookies ֆայլերը:

(ե) Աջակցություն. Եթե աջակցություն ստանալու կամ Ձեր Սարքը վերանորոգելու նպատակով կապվեք RIM հետ կամ վերջինիս էլ. փոստով միջոցով կամ RIM միանալու նպատակով վերջինիս կողմից տրամադրված գործիքների միջոցով կապ հաստատեք և ուղարկեք դիագնոստիկ կամ այլ տվյալներ, ապա Դուք համաձայնում և ընդունում եք, որ RIM Ընկերությունների Խումբը կարող է հավաքել այնպիսի տեխնիկական տվյալներ, ինչպիսիք են Սարքի PIN համարը, սարքաշարերի ID-ին և մոդելի համարը, տեղեկություններ հիշողության, մարտկոցների վիճակի, օպերացիոն համակարգի, սարքի կազմաձևման, Wi-Fi և ռադիո միացումների, ռադիոազդանշանների ուժգնության, տեղադրված ծրագրերի, ծրագրերի և ծրագրաշարերի օգտագործման, ընթացքի մեջ գտնվող պրոցեսների, համակարգի իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկություններ Ձեր BlackBerry-ի վերաբերյալ, որոնք կարող են անհրաժեշտ լինել անսարքությունները հայտնաբերելու նպատակով: Այդ տեղեկությունները կօգտագործվեն խնդիրները բացահայտելու, հաճախորդներին աջակցություն ցուցաբերելու, ծրագրաշարերը թարմացնելու և RIM ապրանքների ու ծառայությունների որակը և աշխատանքը բարելավելու նպատակներով, սակայն բոլոր դեպքերում՝ Անհատական Տվյալների Մշակման Մասին RIM Կանոնակարգին համապատասխան: Եթե վերլուծության արդյունքում պարզվի, որ պա տճառ են հանդիսացել երրորդ անձանց ապրանքները, ապա RIM կարող է խնդիրները բացահայտելու նպատակով որոշ դիագնոստիկ և տեխնիկական տվյալներ տրամադրել դրանց վաճառքն իրականացրած երրորդ անձաց: Դուք համաձայնում և ընդունում եք, որ RIM և վերջինիս ծառայություններ մատուցող անձանց կատարված զանգերը կարող են ձայնագրվել ուսուցողական, հաճախորդների սպասարկման, ապրանքների և ծառայությունների որակի վերահսկման և տեղեկատվական նպատակներով:

(ը) Գտնվելու վայրի մասին տեղեկությունները. RIM Ընկերությունների Խումբը կարող է հասանելի դարձնել որոշ ֆունկցիոնալ հնարավորություններ կամ տրամադրել որոշ ծառայություններ, որոնք կիրառում են գտնվելու վայրի մասին

տեղեկություններ՝ օգտագործելով GPS և համանման արբանյակային համակարգերի (եթե այդպիսիք հասանելի են) միջոցով ստացվող, ինչպես նաև մոտակա տարածության վրա գտնվող Wi-Fi կապի հանգույցների և բջջային կապի աշտարակների վերաբերյալ սարքերի միջոցով հաղորդվող տեղեկությունները: Օրինակ՝ Ծրագրաշարերի կամ BlackBerry Լուծումների որոշ ֆունկցիոնալ հնարավորություններ կարող են թույլ տալ Ձեր գտնվելու վայրի մասին տեղեկությունները հասանելի դարձնել Ձեր ընկերներին կամ որոշել Ձեր Սարքի գտնվելու վայրը, հաղորդագրություն ուղարկել կամ երաժշտություն միացնել Ձեր Սարքի վրա, տարածության մեջ արգելափակել այն կամ դրա մեջից ջնջել Ձեր տվյալները և տեղեկությունները (պայմանով, եթե տվյալ պահին Սարքը գտնվում է Անլար Ծառայություններ Մատուցող Անձի ցանցի ծածկություն, լավ վիճակում և պայմանով, որ համակարգի ռեսուրսները բավականացնում են): BlackBerry Լուծումների այլ ֆունկցիոնալ հնարավորություններ կամ ծրագրեր նույնպես կարող են հավաքել տեղեկություններ Ձեր տեղաշարժման և ընտրած ճանապարհների (օրինակ՝ BlackBerry Traffic-ը), տեղանքի մասին համացանցում Ձեր կողմից կատարված հարցումների մասին: Այդ տեղեկությունները հավաքվում են RIM Ծառայությունները Ձեզ տրամադրելու և դրանց որակն ու աշխատանքը բարելավելու նպատակով: Այդ ծառայությունները և ֆունկցիոնալ հնարավորությունները Ձեզ տրամադրելու և հասանելի դարձնելու նպատակով Ձեր Սարքի գտնվելու վայրի մասին տեղեկությունները (ներառյալ GPS համակարգի միջոցով ստացված տեղեկությունները, կապի օպերատորի ID-ին, աշտարակի ID-ին, Wi-Fi կապի հանգույցների BSSID-ն, Wi-Fi կապի տեսանելի հանգույցների կամ տեսանելի բջջային աշտարակների ազդանշանների ուժգնությունը) կարող են հաղորդվել RIM Ընկերությունների Խմբին, երբ Դուք օգտագործեք Սարքը կամ ակտիվացնեք տվյալների փոխանցման կամ գտնվելու վայրի կիրառմամբ աշխատող ֆունկցիոնալ հնարավորությունները: RIM Ընկերությունների Խումբն այդ տեղեկությունները չի պահում այն տեսքով, որը հնարավորություն կտա նույնացնել Ձեր անձը: RIM Ընկերությունների Խումբը կարող է օգտագործել այդ տեղեկությունները, որպեսզի Ձեզ հասանելի դարձնի և կատարելագործի RIM Ընկերությունների Խմբի կողմից կամ վերջինիս պատվերով մատուցվող այն ծառայությունները, որոնց համար անհրաժեշտ են գտնվելու վայրի մասին տեղեկություններ: Այդ տվյալները RIM Ընկերությունների Խումբը կարող է օգտագործել նաև Ձեր BlackBerry Լուծումների զուգակցությամբ օգտագործվող գտնվելու վայրի մասին տեղեկություններ պահանջող Երրորդ Անձանց Ծառայությունների մատուցումը հնարավոր դարձնելու և դրանց աշխատանքի որակը բարձրացնելու նպատակով: RIM Ընկերությունների Խումբը կարող է նաև այդ տեղեկություններն օգտագործել ընդհանրացված և ապանձնավորված տեղեկությունների բազա ստեղծելու նպատակով: Դրանք իրենց հերթին կօգտագործվեն ըստ գտնվելու վայրի և ըստ հավաքված տեղեկատվության բնույթի գովազդ տրամադրելու համար: Ուսումնասիրեք BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի ընտրանքները կամ օգնության ընտրացանկերը, այդտեղից Դուք կարող եք անջատել կամ ըստ Ձեր ընտրության կարգավորել գտնվելու վայրի մասին տվյալներ պահանջող ֆունկցիոնալ հնարավորությունների աշխատանքը կամ էլ ընդհանրապես հեռացնել բոլոր այն ծրագրաշարերը, որոնց աշխատանքի համար պահանջվում են գտնվելու վայրի մասին տեղեկություններ: Երրորդ Անձանց Ծառայություններից օգտվելու դեպքում, երբ այդ ծառայությունների տրամադրման նպատակով պահանջվում և հաղորդվում են անհատական տվյալներ,

կիրառելի են համապատասխան երրորդ անձանց պայմանները և անհատական տվյալների մշակման մասին կանոնակարգերը: Այդ կանոնակարգերով են նախատեսված այն նպատակները, որոնց համար կարող են օգտագործվել Ձեր գտնվելու վայրի մասին տեղեկությունները: Դուք պետք է կշռադատված որոշում կայացնեք նախքան կհամաձայնեք, որ Ձեր գտնվելու վայրի մասին տվյալները հաղորդվեն այլ անձանց:

(թ) Տվյալների միջազգային փոխանցումները. Դուք համաձայնում և ընդունում եք, որ BlackBerry Լուծումները և RIM Ծառայությունները (այդ թվում նաև քլաուդ ծառայությունները, տարածության մեջ Սարքը մատչելու, դրա մեջ տվյալներ պահեստավորելու և տվյալների պահեստային օրինակներ պատրաստելու ֆունկցիոնալ հնարավորությունները) տրամադրելու նպատակով RIM Ընկերությունների Խումբը կարող է մշակել տվյալներ (որոնք որոշ դեպքերում կարող են ներառել անհատական տվյալներ և հաղորդակցությունների պարունակություններ)՝ այդ նպատակի համար օգտագործելով իր կամ իր հանձնարարությամբ մեկ այլ անձի կողմից շահագործվող սպասարկիչներ, որոնք կարող են գտնվել Օգտատերերի բնակության երկրների սահմաններից դուրս, ներառյալ Կանադայում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Մինգապուրում և այլ երկրներում, որտեղ գործում են RIM Ընկերությունների Խմբի կամ վերջինիս հանձնարարությամբ մեկ այլ անձի կողմից շահագործվող համապատասխան կենտրոններ: Եթե Օգտատերը բնակվում է Եվրոպական Տնտեսական Տարածաշրջանի անդամ երկրներից մեկում կամ մեկ այլ երկրում, որտեղ անհատական տվյալները երկրից դուրս փոխանցելու համար պանաջվում է տվյալների տիրոջ համաձայնությունը, ապա Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը տվյալներն այդ կերպ մշակելու համար և երաշխավորում եք, որ այդ նպատակով ստացել եք բոլոր Օգտատերերի՝ օրենքով պահանջվող համաձայնությունները:

25. Օգտատերերի Տվյալները. Դուք և Ձեր Արտոնված Օգտագործողները համաձայնում և ընդունում եք, որ ի լրումն 24-րդ հոդվածով սահմանված տեղեկություններ փոխանցելու և տրամադրելու իրավունքներին RIM Ընկերությունների Խումբն իրավունք ունի և կարող է մատչել, պահեստավորել և RIM, երրորդ անձանց, այդ թվում նաև տեղական և օտարերկրյա կառավարական մարմիններին, տրամադրել Ձեր և Ձեր Արտոնված Օգտագործողների անհատական տվյալները, այդ թվում նաև Ձեր և Ձեր Արտոնված Օգտագործողների հաղորդակցությունների պարունակությունները, ինչպես նաև տեղեկություններ Ձեր BlackBerry Լուծումների, դրանց զուգակցությամբ օգտագործվող ծառայությունների, ծրագրաշարերի և սարքաշարերի օգտագործման վերաբերյալ: Սույն կետի նպատակով Ձեր և Ձեր Արտոնված Օգտագործողների տվյալները կարող են մատչվել, պահեստավորվել և փոխանցվել (i) դատական վայրյթի կամ կառավարական մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված պահաջները կատարելու, (ii) սույն Պայմանագրի դրույթների խախտումներն ուսումնասիրելու համար երրորդ անձանց հետ համագործակցելու, (iii) սույն Պայմանագրի կատարումն ապահովելու համար ինտերնետ ծառայություններ մատուցող անձանց, ցանցերի և համակարգչային կենտրոնների համակարգային կառավարիչների հետ համագործակցելու նպատակով: Այդ

դեպքում Ձեզ և Ձեր Արտոնված Օգտագործողներին չեն տրվի ծանուցումներ, որոնք տրամադրելու պահանջը կարող է նախատեսված լինել այն երկրների օրենսդրությամբ, որտեղ տեղակայված են RIM Ընկերությունների Խումբը, վերջինիս ծառայություններ մատուցող անձիք, RIM Ընկերությունների Խմբի գործընկերները և նրա հետ փոխկապակցված անձիք: Դուք երաշխավորում եք, որ Ձեր Արտոնված Օգտագործողներից ստացել եք բոլոր համաձայնությունները, որոնք կարող են անհրաժեշտ լինել Օգտատերերի Տվյալները RIM Ընկերությունների Խմբին տրամադրելու կամ վերջինիս կողմից վերոհիշյալ կարգով դրանք հավաքելու, օգտագործելու, մշակելու, հաղորդելու և փոխանցելու համար:

26. Իրավունքների Զիջում և Վերալիազորում. RIM կարող է զիջել սույն Պայմանագրով իր ունեցած իրավունքներն առանց այդ մասին Ձեզ ծանուցելու: Դուք իրավունք չունեք զիջել սույն Պայմանագրով Ձեր ունեցած իրավունքները կամ դրանց այս կամ այն մասն առանց RIM նախնական գրավոր համաձայնության (այդ համաձայնությունը կարող չտրվել կամ դրա տրամադրումը կարող է RIM հայեցողությամբ պայմանավորվել մեկ այլ պայմանով): Սույն Պայմանագրի համաձայն Ձեր ունեցած իրավունքների կամ դրանց այս կամ այն մասի փոխանցումն առանց RIM նախնական գրավոր համաձայնության անվավեր է: RIM կարող է սույն Պայմանագրով իր ստանձնած պարտականությունները կատարել անձամբ կամ կարող է դրանց կատարումն ամբողջությամբ կամ մասամբ հանձնարարել իր կապալառուներին կամ ենթակապալառուներին:
27. Ծանուցումներ. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով, ապա սույն Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները և հաղորդագրությունները պետք է լինեն գրավոր և առաքվեն առձեռն, սուրհանդակային ծառայության կամ փոստի միջոցով, փոստային ծառայությունների համար գանձվող գումարների նախապես վճարմամբ, պատվիրված նամակով կամ դրա համարժեքով, առաքման վերաբերյալ ծանուցմամբ: Ծանուցումները և հաղորդագրությունները պետք է ուղարկվեն հետևյալ հասցեներով. Ձեր դեպքում՝ Ձեր կողմից հաշիվ-ապրանքագիրների ներկայացման նպատակով RIM-ին տրամադրված հասցեով, Research In Motion UK Limited-ի դեպքում՝ 200 Բաթ փո., Սլաֆ, Բերկշիր, Մեծ Բրիտանիա, SL1 3XE հասցեով հասցեագրված Գործադիր Տնօրենին, RIME-ի դեպքում՝ <http://www.blackberry.com/legal/rime> կայքում նշված հասցեով: Բոլոր դեպքերում մեկ օրինակ պետք է ուղարկվի նաև իրավաբանական հարցերով RIM գլխավոր տնօրենին հետևյալ հասցով. 295 Ֆիլիպ փո. Վատերլոո, Օնտարիո, Կանադա, N2L 3W8 (նկատի ունեցեք, որ սա ծանուցում չի համարվում): Ի լրումն վերոգրյալին RIM իր հայեցողությամբ կարող է նաև Ձեզ ծանուցումներն առաքել էլեկտրոնային կապի միջոցներով: Էլ. ծանուցումները համարվում են պատշաճ ձևով Ձեզ առաքված Ձեր կողմից RIM-ին տրամադրված էլ.փոստային հասցեով ուղարկելու պահից, իսկ եթե Դուք RIM-ին նման հասցե չեք տրամադրել, ապա <http://www.blackberry.com/legal/> կայքում տեսանելի կերպով տեղադրված լինելու պահից:

28. Անհաղթահարելի Ուժի Ազդեցությունը. Չնայած սույն Պայմանագրով այլ բան նախատեսված լինելուն կողմերից ոչ ոք չի համարվի իր ստանձնած պարտավորությունները չկատարելու համար Պայմանագիրը խախտած, եթե դրա պատճառները համապատասխան կողմի ողջամիտ վերահսկողությունից դուրս են եղել: Սույն դրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որպեսզի ազատի կողմերին Պայմանագրի համաձայն մյուս կողմին վճարում կատարելու պարտավորությունից:

29. Ընդհանուր Դրույթներ.

(ա) Երրորդ Անձ Շահառուներ. Սույն Պայմանագրի հետևյալ Բաժինների նպատակով RIM հետ փոխկապակցված անձիք և RIM ու վերջինիս հետ փոխկապակցված անձանց տնօրենները, ղեկավարները և աշխատակիցները համարվում են երրորդ անձ շահառուներ. «Տեխնոլոգիարների օգտագործման անվտանգության կանոնները» (հոդված 8 (բ)), Փոխհատուցում/Պատասխանատվություն (հոդված 19), «Պատասխանատվության Սահմանափակում» (հոդված 23) և «Պատասխանատվության Բացառում» (հոդված 22): RIM Ծառայությունների համար Պարունակություններ տրամադրող անձիք համարվում են սույն Պայմանագրի՝ Պարունակությունների օգտագործման սահմանափակումներ և դրանց նկատմամբ իրավունքի պաշտպանության մեխանիզմներ նախատեսող «BlackBerry Լուծումների Օգտագործման Պայմանները» և «Մտավոր Սեփականություն» հոդվածների (հոդվածներ 3 և 11, համապատասխանաբար) դրույթներից օգտվելու իրավունք ունեցող երրորդ անձ շահառուներ: Եթե սույն կետում այլ բան նախատեսված չէ, ապա սույն Պայմանագիրն իրավունքներ և պարտականություններ է առաջացնում միայն Կողմերի համար, դրանով այլ անձանց իրավունքներ չեն վերապահվում և նրանց համար պարտականություններ չեն նախատեսվում:

(բ) Պայմանագրի Խախտումներից Բխող Իրավունքներից և Իրավական Պաշտպանության Միջոցներից Հրաժարվելը. Կողմերից որևիցե մեկը չի համարվի սույն Պայմանագրով իր իրավունքներից հրաժարված կամ դրանք կորցրած դրանք չիրականացնելու, ուշացմամբ իրականացնելու պատճառով կամ իրավական կամ արդարության սկզբունքով ձևակերպված այլ հիմքերով, եթե իրավունքներից հրաժարվելը կատարված չէ գրավոր կերպով և ստորագրված չէ այն կողմի լիազոր ներկայացուցչի կողմից, ում դեմ այն պետք է վկայակոչվի: Սույն Պայմանագրի դրույթներից որևիցե մեկից կամ դրա խախտման հետևանքով առաջացող որևիցե իրավունքներից հրաժարվելը մի դեպքում չի համարվում հրաժարում մնացած բոլոր դեպքերում:

(գ) Պայմանագրի Որոշ Դրույթների Գործողությունը Պայմանագրի Ուժը Կորցնելուց Հետո. Սույն Պայմանագրի բոլոր այն դրույթները և երաշխիքները, որոնց գործողությունն ըստ դրանց համապատասխան նշանակության և ենթատեքստի ենթադրվում է, որ պետք է շարունակվի նաև սույն Պայմանագիրը լուծուվելուց, դադարեցվելուց կամ դրանով նախատեսված պարտավորությունները կատարվելուց հետո, այդ թվում նաև փոխհատուցումներ վճարելու պարտավորություններ նախատեսող դրույթները, կշարունակեն մնալ ուժի մեջ նաև սույն Պայմանագրով

նախատեսված պարտավորությունները կատարվելուց, սույն Պայմանագիրը լուծվելուց և/կամ դադարեցվելուց հետո:

(դ) Կիրառելի Օրենսդրությունը և Վեճերի Լուծման Կարգը. Սույն Պայմանագիրը ղեկավարվում և մեկնաբանվում է Անգլիայի և Ուելսի օրենքների համաձայն՝ բացառելով դրանց կոլիզիոն նորմերի դրույթները: Կողմերը համաձայնում են, որ Ապրանքների Միջազգային Առուվաճառքի Պայմանագրերի Մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի դրույթները կիրառելի չեն սույն Պայմանագրի նկատմամբ: Սույն Պայմանագրից, դրա դրույթների խախտումներից բխող կամ դրանց հետ կապված ցանկացած վեճ կամ տարաձայնություն, որ Կողմերը բարեխղճորեն չկարողանան լուծել բանակցությունների միջոցով, պետք է նախ ներկայացվի Կողմերի կառավարման բարձրագույն մարմիններին: Կողմերն իրենց կառավարման բարձրագույն մարմինների ներկայացուցիչների (որը, եթե Դուք ֆիզիկական անձ եք, ապա հանդիսանում եք անձամբ Դուք) մակարդակով կհանդիպեն վեճն իրենց ուշադրությանը ներկայացվելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, և եթե Կողմերը չկարողանան լուծել վեճը կամ տարաձայնությունը հանդիպելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, ապա Ձեր եկրի օրենսդրությամբ արգելված չլինելու դեպքում վեճի կամ տարաձայնության լուծումը կհանձնվի արբիտրաժային դատարանին, որը վեճը կլսի և կլուծի Առևտրի Միջազգային Պալատի Արբիտրաժային Դատարանի Կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) համաձայն: Վեճը կլսվի և կլուծվի Կանոնակարգի համաձայն նշանակված և նշանակման պահից երեսուն (30) օրվա ընթացքում Կողմերի կողմից հաստատված մեկ արբիտրի կողմից: Եթե արբիտրի նշանակման պահից երեսուն (30) օրվա ընթացքում Կողմերը չհաստատեն նշանակված արբիտրի թեկնածությունը, ապա արբիտրին Կողմերից որևիցե մեկի պահանջով կնշանակվի Բրիտանական Համակարգչային Ընկերակցության նախագահը (կամ նախագահի կողմի պատշաճ լիազորված մեկ այլ անձ): Արբիտրաժի վայրը Լոնդոնն է, Անգլիան: Արբիտրաժային դատարանի որոշումը վերջնական է և պարտադիր Կողմերի համար: Եթե վերոգրյալն արգելված է Ձեր երկրի օրենսդրությամբ, ապա (i) արբիտրաժի վայրը կլինի Ձեր երկրում, (ii) վեճը կլսվի և կլուծվի ՀՀ Առևտրա-Արդյունաբերական Պալատին կից մշտապես գործող Արբիտրաժային Դատարանի կողմից վերջինիս կանոնակարգի համաձայն (այսուհետ՝ Հայաստանյան Կանոնակարգ), (iii) Կանոնակարգի համաձայն նշանակված և նշանակման պահից երեսուն (30) օրվա ընթացքում Կողմերի կողմից հաստատված մեկ արբիտրի կողմից: Եթե արբիտրի նշանակման պահից երեսուն (30) օրվա ընթացքում Կողմերը չհաստատեն նշանակված արբիտրի թեկնածությունը, ապա արբիտրը կնշանակվի չեզոք երրորդ անձի կողմից: Արբիտրաժի հետ կապված ծախսերը հավասարապես կբաշխվեն Կողմերի միջև: Կողմերի միջև կամ այլ անձանց մասնակցությամբ վեճերը առանց RIM նախնական գրավոր համաձայնության չեն կարող միացվել: Արբիտրաժային դատարանի որոշումը կատարելու համար հայցադիմումը ներկայացվում է իրավասու դատարան: Չնայած վերոգրյալին RIM իրավունք ունի ստորև նշվածի, ինչպես նաև դատական արգելք պահանջելու կապակցությամբ իրավունքի կամ արդարության սկզբունքով վարույթ հարուցել ընդհանուր իրավասության դատարաններում. (i) Ձեր BlackBerry Լուծումների կամ դրանց այս կամ այն մասերի ձեռք բերման կապակցությամբ Ձեր կողմից RIM վճարման ենթակա գումարները գանձելու, և (ii) Ձեր կողմից Պայմանագրի հետևյալ հոդվածների դրույթները խախտելու կամ դրանք Ձեր կողմից խախտելու

սպառնալիքի դեպքում. «BlackBerry Լուծումների Օգտագործման Պայմանները» (հոդված 3), «Օրագրաշարերի և Փաստաթղթերի Լիցենզիոն Օգտագործման Իրավունքները» (հոդված 2), «Մտավոր Սեփականություն» (հոդված 11), «Արտահանման, Ներմուծման և Օգտագործման Սահմանափակումները, ԱՄՆ Կառավարության Աշխատակիցներին Վերապահվող Իրավունքները» (հոդված 12), «Անվտանգություն» (հոդված 13), «Գաղտնիություն և Ապաքանաքաղման Արգելք» (հոդված 15) և «Պայմանագրի Լուծման Հետևանքները» (հոդված 18): Դուք աներկբայորեն և առանց Ձեր տված համաձայնությունը հետագայում չեղարկելու իրավունքի հրաժարվում եք վարույթի վայրի, վեճը լուծող մարմնի անհարմարության (forum non-conveniens) կամ նմանատիպ այլ հիմքերով առարկություններ ներկայացնելու իրավունքից և համաձայնում եք, որ վարույթի մասին ծանուցումները Ձեզ առաքվեն փոստով կամ կիրառելի օրենսդրությամբ թույլատրված ցանակացած այլ միջոցներով և առանց չեղարկման իրավունքի համաձայնում և ընդունում եք Անգլիայում գտնվող դատարանների իրավասությունը սույն Պայմանագրից բխող բոլոր հարցերի առնչությամբ: Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրի կապակցությամբ վեճ կամ տարաձայնություն լինելու և այն դատական կարգով լուծվելու դեպքում վայրայթը կանցկացվի առանց ատենակալների մասնակցության: Կողմերը սույնով հրաժարվում են սույն Պայմանագրից բխող վեճերն ատենակալների մասնակցությամբ լուծելու իրավունքներից:

(ե) Պայմանագրի Դրույթների Գործողությունն Առանձին-Առանձին. Սույն Պայմանագրի որևիցե հոդված, կետ, դրույթ կամ նախադասություն կամ դրանց այս կամ այն մասերը (այսուհետ՝ Դրույթ) որևիցե երկրի իրավասու մարմնի որոշմամբ ապօրինի, անվավեր կամ կատարման համար ոչ պարտադիր ճանաչվելու դեպքում, (i) սույն Պայմանագրի մյուս Դրույթները կշարունակեն մնալ օրինական, վավեր և կատարման համար պարտադիր (ii) դա ոչ մի ազդեցություն չի ունենա այլ երկրներում ապօրինի, անվավեր կամ կատարման համար ոչ պարտադիր ճանաչված Դրույթների օրինականության, վավերականության և կատարման համար պարտադիր լինելու հանգամանքի վրա: Ապօրինի, անվավեր կամ կատարման համար ոչ պարտադիր ճանաչված Դրույթների գործողությունը սկզբում հնարավորության դեպքում կսահմանափակվի և այնուհետև միայն անհրաժեշտության դեպքում այդ Դրույթները կառանձնացվեն Պայմանագրի մյուս դրույթներից, այնպես որպեսզի Պայմանագիրը շարունակի մնալ վավեր, օրինական և կատարման համար պարտադիր:

(զ) Պայմանագրի Լեզուն. Պայմանագիրն այլ լեզվով թարգմանված լինելու և անգլերեն ու թարմանված տարբերակների միջև անհամապատասխանություններ լինելու դեպքում անգլերեն տարբերակը գերակայում է: Ձեր երկրի օրենսդրությամբ արգելված չլինելու դեպքում սույն Պայմանագրի կապակցությամբ ծագող բոլոր տարաձայնությունների և վեճերի կապակցությամբ շփումները և գրագրությունները, դրանց կապակցությամբ հաշտեցման բոլոր գործընթացները, արբիտրաժային և դատական բոլոր վարույթները պետք է իրականացվեն անգլերեն լեզվով: Անգլերեն լեզվով պետք է կատարվեն նաև դրանց կապակցությամբ հաղորդագրությունների փոխանակումները, ապացույցների բացահայտումները, մրցակցային փաստաթղթերի և փաստարկների, այդ թվում նաև բանավոր փաստարկերի ու դատարաններում/արբիտրաժային դատարաններում կողմերի

հայտարարությունների փոխանակումները: Անգլերենով պետք է ներկայացվեն նաև անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և անգլերենով պետք է լինեն դատարանի/արբիտրաժային դատարանի որոշումները և վճիռները:

(է) Անհամապատասխանություն. Սույն Պայմանագրի և Ձեր BlackBerry Լուծումների այս կամ մասերի փաթեթվածքի կամ դրանց հետ տրամադրվող նյութերի հետ տրամադրված ծրագրաշարերի օգտագործման լիցենզային կամ վերջնական օգտագործողների համար նախատեսված այլ պայմանագրերի միջև անհամապատասխանություններ լինելու դեպքում սույն Պայմանագրի դրույթները գերակայում են: Սույն Պայմանագրի և Ծրագրաշարերի թարմացումների կամ արդիացումների հետ տրամադրված ծրագրաշարերի օգտագործման լիցենզային կամ վերջնական օգտագործողների համար նախատեսված այլ պայմանագրերի միջև անհամապատասխանություններ լինելու դեպքում գերակայում են այդ պայմանագրերի դրույթները: Ձեր BlackBerry Լուծումների այս կամ այն մասերի փաթեթվածքների հետ տրամադրված փաստաթղթերի և RIM համապատասխան Ապրանքներին կամ Ծրագրաշարերի համապատասխան մասերին վերաբերող Փաստաթղթերի միջև անհամապատասխանություններ լինելու դեպքում գերակայում են Փաստաթղթերի դրույթները:

(ը) Պայմանավորվածությունների Ամբողջականությունը. Սույն Պայմանագիրը (որը հավելվածներ ունենալու դեպքում ներառում է նաև այդ հավելվածների դրույթները և առարկան) հանդիսանում է Կողմերի միջև Պայմանագրի առարկայի կապակցությամբ ձեռք բերված պայմանավորվածությունների ամբողջականությունը, և Կողմերի միջև գոյություն չունեն Ծրագրաշարերին վերաբերող այլ համաձայնություններ, պայմանավորվածություններ, հաղորդագրություններ, հավաստումներ, երաշխիքներ, պարտավորություններ, լրացուցիչ կամ այլ պայմանագրեր: Չնայած վերոգրյալին Կողմերի միջև կնքված այլ պայմանագրերով կարող են կարգավորվել Ձեր BlackBerry Լուծումների այլ մասերի օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սույն Պայմանագիրը գերակայում է Պայմանագիրը կնքելուց առաջ կամ դրա կնքման ժամանակ Կողմերի միջև սույն Պայմանագրի առարկայի կապակցությամբ ձեռք բերված այլ համաձայնությունների, պայմանավորվածությունների, փոխանակված այլ հաղորդագրությունների, տրված այլ հավաստումների և երաշխիքների, ստանձնած այլ պարտավորությունների, կնքված լրացուցիչ կամ այլ պայմանագրերի նկատմամբ՝ լինեն դրանք գրավոր, թե՛ բանավոր, և Դուք համաձայնում և ընդունում եք, որ սույն Պայմանագիրը կնքելիս Դուք դրանցով չեք առաջնորդվել: Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել ցանկացած ժամանակ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Եթե կիսարեւի օրենսդրությամբ արգելված չէ, ապա RIM իրավունք է վերապահում ապագայում իր հայեցողությամբ սույն Պայմանագրում կատարել փոփոխություններ (որոնք ուժի մեջ կմտնեն դրանք կատարելուց հետո) այդ թվում նաև՝ այնպիսի փոփոխություններ, որոնք արտացոլում են օրենքում կամ գործարար պրակտիկայում կատարված կամ օրենքով պահանջվող փոփոխությունները (ներառյալ այնպիսի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են սույն Պայմանագիրը վավեր և կատարման համար պարտադիր լինելու համար)՝ այդ մասին ողջամտորեն ծանուցելով Ձեզ էլեկտրոնային կապի միջոցով (ինչպես նախատեսված Ծանուցումներ վերատառությամբ հոդվածում), կամ համապատասխան տեղեկություններ տեղադրելով <http://www.blackberry.com/legal>

կայքում, իսկ Դուք պետք է պարբերաբար ստուգեք նշված կայքը այդ փոփոխությունների հետ ծանոթանալու նպատակով: Եթե Դուք շարունակեք օգտագործել Ծրագրաշարերը կամ շարունակել օգտվել RIM Ծառայություններից փոփոխությունների մասին ծանուցումը ստանալուց հետո ավելի քան վաթսուն (60) օրվա ընթացքում, ապա այդ փոփոխությունները կհամարվեն ընդունված Ձեր կողմից: Եթե ունեք հարցեր փոփոխության(ների) հետ կապված, ապա խնդրում ենք ուղարկել հաղորդագրություն հետևյալ legalinfo@rim.com հասցեով փոփոխության(ների) մասին ծանուցում ստանալուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում և պարզել ինչ տարբերակներ ունեք այդ պարագայում:

(թ) Օրենքների Պահանջները Կատարելը. Դուք Ձեր հաշվին ձեռք կբերեք և կունենաք սույն Պայմանագրի կամ փոխկապակցված այլ լիցենզային պայմանագրերի կնքման և կատարման համար Ձեր երկրի իշխանությունների կողմից կամ կիրառելի օրենսդրությամբ պահանջվող բոլոր թույլտվությունները, գրանցումները և հաստատումները: Մասնավորապես, թյուրիմացություններից խուսափելու նպատակով, Դուք կկատարեք Ձեր BlackBerry Լուծումների տեղադրմանը և օգտագործմանն առնչվող կիրառելի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի բոլոր պահանջները, ինչպես նաև իշխանություններ ից կատանաք և կունենաք օրենքով պահանջվող բոլոր թույլտվությունները, գրանցումները և հաստատումները, որոնք կարող են անհրաժեշտ լինել առևտրային գաղտնագրման կամ օրենքով պահանջվող անվտանգության այլ ֆունկցիոնալ հնարավորություններ պարունակող Ծրագրաշարեր ներմուծելու և օգտագործելու համար: Դուք RIM-ին կտրամադրեք բոլոր հավաստումները և պաշտոնական փաստաթղթերը, որոնք վերջինս կարող է պարբերաբար պահանջել Ձեր կողմից սույնով նախատեսված պարտավորությունների կատարումը վերահսկելու նպատակով: Չսահմանափակելով վերոգրյալ դրույթների գործողությունը՝ հարկ ենք համարում նշել, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ RIM որոշ Ծառայություններ և Երրորդ Անձանց որոշ Ծառայություններ կարող են հասանելի լինել տարբեր երկրներում, Դուք համաձայնում և ընդունում եք, որ եթե այդ ծառայություններից օգտվելու համար RIM կամ Երրորդ անձանց կողմից սահմանվել են աշխարհագրական սահմանափակումներ, և եթե Դուք այդ ծառայություններից օգտվել եք այդ սահմանափակումների խախտմամբ, այսինքն՝ այնպիսի երկրներից և տարածաշրջաններից, որտեղ դրանք նախատեսված չեն եղել օգտագործման համար, ապա Դուք գործում եք Ձեր նախաձեռնությամբ և պատասխանատվություն եք կրում դրանից բխող օրենքի բոլոր պահանջները կատարելու համար, ներառյալ նաև RIM Ծառայությունների, Երրորդ Անձանց Ծառայությունների, դրանց հետ կապված Պարունակությունների, Երրորդ Անձանց Ապրանքների և Ծրագրաշարերի արտահանմանը, ներմուծմանը, օգտագործմանը, հաղորդմանը, տրամադրմանը վերաբերող պահանջները կատարելու համար: Ի լրումն վերոգրյալին, RIM չի երաշխավորում, որ RIM Ծառայությունների միջոցով հասանելի դարձված (օրինակ՝ RIME Store ծառայության հասանելի դարձված կամ BlackBerry Վճարումային Ծառայության միջոցով գնված) կամ դրանց հետ կապված բոլոր Ծրագրաշարերը և Երրորդ Անձանց Ապրանքները նախատեսված են և կարելի է օգտագործել բոլոր երկրներում: Դուք համաձայնում եք չներբեռնել, չմատչել Ծրագրաշարերը և Երրորդ Անձանց Ապրանքները և չփորձել դրանք ներբեռնել կամ մատչել այնպիսի երկրներից, որտեղ դա կարող է հակասօրինական լինել: Դուք համաձայնում եք նաև նույնը թույլ

չտալ կատարել Ձեր Արտոնված Օգտագործողներին: Չսահմանափակելով վերոգրյալ դրույթների գործողության ոլորտը՝ տեղեկացնում ենք, որ եթե կիրառելի օրենսդրությամբ արգելվում է օգտագործել BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի վիդեո զանգերի ֆունկցիոնալ հնարավորությունները, ինչպես օրինակ՝ video chat-ը կամ MVS-ը, ներառյալ նաև եթե Ձեր երկրում արգելվում է փիրինգային (peer-to-peer), վիդեո կամ ինտերնետային ֆունկցիոնալ հնարավորությունների օգտագործումը կամ եթե Դուք կամ Ձեր Արտոնված Օգտագործողները դեռ չեք հասել սահմանված տարիքին կամ գոյություն ունեն Վթարային կամ Փրկարար Ծառայությունների մասին օրենքներով նախատեսված որոշակի սահմանափակումներ, ապա Դուք և Ձեր Արտոնված Օգտագործողները չեք կարող ներբեռնել և օգտագործել Ծրագրաշարերի այդ ֆունկցիոնալ հնարավորություններն ու ապրանքները և/կամ Դուք պարտավոր եք ձեռնարկել այլընտրանքային միջոցներ Վթարային կամ Փրկարար Ծառայությունների հետ կապվելու համար:

(ժ) Արտահայտությունների իմաստները. «ներառում է», «ինչպես օրինակ», «օրինակ» բառերը և արտահայտությունները պետք է հասկանալ և ընկալել այնպես, կարծես եթե օգտագործված լինեին «ներառյալ, սակայն ոչ միայն», «ներառում է, սակայն չի սահմանափակվում», «ինչպես օրինակ, սակայն ոչ միայն» և «օրինակ, սակայն ոչ միայն» տարբերակներով:

30. Պայմանագրերի Միավորումը. (ա) Ձեր BlackBerry Լուծումների շրջանակներում օգտագործվող BlackBerry ԱՀ Ծրագրաշարերի, BlackBerry Սպասարկչի Ծրագրաշարերի և BlackBerry Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի օգտագործման նկատմամբ միատեսակ պայմանների գործողությունն ապահովելու և (բ) Ձեր BlackBerry Լուծումների շրջանակներում օգտագործվող BlackBerry Բջջային Սարքերի Համար Նախատեսված Ծրագրաշարերի (անկախ այն հանազամանքից, թե այն ինչպես է տրամադրվել) օգտագործման նկատմամբ կիրառելի լիցենզային պայմանագրի դրույթները որոշելու նպատակով Դուք, վերոհիշյալ կարգով ընդունելով սույն Պայմանագրի դրույթները, համաձայնում եք նաև, որ (i) սույն Պայմանագիրը փոխարինում և գերակայում է RIM Ծառայությունների և Ծրագրաշարերի կապակցությամբ Ձեր հետ նախկինում կնքված BlackBerry Վերջնական Օգտագործողների/Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերի, BlackBerry Կորպորատիվ Սպասարկչի Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերի, ինչպես նաև ցանկացած այլ BlackBerry Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերի, BlackBerry Լուծումների, Օգտագործման Լիցենզային Պայմանագրերի, BlackBerry Պրոֆեսիոնալ Օգտագործողների Համար Նախատեսված Ծառայությունների Մատուցման Պայմանագրերի նկատմամբ, և (ii) սույն Պայմանագրի ներկա տարբերակը գերակայում է BlackBerry App World և BlackBerry Վճարումային Ծառայությունների վերաբերյալ հավելվածի, BlackBerry ID Պայմանների, BBM Music ծառայության վերաբերյալ հավելվածի, BlackBerry Protect ծառայության վերաբերյալ հավելվածի, BlackBerry Travel ծառայության վերաբերյալ հավելվածի, Video Chat Ծրագրաշարերի Լրացուցիչ Պայմանների, BlackBerry Messenger Ծրագրաշարերի Լրացուցիչ Պայմանների նկատմամբ, եթե դրանք սույն Պայմանագիրը Ձեր կողմից ընդունվելու

օրվա դրությամբ շարունակում են գործել և կիրառելի են Ձեր BlackBerry Լուծումների մաս կազմող Ծրագրաշարերի օգտագործման նկատմամբ:

Ձեր BlackBerry Լուծումների կապակցությամբ Ձեր և RIM միջև կնքված այլ պայմանագրերում, հավելվածներում կամ փաստաթղթերում բոլոր հղումները BlackBerry Վերջնական Օգտագործողների/Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին, BlackBerry Կորպորատիվ Սպասարկչի Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին, BlackBerry Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին և BlackBerry Լուծումների Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին կհամարվեն հղումներ սույն BlackBerry Լուծումների Օգտագործման Լիցենզային Պայմանագրին (բացառությամբ եթե այդ հղումները ենթատեքստում սխալ և անիմաստ կլինեն, օրինակ՝ այս կետում տարբերություն է դրվում նախկինում գոյություն ունեցող պայմանագրերի և BlackBerry Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերի միջև, նման պարագայում հղումը նախկինում գոյություն ունեցող պայմանագրերին չպետք է համարվի հղում BlackBerry Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերին):

BlackBerry Վերջնական Օգտագործողների/Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերում, BlackBerry Կորպորատիվ Սպասարկչի Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերում, BlackBerry Ծրագրաշարերի Օգտագործման Լիցենզային Պայմանագրերում և BlackBerry Լուծումների Օգտագործման Լիցենզային Պայմանագրերում կատարված փոփոխություններն ու լրացումները և դրանց, բոլոր այն հավելվածները, որոնց համաձայն RIM Ձեզ ծրագրաշարեր է տրամադրել, համարվում են փոփոխություններ և լրացումներ սույն BlackBerry Լուծումների Օգտագործման Լիցենզային Պայմանագրում և սույն BlackBerry Լուծումների Օգտագործման Լիցենզային Պայմանագրի հավելվածներ:

Եթե ունեք հարցեր սույն Պայմանագրի դրույթների հետ կապված, խնդրում ենք կապվել RIM հետ legalinfo@rim.com հասցեով: